ԳԻՐՔ LI



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1909 № 2 ՓԵՏՐՈՒԱՐ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԷՔՏՐԱՅԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՕԼԻՍ, 7.
1909

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երգչին Յարութիւն Պետրոսեան 3
Լուռ միայնութեան մէջ Ա. Գեանջեցեան . 4
Հայերը Ռուսիայում. Մ. Բ. 17
Հալածուածները խեն 28
Անի քաղաքի աւերակները. Կ. Լէօնտիեվի. Վ. Բ. 29
Սև օրերից Կայծ 42
Ժողովրդի մէջ, Բօզեգերի, թարգմ. Որ. Ն. Աղա-
նեանց. 43

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

1. Իւրիյ Վեսելովսկի. Ժամանակակից Հայկական պոէ-
զիայի մի քանի եղանակներ։—2. Պատանեկան
գրադարան։—3. Ա.Թ. Խնկոյեան. Գիւղացին և
արջը։—4. Ե. Թոփչեան. Երիտասարդ Թիւրքիան
և Հայերը։ 59

ԱՄՍՈՒԱՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսի պատրիարքական նոր տեղապահի ընտրութիւն։—
Մայր Աթոռի չարաբաղդ ճեմարան։—Հայկական հան-
բապետութիւն։—Լուրեր։ 67

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Թոքախտի դէմ նոր դեղ 75

† ՄԱՀԳՈՅԺ

Աղէքսանդր Անանեան.—Աշըղ-Ջիւանի . . 76

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի

Դ. Գալստեանի Հրատ.

Հ. ԲՕԿԼ

ԱՆԳԼԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Թարգմ. ՎԱՐԴԳԷՍ ԱՂԱՆԵԱՆՑ

ԳԻՐՔ LI



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1909 № 2 ՓԵՏՐՈՒԱՐ

ԹԻՖԼԻՍ

ԷԼԵՔՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՕԼԻՑ, 7.

1909

ԵՐԳՉԻՆ

Դո՛ւ, անհոգ երգիչ, երկնքի զաւակ,
Որ սէգ պառնասից fo դիւթիչ նուագ
Հնչում ես ուրախ, հնչում խանդավառ,
Երգում սէր, հրճուանք ու կոյս լուսափառ,
Երբ զահիդ վերայ հպարտ ու ահեղ
Արքայի նման բազմած փառահեղ,
Թունոտ հեգնանքով նայում ես դու վար,
Աչելով ամբոխ՝ վայրենի, խաւար,
Ու տեսնում ինչպէս մարդկանց ձեռքերով
Ներկում է գետին խեղճի արիւնով,
Կամ ճշմարտութիւն ոտնակոխ արած՝
Կեղծիքը դարձրել պատեցի Աստուած,—
Ասա՛ ինձ, երգի՛չ, էլ ինչո՞ւ համար
Հնչում ես այդպէս եօթնաղի քնար,
Ինչո՞ւ ես անհոգ սէր, հրճուանք երգում,
Երբ պէտք է կորչի երգդ եթերքում...
Արի՛ թող, երգի՛չ, fo անհաս բարձունք,
Ճաշակիր տանջանք, արիւն ու արցունք.
Երգի՛ր ամբոխի վիշտը դարաւոր,
Նրա տառապանք, չարիք բիւրաւոր,
Թո՛ղ մուսաներին ու ընկեր դարձիր
Անմեղ զոհերին. նոցա հետ լացի՛ր,
Նոցա հետ զնա՛ փոտոտ ճանապարհ—
Դէպ ազատութիւն—վսե՜մ գաղափար...
Եւ այն ժամանակ երգդ կըլինի
Սրբազան ներբող անմեղ արիւնի,
Նա ոգի կըտայ յուսահատուածին
Ու վերջ կը դնի թշուառի լացին...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԼՈՒՌ ՍԻԱՅՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ա.

Ծովակը հանդարտուել էր։ Ալիքները ինջել էին ու հաւասարուել, թոյլ ու անզօր հետքեր թողնելով փոքրիկ կղզեակի փեշերը քնքշօրէն լիզող ծփանքների մէջ։ Իսկ մենաւոր կղզեակը վտանգից խուսափած թռչունի նման հեռում էր առ ժամանակ, ոյժերը հաւաքելու, ուշքի գալու համար։ Եւ նա իրաւունք ունէր։ ամբողջ ժամանակը յուզմունքի մէջ, բնութիւնը կարծես խաղալիք էր դարձրել նրան իւր հզօր ձեռքերի մէջ, մի մանուկ՝ սեղմուած ամուր գրկում, որ մերթ հեծկլտում է, մերթ աղաղակում, մերթ կատաղում ու կապտագոյն սիրուն աչերը պղտորում, փրփուր արցունքով լցնում։ Շատ քիչ անգամ էր պատահում, որ նա ժպտար և այդ ժպիտը, որ նրան շատ թանգ էր նստում, դալիս էր նրա դէմքին այն ժամանակ, երբ մենաւոր գոյութիւնը լցուում էր ուրիշի ներկայութեամբ, երբ ժպիտներ էր արձակում ու ժպիտներ ստանում և այդ իւր տօնի օրերին—տարուայ մէջ մի քանի հազուագիւտ օրեր։

Վարդավառ շաբաթ օրն էր։ Ծովակը մի քանի օր է արդէն նախապատրաստուում է իւր տօնի համար։ Կամաց կամաց ինջել էին նրա ալիքները և այսօր նա ջինջ հայելու է նմանուում։ Իսկ կղզեակը զմայլուած այդ յստակ կապուտակութիւնից, անխռով ընկողմանել է լուռ խաղաղութեան մէջ և անդորր իւր հանգիստն է առնում—հազուագիւտ և կարճատև հանգիստներից մէկը... Արդէն բնութիւնը վաղորդեան սիւգով և մշուշով գգուել է նրան թեթևակի, արեգակի ակնախտիտ ճառագայթները լուսաւորել են նրա փոքրիկ դէմքը և կատակով ծակծկել աչքերը, շրջակայ լեռները իրենց թանձր ստուերներով խոնարհուել, ողջունել ու համբուրել են նրան, բայց այդ չքնաղ մանուկը դեռ չէ կշտացել փայփայանքից։ Ահա կսկսուի ջերմեռանդ շնորհաւորողների երկար շարքը, կերևան զարդարուած տղամարդկանց, կանանց և երեխաների ու աղջիկների խմբերը և այն ժամանակ նա հաւաստի կլինի, որ յիրաւի իւր տօնն է, տարուայ այն հազուագիւտ օրե-

րից մէկը, երբ նա աղատուում է միայնութեան և մրմունջների ձեռքից և բաց է անում իւր թրթռուն, զգայուն սիրտը։

Դեռ այդ խմբերի գալստեան համբաւաբեր հրացանի պայթիւնները չէն լսուել հիւրընկալ ափերից։ Լճակն ու կղզեակը սպասում են և պատրաստուում. լճակը աւելի է բաց անում իւր սիրտը, շունչը բռնում, որպէս զի հազուագիւտ հիւրերը որքան կարելի է ուրախ դիմաւորեն իրեն, իսկ կղզեակը իւր կանաչագեղ ափերն է հանել սակաւաթիւ բնակիչներին։ Հինաւուրց վանքերը, թւում է, կանաչների միջից գաղտագողի աւելի են բարձրացնում խաչաձև գլուխները հազուագիւտ եկողներին աւելի լաւ տեսնելու համար, իսկ երկչոտ ու ամաչկոտ միայնակեացները սիրտ անելով թողել են խցերը որպէս զի այս հազուագիւտ օրում կարողանան տեսնել ջրերի այն կողմը ապրողների պատկերները, որոնք, ինչպէս նրանց թւում էր, այլ պատկեր ունին քան իրենք... Եւ յիրաւի տեսնում էին, որ մեծամասնութիւնը նման չէր իրենց. նրանք մի այլ՝ կենդանի կերպով վրդովում էին լուռ վայրերի խաղաղութիւնը, նրանք շարժում են օդը, նրանք կը խլացնեն ալիքները, եթէ սրանք կամենալու լինեն դաւաճանել կղզուն այսօրուայ օրը։ Եւ ուրախ էին նրանք, որ գոնէ մէկ-երկու օր մաշիչ լռութիւնը կը թագնուի ջրերի տակ և կեանքը իւր քրքիչ-աղմուկով կը թնդացնէ այդ ամայի ափերը... Ախ եթէ միշտ այդպէս լինէր... կամ գոնէ երկար տևէր...

Բ.

Կղզեակի սակաւաթիւ բնակիչների մէջ երկու հոգի բացառութիւն էին կազմում այդպիսի օրերում և հեռու էին պահում իրենց, չկամենալով ժամանակի սովորական ընթացքի մէջ որևէ կարճատև անօգուտ ընդմիջում անել... ո՞վ գիտէ, այդպիսի ընդմիջումներից ինչեր չեն կարող ծնել։ Դրանք աղբար Կարապետը և ծուռ Զոհրաբն էին—երկուսն էլ պատժուած բնութիւնից ով գիտէ ինչ յանցանքի համար, կամ գուցէ հէնց այնպէս, բնութեան մի հանաքով կամ քմահաճոյքով, բնութեան՝ որ այնքան խորհրդաւոր է իւր բազմաթիւ խաղերի մէջ։ Մէկը ծուռ էր, միւսը՝ կոյր—ամենակեր կեանքի մի-մի բեկոր։ Միւս միայնակեացները նրանցով չէին հետաքրքրուում. ո՞ւմ ինչ գործն է. աղօթքի, ճաշի և հանգստեան ժամերից դուրս ո՞վ գլուխ ունի այդպիսի բաների համար ցաւեցնելու։ Մէկը կոյր էր, միւսը՝ ծուռ—այդքանը բաւական էր։ Մի բան միայն զարմացնում էր նրանց և հետաքրքրում նրանց միայնակեաց ուղեղները.—ինչո՞ւ էին այդպէս իրար սիրում աղբար Կարապետը և ծուռ Զոհրաբը։ Երբ աղ-

բարը փայտը ձեռին դուրս էր գալիս իւր խցից, նրան հանդիպողը կամացուկ կանգ էր առնում, որովհետև գիտէր, որ նա մէկին պիտի փնտռէ։ Եւ յիրաւի նա անլոյս աչքերը խաւար կամարներին յառելով կանչում էր.

—Զոհրաբ։

Ձայնը արձագանք էր տալիս դատարկութեան մէջ։ Եւ նա կարծես բարկացած՝ ձեռափայտը աջ ու ձախ շարժելով ինչ որ մրմնջալով առաջ էր անցնում։ Մարդ կարծում էր, թէ նա գնում է աներևոյթ ոգիների դէմ կռուելու։ Իսկ երբ Զոհրաբը այնտեղ էր լինում, ձայն չէր հանում, այլ քիթը կնճռելով և շրթունքները իրար զարկելով գնում էր աղբոր դէմ ու դէմ, բռնում էր նրա չորացած ձեռքը և մեղմութեամբ խօսում.

—Աղբար, ուր։

Ու առանց պատասխան ստանալու գնում էին։ Այս խորհրդաւոր հանդիպումները վախեցնում էին միայնակեացներից շատերին։ Դրանց երբեմն աւելանում էին նաև Զոհրաբի գիշերային պտոյտները։ Քանի քանի անգամ նրան տեսել են այս կամ այն խցի լուսանցքի առաջ կանգնած լուռ ու մունջ և երբ ներսը եղողները նկատել են, նա սահել անցել է պատերի տակով որպէս ուրուական։ Մի քանիսը նոյն իսկ պատմում էին, թէ նա գիշեր ժամանակ շրջելիս շրջեցնում է նաև աղբար Կարապետին ձեռքից բռնած։ Այդ պտոյտներից յետոյ նա բարձրանում էր կղզու վերին մասերը՝ ժայռերը և այնտեղ մնում մինչև կէս-գիշեր։ Թէ աղբար Կարապետը և թէ ծուռ Զոհրաբը անօգուտ մարդիկ էին. այդ գիտէր վանահայրը. բայց նրա կարծիքով հէնց այդպիսիներին խնամելու կոչումն ունի վանքը՝ մասամբ իրաւացի կարծիք։ Սակայն եթէ նա իմանար, որ այդ կոյր ծերունին իւր դժբախտ կեանքը քաշ տալու հետ միասին և մի կեանք է սնուցանում, ինչ կեանք էլ լինի այդ, թէ ինչպէս ծեր ձեռքերով փայփայում-փաղաքշում էր այդ կեանքը, ուրախ կլինէր, տեսնելով և համոզուելով, որ ամեն կեանք, որքան էլ պակասաւոր լինի նա, կարող է մի գործ անել աշխարհի աճման համար։

Գ.

Դա մի փոքրիկ ծառ էր, որ տնկել էր աղբար Կարապետը կղզու հիւսիսային խճոտ ափին, մենաւոր ու լուռ, բնակութիւնից բաւական հեռու։ Ծաղկազարդի օրհնուած ուռենիներից էր նա, որ արժանացաւ աղբար Կարապետի ափսոսանքին և տնկուեց նրա ձեռքերի շնորհիւ այնտեղ, ուր վերջանում էր հարթութիւնը և սկսւում ժայռերի փեշերը։ Այդպիսով չորանալուն մատնուող

մի ճիւղ արմատներ ձգեց հողի մէջ. բողբոջները չընկան, այլ աճեցին և դալար տերևներ տուին։ Դժուար է նկարագրել կոյր ծերունու երեխայական հրճուանքը այդ փոքրիկ կեանքի աճեցման համար։ Այդ մի կտոր հողը այնուհետև նրա համար մի ուխտատեղի դարձաւ։ Քանի որ գարնան անձրևներն էին գալիս ու ջրում մատաղ տունկը, կղզում չգիտէին Կարապետի այդ գործի մասին, բայց երբ անձրևներից յետոյ ամառուայ այրող արեգակը իւր ճառագայթները մինչև ուռենու նուազ արմատները հասցրեց, մէկ օր աղբար Կարապետը փոքրիկ ճիւղերը շոշափելիս թառամած գտաւ նրանց. այստեղ նրա արածները չէին կարող թագնուած մնալ։

—Խեղճ որը, եղաւ նրա միակ խօսքը։ Մրմնջալով վեր կացաւ գնաց իւր խուցը և ջրի կուժը առնելով վերադարձաւ, կուժը լցրեց ծովից, և ուռենու շուրջը տնքտնքալով փոքրիկ փոս կաղմելով՝ թափեց այնտեղ։ Երբ ձեռքով շոշափելով տեսաւ, որ ջուրը իսկոյն ծծուել է տօթից ճաքճաքուած հողի մէջ, կրկին ջուր բերաւ թափեց և այդ գործողութիւնը այնքան կրկնեց, մինչև որ ջուրը վերջապէս կանգնած մնաց փոսի մէջ։

—Կշտացաւ խեղճը, ասաց նա լիապէս շնչելով, կարծես ինքն էլ նրա նման կշտացած ու հովացած։

Զոհրաբը տեսել էր այդ բոլորը։ Նա կղզու անմատչելի ժայռերը շրջելուց յետոյ վերադառնում էր երբ տեսաւ այդ։ Զայն չհանեց. կամացուկ մօտեցաւ և երբ աղբարը կոացել էր որ մէկ կուժ էլ թափի ծառի տակ, ծուռը յանկարծակի բռնեց նրա բազուկը։

—Տէր Յիսուս Քրիստոս, վեր թռաւ ծերունին, դու չար սատանայից հեռու պահիր... հրաժարիմք ի սատանայէ։

—Ծառ, ծառ, հնչեց Զոհրաբի խռպոտ ձայնը։ Ծառը հանենք, աղբար Կարապետին տեղը դնենք, ծառը տանենք սատանին տանք. հա, աղբար, ասաց ու բռնեց ծառի ընից։

—Զոհրաբ, Զոհրաբ, Աստուած սիրես մի արա։ Զոհրաբ, մեղք է, Աստուծոյ ստեղծածն է, տեսնում ես ինչ սիրունն է։

—Սիրունը դու ես, քեզ այդտեղ տնկենք, մեղքը դու ես, ծառը հանենք սատանին տանք, ասաց ու անորոշաբար խաղացող աչքերը յառեց աղբար Կարապետի անլոյս աչքերին։

—Էլի՞ Զոհրաբ, տօ ծուռ, Աստծուց չՓՈ վախենում, ձեռդ քաշիր, թէ չէ հայր սուրբին... կասեմ։

Այստեղ Զոհրաբը ձեռը քաշեց և մի կողմ անցաւ, նստեց ու անթարթ աչքերով սկսեց դիտել աղբար Կարապետին։ Սա դարձեալ կուժը լցրեց ու նորից թափեց կիսով չափ դատարկուած փոսի մէջ։ Իսկ Զոհրաբը երկար դիտելուց յետոյ մի յան-

կարծակի ոստիւնով վեր ցատկեց, կուժը ծերունու ձեռքից խլեց և մի քանի ռնգամ վրայ-վրայ ջուր բերեց ու թափեց.

—Լաւ է, աղբար։

—Լաւ է, Զոհրար։

—Էլի՞ բերեմ։

—Չէ, բաւական է, ասաց կոյրը շոշափելով և իմանալով որ փոսը լիքն է։

Բայց Զոհրաբը չլսեց. դարձեալ մի քանի անգամ բերաւ, մինչև որը ջուրը փոսից էլ բարձրացաւ և շուրջը ողողեց, որից պատնէշը փուլ եկաւ ու միջի ջուրը ցրուեց։

—Դէ բաւական է, ծուռ, ասաց նա բարկացած։ Դարձեա՞լ սատանան սիրտդ մտաւ։ Աղօթք արա՛, որ դևը սրտիցդ դուրս գայ... Շատ ժամանակ է էլ չես աղօթում։ Ձէ՞ քեզ ասել եմ և ասում եմ. «միշտ աղօթիր»։

—Սատանայ, սատանայ, կրկնում էր նա խանգարուած աչքերը գետնին յառելով ու կարծես ինչ որ որոնելով.—Սատանան դու՛ ես, աւելացրեց խրոխտաբար և յետ-յետ նայելով սահեց-անցաւ դէպի վանքի կողմերը։ Իսկ աղբար Կարապետը յանկարծակիին եկածի նման չգիտէր ինչ ասէր։

—Էլ չանես, Զոհրաբ, Աստուած մի արասցէ, կանչեց նրա ետևից։

Դ.

Վարդավառ շաբաթ երեկոն անցել էր։ Այն երեկոյեան կղզու մշտական բնակիչները ըստ սովորութեան վաղ քնել էին, իսկ ուխտաւորները երկար երգում էին ու պարում, մինչև որ ծովափի մեղմ ծփանքների տակ նրանց քունն էլ եկաւ և նրանք պառկեցին ու քնեցին աստղազարդ երկնքի տակ առաւօտեան վաղ արթնանալու համար։ Լուսաբացին մատաղ մորթողները վեր կացան և արթնացրին մեծին ու փոքրին։ Քնելու համար հօ չեն եկել, տանն էլ քնում են, պէտք է մատաղ մորթել, կրակ անել, կերակուր պատրաստել։ Եւ բոլորն էլ գործի կպան։ Տղամարդիկ դանակներն էին սրում, մինչև որ երեխաները ոչխարները վանքի շուրջը երեք անգամ պտտցնելուց յետոյ բերին, կանայք կրակն էին թէժ անում, հարսները շամփուրներ պատրաստում, որ ջահիլների համար թոք ու ջիգեար, սիրտ ու աղիք խորովեն և առաւօտ-առաւօտ մատաղը «ընդունելի» անել տան։ Աւելի հասակաւորները մտածում էին, թէ ինչպէս անեն որ վանահօրը առաջառաջ իրենց հացից կտրել տան։

Ճաշու ժամը վերջացաւ։ Վանքի շուրջը թարմ կանաչների

վրայ սեղան բաց արին և ծալապատիկ նստատեցին խումբ-խումբ։ Իւրաքանչիւր տուն իւր իգիթ տղաներից մէկին ուղարկել էր հայր սուրբի ետևից. այսպիսի տեղերում մեծը պէտք է սեղանի գլուխը լինի, որպէս զի մատաղը «ընդունելի» դարձնէ։ Բայց խառն ժամանակ էր, չիմացուեցաւ թէ ինչպէս հայր սուրբին փախցրին տարան, մէկ էլ էն տեսան, որ նա տանուտէրի սեղանին է բազմած։ Մէկ հայր սուրբ չկար վանքում միայն. մեծին տանելուց յետոյ հերթը փոքրերին հասաւ. բոլորին էլ քաշ տուին տարան. ամենավերջին տիրացուն անգամ այսօր սովորական մութ ընդհանուր սեղանատունը թողած ուխտաւորի հետ սեղան նստեց։

Այդ բոլորից սակայն բացառութիւն էին կազմել աղբար Կարապետը և ծուռ Զոհրաբը։ Առաջինը իւր խցից դուրս չէր եկել այդ օրը ոչ ոքի աչքին չերևալու համար, իւր սովորական այցն էլ կղզու հիւսիսային կողմը իրիկնադէմին պիտի անէր, իսկ երկրորդը ելել էր իւր բարձր դիրքերը և այնտեղից յաղթական կերպով դիտում էր ներքևի իրարանցումն ու աղմուկը, հետևում էր այս կամ այն նաւակի գնացքին և քթի տակ փնթփնթում և կամ քարեր նետում վայր դէպի ջրերի անդունդները։

Ներքևում ամբոխի խուլ ձայները աղմկւում էին, կարծես ծովն էր պատրաստւում յուզուելու. բայց նա հանգիստ էր, առանց ալիքների՝ ապակեայ, իսկ կղզին կարմիր դէմքերի և ճակատների մի ծով էր ներկայացնում—տեղացիների համար մի նորերևոյթ տեսարան։ Եւ այս ծովի ալիքները սովորական ալիքների նման չէին. այնտեղ մի անորոշ ոռնոց է՝ անսիրտ ու անհոգի, իսկ այստեղ մարդկանց հոգիներն են խօսում, եռուն կեանքն է ալիքանում և ինչքան լաւ է այդ ալիքը. նա Զոհրաբի համար է, աղբար Կարապետի համար էլ է, բոլորի համար է, իսկ ծովինը՝ ամաչութեան և լռութեան համար, գիշերուայ և ժայռերի համար։

Զոհրաբը հէնց այդ համեմատութիւնն էր անում այդ ժամին։ Շատ անգամ է պատահում, որ շատ ծանր խնդիրներ ու հարցեր տեղ են բռնում ծռերի խանգարուած ուղեղներում և կոտրատուած հոգիներում ու զրաղեցնում նրանց։ Մթթէ նա չէ յիշում. քանի-քանի անգամ նա ականջ է դրել գիշերները քամու և ալիքների խաղին, քանի անգամ ինքն էլ ոռնացել է այդ ալիքների հետ, խօսք խնդրել, բան հարցրել և անպատասխան մնալով կամեցել է գնալ նրանց բերանը մտնել և խօսք դուրս քաշել այնտեղից, այդ անհոգի, անսիրտ արարածներից։ Բայց ամեն անգամ կամ «հանգստեան» և կամ «խաղաղական» ժամերի զանգերը յետ են կանգնեցրել նրան։

Այժմ էլ երևի նոյն խնդիրները որոճալով և կուլ տալ չկա-

բողանալով յանկարծ վեր կացաւ տեղից, ու գլուխը թափահարելով

—Անսիրա-անհոգիներ, ասաց ու իջաւ դէպի լճափի փոքրիկ հարթավայրը, ուր կանգնած էր աղբար Կարապետի ուռենին։

Արդէն իրիկնադէմ էր։ Մատաղկերոյթը վերջացել էր և բոլորը զուարճանում էին. ոմանք պար բռնելով սիրուն աղջիկների անուշ լէլէների ուղեկցութեամբ, ոմանք երգելով, ոմանք զբօսնելով կղզու զանազան կողմերը շրջելու և ճգնաւորի այրը կամ անապատականների հին գետնափոր խուցերը տեսնելու համար։ Իսկ միայնակեացները կուշտ ուտելուց յետոյ վեր էին կացել և հեռու կանգնելով դիտում էին իրենց համար անսովոր այդ պատկերը։

Մինչ այս մինչ այն ուռենին ջրելու ժամանակը վրայ հասաւ և աղբար Կարապետը կուժն առաւ ու տնքտնքալով ճանապարհ ընկաւ։

—Ո՞ւր, աղբար, էն էլ կուժով, դարձաւ նրան վարդապետներից մէկը՝ գէր ու կուշտ, որ ուրիշ օրեր համարեա երբէք չէր երևում այդ լուռ վայրերում։

—Դէնն եմ գնում, հայր սուրբ, ասաց նա ձեռքով վանքի հիւսիսային կողմը ցոյց տալով։

—Խէր լինի, աղբար։

—Ոչինչ, շատ չէ, այնտեղ մի շիւղ էի տնկել, գնում եմ ջրելու։

—Վայ հէր օխնած, քո դարդն էլ կտրուել է, վեր ես կացել և կոյր-կոյր գնում ես մի անշունչ առարկայի համար ուժերդ սպառելու։

—Օ՜, մի ասէք, հայր սուրբ, նա անշունչ չէ։ Ես զգում եմ նրա շունչը, նրա հոգին։ Նա փոքր էր և մեծացաւ, նա նիհար էր և գերացաւ. ես զգում եմ, որ օր օրի վրայ հզօրանում է նրա շունչը, ամրանում նրա իրանն ու բաղուկները։ Օ՜, մի՛ ասէք։

—Յետոյ, դրանից ի՞նչ օգուտ, աղբար, ասաց վարդապետը սառնօրէն. քո այդ սիրելի ծառը կարո՞ղ է մի թէև ծուռ զաւակի, տղայ լինի նա կամ աղջիկ, փոխարինել, ասաց նա և հառաչեց և նրա ձայնը նուազեց ու աչքերի արտահայտութիւնները հուզ եկան։ Ապա նա նորից քննական հայեացքով աղբար Կարապետի չորացած դէմքին նայեց, կարծես կամենալով գտնել այն գաղտնիքը, որ այդ օր ու արև չտեսնող ծերունուն այսպէս թէ այնպէս բաւականութիւն էր բերում, թունդ տալիս սրտին։

—Ե՞ւ որտեղ ես տնկել, աղբար։

—Ա՜յ, այնտեղ, ուր ժայռերն են սկսւում։

—Եւ այդքան հեռու. խեղճ ողորմելի, գոնէ այս մութիկ տեղերում տնկէիր, միւս ծառերի մօտ, որպէս զի հեշտ լինէր խնամել նրան։ Մենակ ինչի՞ նման կլինի նա։ Նա երկար չի կարող ապրել այդ քար ու խճերի մէջ։

—Ես դիտմամբ եմ նրան լուռ միայնութեան մէջ դրել։ Կարող է պատահել, որ մի մոլորուած հոգի գնաց այն տմայի ափերը և չարը աշխատէ կորստեան մատնել նրան լուռ միայնութեան մէջ. իմ ծառը, որ միայնութեան մէջ կենդանի շունչ է, կկանչէ նրան իւր հովանու տակ, կփսփսայ նրա ականջին, կեանքի տեսիլը կտայ նրան և նա կփախչէ այդ՞ վայրերից։

—Բայց քե՞զ համար ինչ, քեզ, խեղճ ողորմելի։

—Ինձ համար... ոչինչ։ Ես միշտ գոհ եմ, ասաց և ճանապարհ ընկաւ։

Զոհրաբը բարձրից իջնելիս տեսել էր նրան և քայլերը ուղղել դէպի ուռենին։ Աղբարը մօտեցաւ ծառին, ծնողի հոգածութեամբ բռնեց նրա բունը ու նստեց։ Մի փոքր յետոյ նա շուրջը շոշափեց, ականջ դրեց, արդեօք ոչ ոք չկայ. ու սկսեց աւելորդ քարերը ջոկել ու դուրս թափել։ Զոհրաբն ըստ սովորութեան ձայն չէր հանում։ Նա նստել էր, բայց հակառակ սովորութեան աղբար Կարապետին չէր նայում, և երբ աղբարը կանչեց, «Զոհրաբ, այստեղ ե՞ս», նա չպատասխանեց, գուցէ և չլսեց։

Փոքր ինչ հեռու ոչ այնքան երիտասարդ այր ու կին կանգնած բռնել էին իրար ձեռքերից և դիտում էին ծովի հարթ մակերևոյթը, որի հայելու վրայ մայր մտնող արեգակը կարծես ոսկի ու արիւն էր թափում ու խառնում։ Աւելի հեռուում ծովը նիրհում էր լեռների գրկում և նրա այդ նիրհը խաղաղ էր ու անդորր որպէս կուսի նինջը։ Միայնակ զոյգի սրտերն էլ այդպէս անդորր էին. թւում էր փոքր ինչ յետոյ կմարեն նրանք և կմիանան ծովի հսկայ նիրհի հետ, բայց որտեղից որտեղ մի չարաճճի ձուկ ջրից վեր բարձրացաւ ու նորից խորասուզուեց, նրան հետևեց երկրորդը և մի ակնթարթում ջրի նիրհը խանգարուեց, ջրերը օղակներ կազմեցին, մէկը միւսից կամենալով առաջանալ և արթնացնել ջրերի հանգարտ մասերը. բայց անկարող լինելով մարում էին և կորչում անսահման զանգուածի մէջ։ Տղամարդը աւելի մօտեցաւ կնոջը, իսկ կինը խոր նայելով նրա բիբերի մէջ, բաց թողեց ձեռքը և կամացուկ յետ-յետ քաշուեց։

—Ա՜, ինչ է որ, մէկը ծուռ է բան չի հասկանալ, իսկ միւսը՝ կոյր է, որ ոչինչ չի տեսնում։

—Վանքի մարդիկ են, խեղճ են, ինչո՞ւ ես այդպէս ասում։ Ասաց և կարծես մարդուն սիրաշահելու համար կռացաւ, խոտե-

րէ մէջից մի շատ սիրուն ծաղիկ կտրեց ու մատուցեց նրան։ Ամուսինը ժպտաց լուռ վայելքի մէջ. այդ ժպիտը անսահման շնորհակալութիւն էր արտայայտում, իսկ կինը չափազանց ուրախ էր, որ կարողացաւ սիրաշահել ամուսնուն։

Սիրոյ այդ տեսարանը իւր նուրբ ու հանդարտ խաղերով չէր կարող չազդել Զոհրաբի վրայ։ Տարիների երկար շարքը մենակ անցկացրած նրա հոգին, որ շատ անգամ էր շարժուել ու նստել, այժմ ուժգին թնդաց, ծխեց ու մխաց։ Մի բոպէ նրա հիւանդ միտքը գիտակցեց իւր ոչնչութիւնը, ինչ ունի այս ամայի վայրում, ո՞վ բերեց այստեղ, արդեօք երկար պիտի մնայ։ Այս բոլորի մէջ մի զօրաւոր կէտ կարծես պոկեց Զոհրաբի սրտից անապատային կեանքի միապաղաղ լռութիւնն ու անպտուղ միայնութիւնը և մի լուսաւոր կանթեղ վառեց նրա սրտի աւերակների վրայ։ Ու նա ինքն էլ չիմացաւ թէ ինչպէս երեսն ի վայր ընկաւ գետնին ու սկսեց հեկեկալ երեխայի պէս։ Ձայնը հետզհետէ լսելի եղաւ և առաջին անգամ վանք մտնելուց յետոյ երկու խոշոր արցունքի կաթիլներ գլորուեցան և բաց արին նրա ամրացած, անզգայ այտերը։

Աղբար Կարապետի ականջները շատ սուր էին։ Նա իսկոյն լսեց հեկեկանքի ձայնը։

—Զոհրա՞ր, կանչեց նա զարմացած։

Պատասխան չկար։

—Ո՞վ ես, մարդ։ Աստուծոյ լոյսի մէջ, այս չքնաղ վայրերում ինչո՞ւ մեղք ես գործում։ Ես պէտք է լամ, որովհետև աշխարհը ինձ համար չէ։ Եւ ես լուռ եմ։ Ո՞վ ես, ասա։

Պատասխան չկար։

—Մի ծածկուիր, ես կսփոփեմ քեզ։ Ով էլ լինես, ինձնից դժբաղդ չես լինիլ։ Օ՜, եթէ մի թեթև լոյսի շառաւիղ այս խաւար աչքերիս մէջ շողար և ես կարողանայի դէթ այս լուռ ու համր զաւակիս հասակը տեսնել...

—Խեղճ մարդիկ, արձագանք տուին ամուսինները ձեռքերը ծնկներին զարկելով... Դնանք գնանք։ Ու գնացին։

Կոյրը շարունակում էր ձեռքով ծառի բունը, ճիւղերը, ջրի փոսը տնտղել, իսկ Զոհրաբը դիտում էր նրա իւրաքանչիւր շարժուածքը, դէմքի իւրաքանչիւր խաղը, խաւար աչքերի թարթումները։

—Դո՞ւ, մտածում էր նա աչքերը պլշած, որ աշխարհ ու լոյս չես տեսնում, օր ու արև չգիտես, բայց դարձեալ մի բան ունիս, որ ոյժ է տալիս մարմնիդ և եռանդ՝ սրտիդ, ես խեղճս, որ ամեն ինչ տեսնում եմ և ոչինչ չեմ ստանում, ինչ անեմ։

թափառեմ ժայռերի ծերպերով, քարափների ծայրերով, ստուերս ետևիցս քաշ տամ, պատկերս ջրերի մէջ տեսնեմ և զզուանք զգամ կեանքից, գոյութիւնից ու նողկամ։ Եւ ինչու՞ ես և ոչ դու։

Այստեղ դարձեալ մթնեց նրա խանգարուած բանականութիւնը. նա վեր կացաւ, չորս կողմից քարեր հաւաքեց ու եռանդը սպառելու համար մէկիկ-մէկիկ ծովը նետեց շտապ-շտապ։ Նա քէն ունէր այդ ծովի դէմ, նա էր պարփակել իրեն այդ մի բուռն հողի վրայ, նա էր բաժանում իրեն աշխարհից, կտրում կեանքից։

—Ո՜հ, դա-ւա-ճանն, ասաց նա ձեռքերը բռունցքներ շինելով և ատամները սեղմած, չորս կողմը սպառնալով։

—Զոհրաբ, Զոհրաբ, դարձեա՛լ չարը բուն դրեց քո մէջ։ Ես վախենում եմ, որ մի փորձանք չգայ արար-աշխարհի գլխին։ Տէր Աստուած, Դու փրկիր, Դու խնայիր, ասաց նա ձեռքերը տարածելով ու հայեացքը երկինք ուղղելով, ապա խոր աչքերին հուպ տուեց, կարծես կամենալով այդ չորացած աղբիւրից արցունք հոսեցնել աշխարհի անսասանութեան համար։

Զոհրաբը յանկարծակի կանգ առաւ, երկար ժամանակ լռեց և աչքերը ջրերի վրայից ցամաքի միւս ափը դարձնելով ասաց կտրուկ կերպով.

—Ես գնում եմ, Կարապետ աղբար, էլ չեմ կարող մնալ։

—Ո՞ւր, Զոհրաբ։

—Սարերը, մ՚այն կողմը, ասաց ձեռքով ցամաքը ցոյց տալով։

—Ո՞վ ասաց դնա՛, Զոհրաբ, հայր սուրբը խո չի՞ ասել, չէ՞։

—Ոչ, ես եմ գնում։ Հոգիս է ուզում։

—Հոգիդ չէ՛ ուզում, Զոհրաբ, սատանան է ուզում, սատանան, այդ չարը, խարդախը, որ Աստուծոյ որդիներին ուղիղ ճանապարհից հանում և ծուռն է ցոյց տալիս։ Ի՞նչ կայ այն քանդուող աշխարհում, հը՞։ Տէր, Դու փրկիր։

—Աստուա՛ծ, այո՛, աղբար, Աստուա՛ծ։ Աստուա՛ծ էն մարդկանց, էն աղջիկներին ասում է ծովի այն կողմը ապրեցէք, իսկ Զոհրաբին, Կարապետին՝ թէ ծովի մէջ։

—Էլի վարդավառը եկաւ ու դու ծռացար։ Աշխարհային վայելքը... Զոհրաբ... հրաժարիմք ի սատանայէ։ Աղօթք արա, Զոհրաբ, աղօթք արա և այս անգամ ձաղկիր էլ քեզ, թէ չէ կորած ես, հոգիդ սատանայի բաժին կը դառնայ։

Զոհրաբի դէմքը մռայլուեց։ Նա աչքերը գետին խոնարհեց և երկար ժամանակ մտածում էր։ Որտեղից որտեղ նա յիշեց այն օրը, երբ առաջին անգամ ոտք դրեց այս կղզու վրայ։ Որքան

մութն էր այդ յիշողութիւնը և հեռաւորը ցրուած։ Այդ մշուշից սթափեցրեց նրան երեկոյեան ժամի զանգը։ Զոհրաբը գլուխը կախեց ու շտապեց վանքի կողմերը։ Աղբար Կարապետն էլ ինչ որ մրմնջալով հետևում էր նրան։

Ե.

Վայելքի և ուրախութեան ժամերը շուտ են անցնում։ Օրը մթնել էր և կիւրակին անդարձ անցել։ Ուխտաւորները կամաց կամաց թողնում էին կղզին նաւերից շարունակ յետ-յետ նայելով, խաչակնքելով, աղօթելով, որ յաջորդ տարին էլ արժանանան սուրբ վայրերը տեսնելու կամ աւելի ճիշտ՝ նոյն զուարճութիւնները անելու։ Կղզին տերևաթափ անտառի էր նմանւում։ Աշնան նման մի բան՝ աւելի ևս խորհրդաւոր, քշեց տարաւ մի քանի րոպէի ընթացքում մատաղ տերևները։ Եւ կղզու մշտական բնակիչները յանկարծակի վրայ հասած այդ աղէտից յետոյ վաղ քաշուեցին իրենց խցերը։ Իսկ կղզեակի բնութիւնը, ժենակ մնացած, բարկութիւնից սկսել էր շարժուել, թափ տալ իւր թևերը այդքան բազմութեան յանկարծակի անյայտանալուց յետոյ լուռ ու անտարբեր մնացած ջրերի մէջ։ Լճի հայելանման մակերևոյթը այլայլուեց, պղտորուեց մի րոպէում։ Հեռուից սպիտակին էին տալիս փրփուր կոհակները, որոնք սրտմտած վազում էին դէպի կղզու ժայռոտ ափերը նրանից վրէժ լուծելու։ Կէս ժամից յետոյ այդ թեթև յուզմունքը փոթորկի փոխուեցաւ։ Հեռուից երևում էին դարձող նաւակները, որոնք ուխտաւորներին ափ հանելուց յետոյ ճանապարհին խաղալիք էին դարձել հուժկու ալիքներին։ Սրանց զօրեղ հարուածների ձայները մինչև վանքի խոր խցերն էին հասնում ու խռովում նրանց բնակիչների աղօթքը, հանգիստն ու քունը։ Սոսկալի է լինում ջրերի ժխորը միայնութեան մէջ։

Այդ բոլորի վրայ կարծես իբրև հսկող շրջում էր ծուռ Զոհրաբը։ Ըստ երևոյթին նա յոգնած էր ու յուզուած։ Նա գնում էր ափերն ի վեր ալիքների հետ խօսելով և ղեկավարելով խռովայոյզ աղմուկը։

—Դէ, մոնչիր այսուհետև, գնացին նրանք, ես ու դու մնացինք։ Չպէտք է լռել, մոնչիր մոնչանք։ Չէ, դու մոնչիր, իսկ ես ձաղկեմ, աղբարը այդպէս հրամայեց։

Ու սկսեց քայլերը առաջ շարժել և ջուխտ ձեռքերով ծեծել իւր կուրծքն ու ծնկները, կողքերն ու ուսերը։ Ցանկարծ գիւտ արածի նման կանգ առաւ նա, երբ աչքն ընկաւ ափին ձգած կոտրած նաւակին։ Նա ինչպէս կուզէր մեն-մենակ մտնել այդ

նաւակը և ջրերի երեսն ընկնել. գուցէ այժմ նրանք կը խօսեն իւր հետ։ Մի կղզի է, մի աղբար Կարապետ. կղզին լուռ է, աղբարն էլ հրամայում է ձաղկել և միայն ձաղկել. գուցէ ջրերը այլ բան կասեն եթէ մօտ գնաս։ Եւ ալիքները խուլ մռնչում էին, ափերին զարկելով փշրւում, իսկ նաւակը տարիների համբուութեան մէջ գետնին պատուաստուած լուռ էր ու անշարժ և Զոհրաբը զուր էր աշխատում նրան մազաչափ անգամ տեղահան անել։ Եւ անօգուտ աշխատանքից յետոյ շարունակեց նա ճանապարհը, ինքն էլ չիմանալով ուր և ինչու, միայն գնում էր, հեռանում բնակարաններից, վանքից. գնում էր ու ձաղկում մարմինը։

—Ջրերը ոչինչ չեն ասում, նաւակը յաւիտենական պապանձման մէջ է, մնում է կրկին և կրկին ծաղկել... (Ձեռքով ճակատը շփելով) բայց ես դարձեալ ուզում եմ գնալ, խօսել, ժպտալ, ծիծաղեցնել, հոգիս միացնել աշխարհի մեծ հոգու հետ։ Ձաղկելն էլ չի օգնում։ Բայց գուցէ աւելի ամուր պէտք է ձաղկել... Սարազանով։ Բայց ո՞ւր է խարազան...

Ցանկարծակի նա կանգ առաւ աչքերը խաւարի անորոշութիւնից գետնին ձգելով.

—Հա՛, գտայ։ Գտայ, նա հէնց ինձ համար է փայփայուել, փաղաքշանք ու խնամք վայելել այսքան տարիներ... Հա՛, հա՛, հա՛...

Նրա առաջ կանգնած էր Կարապետ աղբօր փոքրիկ ուռենին, որ հուժկու քամուց թէ այդ պիւանման, մաղերը զզզուած արարածի ներկայութիւնից դողում էր։ Զոհրաբը իւր ծխող աչքերը երկար յառել էր նրան.

—Հը, աղբար Կարապետ, ասաց կակուղ եղանակով, հիմա ի՞նչ անեմ։ Ասացիր ձաղկիր, ձաղկեցի, բայց օգուտ չեղաւ։ Ինչ անեմ, ասաց երկրորդ անգամ ձայնը բարձրացնելով,—ի՞նչ անեմ վերջապէս, դուրս թռաւ նրա բերանից որոտի նման—քեզնով պիտի ձաղկեմ ինձ, քեզնով, ասաց, փրփրաց և յարձակուեցաւ կատաղաբար մատաղ ծառի վրայ։ Նախ կռացաւ, բունը ամուր բռնեց, մի քանի անգամ խրխռաց, տնքտնքաց և ահագին թափով դուրս կորզեց ահագին արմատները արիւն-քրտնքի մէջ կորած։ Տեղ համբերութեան և եփող բռնկման պայքարն էր դա, որ վերջացաւ առաջնի անկմամբ։ Այդ բոպէին փոթորիկը աւելի սաստկացաւ, երկինքը գալարուեց ու որոտաց երկունքով բռնուածի նման, փոքր ինչ յետոյ կայծակը երկար կտրատուած շերտով լուսաւորեց երկինքը երկունքը աւելի յայտնի կացուցանելու համար և Զոհրաբը տեսաւ այդ երկունքի պտուղը—իւր առաջը ընկած մի վիրաւոր ծառ՝ փետրաթափ թռչունի նման, որ կոյր մարդու ծեր ձեռքերից էր կեանք ստացել տարիներ շարունակ։ Նա ան-

գիտակցաբար վեր բարձրացրեց ծառը, կոտրեց միջից ու ճիւղերի կողմով ձաղկում էր թիկունքն ի վեր, մինչև որ ջարդուած ու յոգնած վայր ձգեց և հև ի հև փախաւ վանքի կողմերը...

Ինչից էր փախչում նա և ո՞ւր...

Այդ օրից նրա հիւանդ ուղեղը աւելի և աւելի խանգարուեց։ Երեկոները սովորականից դուրս չարութիւններ էր անում, իսկ գիշերները այլ ևս դուրս չէր գալիս, մանաւանդ որոտալից ու կայծակնահար գիշերները։

Միւս օրը, երբ աղբար Կարապետը ջրելիս ձեռքը տարաւ որ բռնէ ծառի բունը, ոչինչ ձեռքը չընկաւ։ Երկար ման գալուց յետոյ նրա ոտքը մի բանի դէմ եղաւ։ Ուռենին էր... նա երկար ժամանակ մրմնջում էր ու մղկտում։ Իսկ երբ պատմեցին Զոհրաբի դրութեան մասին, նա աւելի յուզուեց իւր երկու բարեկամների անկումը տեսնելով, սգաց, սգաց ու ոյժ չունենալով երկար դիմանալու, ընկաւ ու մեռաւ։

Մի քանի օրից յետոյ մեռաւ և Զոհրաբը։

Ա. ԳԵԱՆՋԵՑԵԱՆ

ՀԱՅԵՐԸ ՌՈՒՍԻԱՅՈՒՄ [1]

Ե.

Այս ծանօթութիւնը նախ և առաջ այն հետևանքն է ունենում, որ ռուս իշխանները հրաւիրում են հայերին իրանց զօրքերի շարքը մտնելու և թշնամիների դէմ պատերազմելու։ Եւ հայերը դալիս ծառայում էին ռուս իշխաններին ու յետոյ ընակութիւն էին հաստատում այս կամ այն քաղաքում և կամ գաղթում գնում էին դրացի ազգերի մօտ հաստատուում։ Այդ տեսակ «հրաւէրներից» յիշուում է զանազան վարիանտներով—1062 թուականի դէպքը [2]։

Արժ. Հ. Մինաս Բժշկեանցը իր «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» ուսումնասիրութեան մէջ ասում է՝ «Արդ մեծ մասն Անեցւոց հաւաքեցաւ ի Լեհաստան, զի անդադար յամենայն կողմանց անցանէին ընդ ծով ի Մոլդավիայ և ի Դունայ և անտի ի Կալիցիա ի Բոտոլսքի և յայլ նահանգս լեհաց։ Իբր զի ոչ միայն երկիրն է խաղաղ և ըստ իրաց բարեբեր նման Հայաստանու, այլ և բարք ընակչացն չէ օտար ի բարուց նոցա, զորս գտաք օտարասէրս, առատասիրտս և բարեբարոյս։ Ցամի տեառն

---

[1]) Լումայ 1909 № 1.

[2]) Հայր Բ. Վ. Բուշնարեանի «Պատմութիւն գաղթականութեան Արիմու Հայոց» ուսումնասիրութեան մէջ, 177 երեսում կարդում ենք՝ «Առաջին անգամ 1009-ին Ռուս նախարարք հրաւիրած են զհայս ի Բիւև» և այլն։ Մենք կարծում էինք, թէ այդտեղ տպագրական սխալ է պատահել և պէտք է լինէր 1062։ Բայց 187 երեսի վրայ հայր հեղինակը կրկին յիշում է այդ մասին, ասելով՝ «Հնագէտն Անտոնի կգրէ որ Հայոց առաջին գաղթականութիւնը ի Հայաստանէ դէպ ի Ռուսաստան պատահած է 1009-ին հրաւիրեալ ի նախարարաց Բիւևի»... Մեզ այդ դէպքը յայտնի չէ։

1060 Դեմետրէոս դուքս կարմիր Ռուսսիոյ ինքնագլուխ տիրէր ի Կալիցիա. որդի սորա Թէոդոր իբրեւ լուաւ զքաջութիւն Հայոց ընդ Յունաց եւ Պարսից, կամեցաւ ունել զնոսա ինքեան նիզակից, եւ տալ բերել նոսա յերկիր իւր, եւ օգնութեամբ նոցա պատերազմիլ ընդ Թազաւորին լեհաց։ Ուստի ի 1062 առաքեաց առ նոսա հրովարտակ եւ հրաւիրեաց զնոսա երթալ ընդ նմա ի պատերազմ խոստանալով նոցա բազում ազատութիւնս։ Ահա քան հրովարտակին թարգմանեալ ի նմին ժամանակի ի ռուսէ ի հայ՝ «Ահա մեծի դքսի Թէոդորի որդւոյ Դեմետրեայ առ Նաշոխաչեան (?) Հայս, որք աստ կամին գալ։ Եկեսցեն յօգնութիւն ինձ։ Եւ ես տաց ձեզ ազատութիւն ընդ ամն երիս։ Եւ յորժամ լինիջիք առիս, ուր եւ հաճեսցի ոք երթիցէ ազատօրէն։ Յամի 1062» [1]։ Այդպիսի բացատրութիւն է տալիս 1062 թուականի դէպքին և Ֆ. Լուկաշը իր «Տրանսիլվանիոյ Հայոց Պատմութեան» մէջ, գրելով՝ «Թէոդորոս՝ կարմիր Ռուսիոյ դուքսն 1062-ին նախիշևանցի (արդեօք նախիջևանցի՞) Հայերն իրեն օգնութեան կոչեց, և անոնց օգնութեամբ թշնամեացն յաղթելով իւր իշխանութեան մէջ անոնց տեղ և արտօնութիւններ շնորհեց» [2]։

Ուրիշ կերպ է նկարագրում այդ դէպքը Ս. Գլինկան վերևում յիշուած «Հայ ազգի պատմութեան» մէջ։ Նա ասում է՝ «1062 թուին Մեծ Իշխանի հրովարտակով հրաւիրուած էին Նէմէխեան (?) կոչուած հայերը (названные немехскими) Կիևի երկրին օգնելու և լեհացիների դէմ կռուելու, այն պայմանով, որ երեք տարուց յետոյ նրանք

---

[1]) Հ. Մին. Բժշկեանց. Ճանապարհորդութիւն ի Լեհաստան. 1830 թ. Վենետիկ։ Տես 84—85 երեսները։ Նոյն վարձկան զինուորների մասին հայը Բժշկեանցը ասում է՝ «և բնակեցաւ ի Գիով (Кіевъ), զի անդ էր յայնժամ աթոռ դքսին, ուրանօր գոյ և քարաշէն եկեղեցի հայոց, այլ չիք անդ Հայ։ Բայց ուրիշ ճանապարհորդների ասելով արդէն XVI-րդ դարում Կիևի Հայոց եկեղեցւոյ միայն աւերակներն էին մնացել, ուրեմն ինչպէս կարող էր այդ եկեղեցին գոյութիւն ունենալ հայը Բժշկեանցի (1830) ժամանակ։ Տես Собраніе Актовъ և այլն, մ. II. էջ 281՝ „...которая (այսինքն армянская церковь) во время Стефана Рошки, польскаго писателя XVI вѣка,—находилась уже въ развалинахъ“.

[2]) Տես Դեմ. Տանի «Արևելեան Հայք ի Պուքովինա» ուսումնասիրութեան առաջին ծանօթութիւնը (Վիէն. հրատ.)։

ֆիրաւունք պիտի ունենան արձակուրդ ստանալու և Ռուսիայում, իրանց ուզած վայրում բնակուելու» [1]։

Վերջապէս «Արևելեան Հայք և Պուքովինա» ուսումնասիրութեան հեղինակ Դ. Տանը, յենուելով Բառաշ ուսումնասէրի գրուածքների վերայ ասում է. «Ցամին 1062 Ռուսիոյ Իզասլաւ իշխանին հրաւիրանօքն 20.000 Հայք Անի քաղաքէ եկան ի Ռուսիա՝ կռուելու ընդդէմ բոլովցիացւոց եւ ետ զղարձսն ի Հայս, այլ հաստատեցան ի Քիեվ և յետոյ Բոտոլսքի-Կամինիցի մէջ և ասկէ սփռեցան գրեթէ բովանդակ այն երկրին վրայ» [2]։

Այս բոլոր հաղորդութիւնների մէջ բազմաթիւ մութ կէտեր կան, բայց մեզ հետաքրքրող փաստը հաստատւում է լիովին՝ Հայերը իբրև վարձկան զինուորներ գալիս են Ռուսսիա և մնում են այստեղ, այսինքն հայ գաղթականութիւն են հաստատում և այն ռուսաց մայրաքաղաքում։ Կարծում ենք, որ եթէ ռուս իշխանները նախօրօք Բիւզանդիօնում պատահած չլինէին հայերի հետ, նրանց հետ միասին բիւզանդական նաւատորմղի կամ զօրքի մէջ ծառայած չլինէին—չէին հրաւիրի հայերին գալ Ռուսիա և զինուորական ծառայութիւն մտնել։ Բացի դրանից մենք գիտենք նոյնպէս, որ ռուսները հրաւիրում էին Բիւզանդիոնից արհեստաւորներին, արուստագէտներին, վաճառականներին, եկեղեցու սպասաւորներին և այլն։ Թոյլ ենք տալիս մեզ կարծելու, որ այս եկուոր տարրերի մէջ էլ անշուշտ հայեր պէտք է լինէին։ «Այդ միջոցին (XI—XIII-րդ դ.)—ասում է Կարամզինը—Կիևում բնակւում էին Յոյներ, Հայեր, Հրէաներ, Գերմանացիներ, Չէխեր, Վենետկեցիներ, որոնց գրաւում էին ապրանքների շահաւէտ փոխանակութիւնը և ռուսների հիւրասիրութիւնը» [3]։ Նոյն այդ ժամանակներում Կիևում բնակւում էր մի հռչակաւոր հայ բժիշկ, որի մասին յիշատակում է Պատէրիկի ռուս ժամանակագրութիւնը. «բաւական էր, որ այդ հռչակա-

---

[1]) *С. Глинка.* Исторія Армянскаго народа. М. 1833. ч. II, էջ 231.

[2]) *Տես՝ Դ. Տան.* ibid. էջ 3.

[3]) *Տես* Карамзинъ. Исторія Г. Р. т. III.

ւոր հայ բժիշկը նայէր հիւանդին՝ նա իսկոյն կասէր նրա մահուան ժամը և բոպէն» [1]։ Հայազգի եկեղեցականներ էլ կային, որոնք մինչև իսկ ռուս եկեղեցական ժողովներին էլ են մասնակցում և պրավոսլաւ կղերների հետ միասին կու�են նորամուծութիւնների դէմ (1157 թուին) [2]։ Գուցէ նշանաւոր Եփրեմ Միտրոպոլիտն էլ հայ էր, որովհետև նրա ծննդավայրը—Հայաստանի Մելիտինէ քաղաքը—հայ քաղկեդոնիկների կենդրոնատեղիներից մէկն էր։

Ցամենայն դէպս զաղթական հայերի գոյութիւնը Ռուսիայի կենդրոնում արդէն մինչ թաթարական արշաւանքը լիովին հաստատւում է։

Զ.

Ռուսների պատմական ասպարիզի վրայ երևան գալով՝ արևելքի և արևմտքի միջև առևտրական յարաբերութիւնները չէին դադարել, երթևեկող վաճառականների, առևտրի ճանապարհն էլ չէր փոխուել։ Ընդհակառակը ի դէմս Ռուսիայի և ռուսների նոր շուկայ և նոր վաճառականներ են երևան գալիս, որոնք նոր զարկ են տալիս այդ միջազգային առևտրին։ Ռուսները շահագրգռուած էին, որպէս զի առևտրական ճանապարհը Ռուսիայից չհեռանայ, ուստի կարողացած էին չափ ապահովում էին վաճառականների ճանապարհը անակնկալ վտանգներից և բարբարոս ցեղերի յարձակումներից։ Երկար ժամանակ Ղրիմի Սուդաղ քաղաքը ռուսների, բիւզանդացիների, արևելեան և արևմտեան վաճառականների հանդիպման տեղն էր. այնտեղ նրանք ունէին իրանց պահեստները, այնտեղ նրանք փոխարինում էին իրանց ապրանքները։

Նախընթաց գլուխներից մէկի մէջ մենք արդէն ա-

---

[1]) Патерикъ л. 125,6,7—178. *Տես* С. Соловьевъ. Исторія Россіи, т. I, *էջ 708*. Карамзинъ, т. III, *ծանօթ*. 260.

[2]) Собраніе Актовъ относящихся къ обозрѣнію исторіи арм. народа, I, II, III т. М. 1836—1838. *Այս հրատարակութիւնից օգտուել է և պ. Հ. Տէր-Ասատուրեանցը իր շահեկան «հայ վաճառականութիւնը Ռուսիայում» պատմական տեսութիւնը գրելիս։ Հրատ. Պարիս, 1906 թ.*

տել էինք, որ հայերը ռուսներից շատ առաջ ուզք էին կոխել և հաստատուել Ղրիմու թերակղզու վերայ։ Յամենայն դէպս նրանք պէտք է մասնակցած լինէին Սուդաղի շուկայում տեղի ունեցած միջազգային առևտրին։

Հայը Քուշնարեանը մի քանի փաստերի վերայ հիմնուելով կարծում է, որ հայերը արդէն X-րդ դարում բնակուելիս են եղել Կաֆայում։ [1]) Պ. Եր. Շահազիզը ևս ասում է, որ ոմանք՝ հիմնուելով այն հանգամանքի վերայ, որ Ղրիմում գտնուում են մի քանի հայկական յիշատակարաններ, եկեղեցիների ու վանքերի աւերակներ, մատուռներ ու խաչքարեր, որոնց մնացորդների վերայ պահուած արձանագրութիւնները և նոցա թուականները հասցնում են հայերի թերակղզում բնակուելու ժամանակամիջոցը մինչև Ժ. ԺԱ. դարերը—կարծում են, թէ հայկական գաղթականութեան սկիզբը Ղրիմում պէտք է համարել Ժ—երորդ դարը» [2])։

Այդ հարցում լիովին հեղինակաւոր պ. Ֆ. Քուչակ Յովհաննիսեան ևս, հիմնելով իր գտած և ուսումնասիրած հայ արձանագրութիւնների վերայ, որ ասում է «Գաղթականութեան հոսանքը Հայաստանից դէպի Արևելեան Եւրոպա այն է այժմեան Ռուսաստանը սկսուել է X և XI դարերում»։ Այդ արձանագրութիւններն են՝ ա) Ակքերմանի Ս. Աստուածածնայ խաչքարի արձանագրութիւնը «սուրբ խաչս յիշատակ է... նուաստ Դ... գրեցաւ թիւ ՆԺԶ» այսինքն 416 հայկական թուականին կամ 967 մեր թուականին։ բ) Թէոդոսիոյ (Քէֆֆէի) Ս. Սարգիս եկեղեցւոյ—1047 թուականին. գ). թանգարանում գտնուած տապանաքարի արձանագրութիւնը՝ «Ն. հ. զ. բարեխաւս է սուրբ նշանս Գրիգորին և իւր զաւակաց». 1027 թուականի արձանագրութիւն է։

Բացի տեղացի հայերից այդ միջազգային առևտրին պէտք է մասնակցած լինէին և եկուոր հայերը, որոնք այդ

---

[1]) Հ. Քուշնարեան. Պատմութիւն Խրիմու Հայոց դաղթականութեան. Վենետիկ. 1895.

[2]) Եր. Շահազիզ. Նոր-Նախիջևանը և Նոր-Նախիջևանցիք. Թ. 1903. էջ. 10.

միջոցին Սև ծովի ափերին գանգան քաղաքներում գաղութներ էին հաստատել և նրանց միջոցով առևտրական յարաբերութիւններ էին հաստատել Կովկասի, Փոքր Ասիայի և Եւրոպայի հետ։ Ի դէպ է այստեղ յիշել մի այդ տեսակ վաճառականական հայ գաղութի մասին, թէպէտ և մեզ հասած տեղեկութիւնները ոչ թէ X-րդ այլ XIV-րդ դարուն է վերաբերում։ Մօտաւորապէս 1376 թուին Սիկիլիայի թագաւոր Ֆրէդէրիկոս III-ը կամենալով վարձատրել յունաց դեսպան Ֆր. Լունէլլիին, նրա մատուցած ծառայութիւնների համար «նշանակում է նրան և նրա ժառանգներին տարեկան 15 ունցիյ (դրամական չափ) հասոյթ, որը գոյանալու էր, ի միջի այլոց, Թէբայում բնակուող հայերի վճարած քրեհներից». «ըստ երևոյթին— աւելացնում է իր կողմից այս դէպքը յիշող պատմաբան Գրիգորովիուսը—այդտեղ կազմուել է այդ ազգի վաճառականական գաղութ. գուցէ հայերը փախցրին հերցոգութեան շուկայից Ջենովացիներին և վենետկեցիներին, երբ հերցոգութիւնը անցաւ կաթալանցիների ձեռը, բայց նրանց երևալը այս կողմերում կարելի է վերագրել աւելի վաղ ժամանակներին [1]։

Է.

Բայց ուրիշ ճանապարհով եկած հայեր էլ պէտք է եղած լինէին այդ վաճառականների թւում. այդ ճանապարհը՝ Արևելքից Արևմուտք տանող հին ճանապարհն էր, որը բոլոր արևելցի վաճառականներին շատ լաւ ծանօթ էր։ Այդ ճանապարհը հայերին բերում էր Կասպից ծովով —Էթիլ (Վոլգա), որտեղից նրանք Թանայիսով (Դոնով) իջնում էին Ազաքի (Ազովի) ծովը ու հասնում Սուդաղ։ Մենք հաստատ գիտենք, որ այդ ճանապարհով էին գնում գալիս Աղուանները, խազարները, բուլղարները, իսկ յետոյ ռուսները։ Հաւանական է, որ սկզբում հայերը հէնց այդ վոլ-

---

[1]) Ֆ. Գրէգորովիուս. Աթէնքի պատմութիւնը միջին դարերում. Ռուսերէն թարգմ. Спб. 1900. էջ 260.

գայաբնակ ազգերի հետ էին վաճառականական երթևեկութիւններ անում։

Բուլղարներն այդ միջոցին բնակւում էին այժմեան Ղազանից մի քիչ հարաւ, Վոլգայի ձախակողմեան ափում։ Նրանց մասին մեզ հասած կցկտուր տեղեկութիւններից մենք կարող ենք եզրակացնել, որ նրանք ունէին իրանց անկախ, բաւականի քաղաքակրթուած և տնտեսապէս ծաղկած թագաւորութիւնը, հարուստ և բազմամարդ բուլղարի մայրաքաղաքով։ Պատմաբանները և ճանապարհորդները հիացմունքով են խօսում նրանց առևտրական ընդունակութիւնների և միջազգային յարաբերութիւնների մասին։ Դարերի ընթացքում նրանք Արևելքի և Արևմտքի միջև առևտրական յաջողակ միջնորդներ են եղել։ Բուլղար ազգի հետ—եթէ ճիշտ է Մովսէս Խորենացու պատմածը—հայերը ծանօթացել էին դեռ երկրորդ դարում Ք. ծ. առաջ, երբ բուլղարների մի մասը Վունդի առաջնորդութեամբ գաղթում և բնակւում են Հայաստանի հիւսիսային մասում՝ Վանանդում՝ «Եւ աստ կոչեցեալ զվայրենի եկամուտ ազգն, որ ի դաշտին հիւսիսոյ և որ զստորոտով մեծի լերինն կաւկասոյ... իսկ յետոյ վասն հատուածին վղընդուր ըուղկարայ բնակելոյ ի տեղիս, յանուն նորա անուանեցաւ Վանանդ...» [1])

Մի անգամ միմեանց հետ ծանօթանալուց յետոյ այդ ազգերը կարող չէին չշարունակել իրանց յարաբերութիւնները։ Այդ յարաբերութիւնները՝ պէտք է առևտրական լինէին, իսկ ճանապարհը՝ Էթիլ (Վոլգա) գետը և Կասպից ծովը։ Մենք գիտենք, որ հէնց այդ ճանապարհով բուլղարները իրանց ապրանքատար նաւերի վերայ հասնում էին մինչև Կասպից ծովի հարաւային անկիւնում գտնուող Բէրտուայ ամուր և վաճառաշահ քաղաքը. սա ևս առևտրական շուկայ էր, ուր պատահում էին միմեանց բուլղարները, դպարները, պարսիկները, արաբները, վրացիք և հայերը։ Նոյն այս ճանապարհով հայերն էլ իրանց ապրանքները

---

[1]) Մ. Խորենացի, պատմութիւն հայոց, գիրք, II, Գլ. 6.

տանում էին հիւսիսային երկիրները և փոխանակելով ուրիշ ապրանքներ էին ներմուծում իրանց երկիրը։

Կէս ճանապարհին ապրում էին դազարները, որոնք, ըստ Մովսէս Խորենացու [1]), արդէն 193—214 թուականներին Ք. յետոյ յարձակումն են գործել Հայաստանի վերայ և այսպիսով արդէն III-րդ դարում շփում են ունեցել հայերի հետ։ Այս երկու ազգերի մէջ ևս շարունակւում են յարաբերութիւնները, որը հաստատւում է ի միջի այլոց X-րդ դարու Արաբ պատմաբան Իբն Հաուքուսի հետևեալ խօսքերով՝ «Խազարները շորերի համար սեփական պատրաստութեան նիւթեր (матеріи) չունեն. նրանք գնում են այդ բոլորը Վրաստանից, Հայաստանից եւ Բիւզանդիոնից» [2])։

Ռուսները մի կողմից, իսկ թաթարները միւս—դարերի ընթացքում բոլորովին նուաճեցին թէ խազարների և թէ բուլղարների երկիրները և հիմնայատակ արին նրանց քաղաքները. այդ պատճառով էլ նրանցից մեզ շատ քիչ յիշատակարաններ են մնացել։ Բուլղարների մայրաքաղաքը այժմ աւերակ է դարձած և մօտը ռուս-թաթարական Ուսպէնսկոյէ գիւղն է տեղաւորուել։ Եղած պեղումներից շատ հետաքրքրական կտորներ տեղաւորուած են Ղազանի թանգարանում. նրանց մէջ ես տեսայ հայկական և պարսկական դրամներ, որոնք կարող են նոյնպէս ապացոյց լինել բուլղարների հայերի հետ ունեցած առևտրական յարաբերութիւնների մասի։ Նոյն Մեծն Բուլղար քաղաքի աւերակների միջին գտնուել են նաև գերեզմանաքարեր հայերէն գրութիւններով. սակայն XIV-րդ դարու առաջին կիսից առաջ փորագրուած արձանագրութիւններ այնտեղ չեն գտնուած։ Թովմաս, Օշին, Վարդ, Օսէփ, Անտոնիոս և այլ անուն ազգանունները, որոնք յիշւում են այդ տապանաքարերի վերայ, կարող են պատ-

---

[1]) Տես Մ. Էմինի 279 ծանօթութիւնը «История Арменіи Моисея Хоренскаго» թարգմանութեան յաւելուածում։

[2]) Տես Бережновъ. О торговлѣ Руси съ Ганзой до конца XV в. (Записки Истор.—фил. фак. СПБ. и. у. 1878 г.)

կանել կամ այն հայերին, որոնք հայոց մեծ գաղթականութեան միջոցին և անմիջապէս յետոյ եկած այդտեղ բնակուած լինեն, և կամ՝ ի վաղուց հետէ այդ քաղաքում գոյութիւն ունեցող հայ վաճառական գաղութի անդամներինը լինեն. ո՞վ գիտէ [1]):

Թէ բուլղարները և թէ խազարները ռուսների հետ ամենակենդանի առևտրական յարաբերութիւնների մէջ էին և ոչ միայն իրանք էին գնում իրանց ապրանքներով Սուդաղ կամ բուն Ռուսսիայի քաղաքները, այլ և իրանք ռուսներն էլ գալիս առևտուր էին անում բուլղարների և խազարների մայրաքաղաքներում։

Այստեղ ռուսները պէտք է պատահէին և հայ վաճառականներին, իսկ վերջիններս բուլղար և խազար վաճառականների քարավաններին միանալով անցնում էին իրանց ապրանքներով Ռուսսիա և Ղրիմ։ Մաստաւորապէս կարելի է ասել, որ հայերը բերում էին Հայաստանից և առհասարակ Արևելեան երկիրներից պատրաստի ձեռագործներ, շորեղէններ, պճնասիրութեան առարկաներ, գուցէ և գինի, ձի, տաւար, զէնքեր. փոխարէնը ստանում էին Ռուսիայից՝ մեղր, մեղրամոմ և մանաւանդ ամենտեսակ կաշուեղէն և մորթի։ Սկզբում հայերը ստիպուած էին երկրորդական և երրորդական միջնորդների դեր խաղալ, որովհետև, ինչպէս այդ նկատում է Սուբբոտինը՝ «բուլղարները չէին թողնում արաբներին և այլ արևելեան վաճառականներին, որ գան Ռուսսիա, վախեցնելով նրանց զանազան պատմութիւններով սպանիչ կլիմայի մասին և այդ երկրի վայրենի բարքերի մասին, իսկ իրանք այդ միջոցին իրանց, իբրև միջնորդների, ձեռներում էին կենդրոնացնում ապրանքները»։ Բայց յետոյ—ասում է նոյն հեղինակը—ռուսները արդէն անմիջական առևտրական կապեր հաստատեցին Ասիայի հետ... իրանք ռուսները Ասիա չէին հասնում, այլ լողում էին միայն Վոլգայով, իսկ

---

[1]) Տես С. М. Шпилевскій. Древніе города и другіе Булгаро-татарскіе памятники въ казанской губерніи. Казань 1877 г.

Վոլգայից յետոյ փոխանակութիւնը յանձնում էին պարսիկներին, յոյներին, հրէաներին և ուրիշ միջնորդներին»։ Ռուսների անմիջական յարաբերութիւնները Ասիայի ազգերի հետ սկսուել են շատ վաղ. IX-րդ դարու արաբացի պատմաբան Խոռդադբէի ասելով, նա ռուսներին տեսել է իրանց կարաւաններով մինչև իսկ Բաղդադում։ Պրոֆ. Կլիուչևսկու կարծիքով այդ յարաբերութիւնների սկիզբը դրուած պէտք է լինի արդէն VIII-րդ դարում. դրան մասամբ ապացոյց կարող են ծառայել Դնէպրի շրջանում գտնուած արաբական և պարսկական դրամներն, որոնք VII-րդ, VIII-րդ և IX-րդ դարերից են [1])։

Բայց ռուսները արևելեան ազգերի հետ եղել են ոչ միայն վաճառականական, այլ և պատերազմական յարաբերութիւնների մէջ, որոնցից առանձնապէս յիշատակւում են—Թաթարստանի և Բէրդուայի վերայ արած արշաւանքները, որի միջոցին ռուսները պէտք է ծանօթանային այս կողմերի ժողովուրդների հետ՝ պարսիկների, արաբների, հայերի, վրացիների և այլոց հետ։ Այդ արշաւանքների ժամանակ հայերն էլ առաջին անգամ լսեցին ռուսների կամ ռուզիկների մասին, և մինչև իսկ ընդհարում ունեցան, քանի որ Թաթարստանում և Բէրդուայում հայեր են եղել։ Զանազան պատմագիրների ասելով ռուսները առաջին անգամ արշաւել են դէպի Թաթարստան (Կասպից ծովի հարաւային եզերքը, Ռէշդի և Աստրախանի մէջ տեղում) մօտաւորապէս 880 թուականին, երկրորդ անգամ արշաւում և աւերում երկիրը 909 թ., չորս տարի անցած յարձակւում են երրորդ անգամ, իսկ 943 թուին չորրորդ յարձակումը գործելով՝ պաշարում են Բէրդուայ քաղաքը [2])։ Այս չորրորդ արշաւանքի մասին հաղորդում է մեզ նաև Մովսէս Կաղանկատուացին [3]), որի ծննդավայրը հէնց

---

[1]) В. Ключевскій. Курсъ Русск. исторіи. ч. I, стр. 146—147.

[2]) Այս արշաւանքների մասին տես՝ Б. Дорнъ. О походахъ древнихъ русскихъ Табаристанъ. СПБ. 1875 г. (приложеніе къ XXVI тому записокъ Имп. Акад. наукъ).

[3]) Մ. Կաղանկատուացի՝ Պատմութիւն Աղուանից։ Տես նոյնպէս Н. О.

այդ կողմերումն է եղել։ Նրա ասելով ռուսները վեց ամիս մնացել են քաղաքում, իսկ մի պարսիկ հեղինակի ասելով՝ ռուսները ոտնատակ են արել նաև Հայաստանը [1]։ Մի այլ անգամ էլ ռուսները եկել են Հայաստան պատերազմական նպատակով, որի մասին պատմում են մեր X—XI դարու պատմաբանները՝ Ա. Լաստիվերտցին և Ս. Ասողիկը։ Ռուսները եկած են եղել Յունաց Վասիլ թագաւորի հետ և «էին— ասում է Ասողիկը—նոքա արք հետեակամարտք, նիզակ և ասպար ի ձեռս նոցա, զորս էր խնդրեալ թագաւորին Վասլի ի թագաւորէն Ռուսաց, յորժամ ետ զքոյրն իւր կնութեան նմա, յորում ժամանակի և հաւատացին նոքա ի Քրիստոս [2]։ Այս բոլորը ես մէջ եմ բերում ցոյց տալու համար նախ, թէ երբ, որ ժամանակ հայերը ծանօթացել են «հիւսիսային նոր ժողովրդի՝ ռուզիկների» հետ. և երկրորդ, որ հայերը, ծանօթանալով ռուսների հետ, պէտք է աշխատէին նրանց հետ անմիջական առևտրական կապեր հաստատելու և բուլղարների միջնորդութիւնը հեռացնելով—անմիջապէս Ռուսսիա երթալու։

Մ. Բ.

(*Միւս անգամ*)

Эминъ. Изслѣдованія и статьи по армянск. Миѳологіи М. 1896. էջ 158—164. *Նոյնպէս՝ Պատմութիւն Ազուանից, Մ. արքեպ. Մամբռեանի, էջ* 173.

[1]) *Նիզամի* († около 1202, 3 года)—Expedition d'Alexandre le grande coufre les Russes: Entrait de l'Alexandre'ide ou Iskèndèr Name' de Nisamy. „... tu verres, sous peu d'anne'es. les Russes portes leurs ravages en grèce et en Arme'nie" *կամ* «... foulera aux pieds toute la grèce et l'Armenie» (Дорнъ).

[2]) *Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան պատմութիւն Տիեզերական. ՍՊ. 1885. էջ 276—277.*

ՀԱԼԱԾՈՒԱԾՆԵՐԸ

Անցնում են... անցնում—լուռ, կորաքամակ,
Արցունքն աչերին, ամխ մերկ ու վտիտ.
Հայեացքը այրող, դէմքը դժնդակ,
Ծպիտը թունոտ, զգացմունքը բիրտ։

Եւ հազարաւոր... անցնում են, անցնում...
Ինչպէս փրփուրը վազող ջրերի.
Բայց թէ ո՞րտեղից և ո՞ւր են գնում...
Է՜հ, այդ հոգը չէ—անհոգ մարդերի։

ԽԵՆԹ

ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՒԵՐԱԿՆԵՐԸ [1])

(Կ. Ա. ԼԷՕՆՏԻԵՎԻ)

(Նուէր բազմավաստակ ծարտ. Թ. Թօրամանեանին)

Հայաստանում քրիստոնէական դարեշրջանի ծաղկեալ արուեստը համարւում է բիւզանդական արուեստի ճիւղ, որ յետագայում տեղական պայմանների ու ներքին ազդեցութեան շնորհիւ, ընդունեց ինքնատիպ ձևակերպութիւն: Քրիստոնէութիւնն ընդունելու ժամանակ Հայաստանն անկախ էր, յետոյ շուտով նա կռուի ասպարէզ դարձաւ յոյների և պարսիկների մէջ, վերջն էլ Մարակինոսների: Երկար խռովութիւններից յետոյ նա մի ժամանակ հանգստացաւ Բագրատունիների իշխանութեան ներքոյ, սակայն շուտով նրա համար նորից հասան խառնակութեան օրեր: Քրիստոնէութիւնն ընդունելով Բիւզանդիայից, հայերը փոխառան և նրանց եկեղեցական ճարտարապետութեան ընդհանուր ձևերը: Հայաստանի հնագոյն տաճարները դեռ ևս կրում են բիւզանդական ազդեցութեան հետքեր, բայց VII դարից սկսած այդ ազդեցութիւնը կորչում է և սկսւում արդէն մշակուել ազգային ոճ: Հայկական առաջին տաճարներն եղել են փայտաշէն, որի համար կան մինչև անգամ պատմական փաստեր: Այսպէս օրինակ Վարդան պատմագիրն յիշատակում է Կարսում եղած հայոց փայտաշէն եկեղեցին, որ յունաց Ռոմանոս կայսրն այրեց: Բացի դրանից Ֆրանց Կուզլերն իր «Ձեռնարկ արուեստից» գրքի մէջ հայ եկեղեցիների դրսի օրնամենտների դետայլներից եզրակացնում է, որ դրանց նախատիպ ծառայել են աւելի հին փայտէ կերտուածներ:

Հայկական ոճի տաճարները, անկախ շինութեան ժամա-

---

1) Լումայ 1909 № 1.

նակից, իրանց յատակագծի համաձայն կարելի է երկուսի բաժանել։ Մէկ մասը Բիւզանդական VI—VIII դարի եկեղեցիների պէս ներկայացնում են հաւասարակողմ խաչաձև՝ մէկ գմբէթով մէջ տեղի մասում։ Միւսները բազիլիկաձև՝ հետը միացրած գմբէթի սիստեմը։ Իւրացնելով այս երկու ձևերը, հայ ճարտարապետութիւնը զարգացրեց նրան մօտեցնելով (ձևակերպելով) ազգային ոգուն, փոխ առնելով միևնոյն ժամանակ Սասանեաններից և արևմտեան եւրոպականից։ Այսպէս շինարարութիւնն աստիճանաբար առաջ գնալով հասաւ մինչև XII—XIII-րդ դարերը, այնպիսի ճարտարապետական ոճի համաչափ ներդաշնակութեան և ինքնատիպ—նրբութեան, որ նա իսկապէս տրժանի է առանձին տեղ գրաւելու։

Հայկական հին թագաւորանիստ քաղաքը շինուած էր Ալաճայի առուակի Արփաչային (հայերէն Ախուրեան) խառնուելու տեղում, այժմեան Երևանի նահանգում [1]։ Լեռնադաշտը, որի վերայ են աւերակները, վերջաւորւում է համարեա բարձրաբերձ ուղղահայեաց պատերից ձևացած անդնդախոր ձորերով, որոնց միջից աղմկալից թաւալում են իրանց կոհակներն Ախուրեանն ու Ալաճա տառուակը։ Բուսականութիւնն այստեղ բոլորովին բացակայում է, որ նպաստում է բնութեան խստանալուն. շուրջը—հեռւում երևում են լեռների ահեղազանգ բարդեր։ Պատկերը կարծես աւելի տխուր է երևում բազմաթիւ աւերակների պատճառով։ Նրա ամբողջ հիւսիս-արևմտեան մասը պաշտպանուած է պարիսպների ահագին բարձրութեան պատերով և կիսաբոլոր հսկայական աշտարակներով։ Պատերն ու աշտարակները երեսած են սրբատաշ, ժամանակից գունաթափ գորշացած տուֆով։ Տեղտեղ պատերի վերայ սև տուֆից հաղցրած են հսկայական խաչեր, որը շատ գեղեցիկ պատշաճում է պատի ստուերին։ Քաղաքի մուտքն են տանում մեծամուր և գեղատեսիլ դարպասները, որոնք նայողի երևակայութիւնը փոխադրում են այն ժամանակները, երբ մեր կարծիքով,

---

1) Հեղինակը սխալւում է։ Անին գտնւում է Երևանի և Կարսի նահանգների սահմանագծի վերայ, Կարսի նահանգում մի քանի պաշտօնական հաստատութիւններ երկու նահանգի համար գտնւում են Երևանում, երևի այդ է սխալեցրել։ Ծ. Թ.

ամենասովորական շինութիւնները ճարտարապետների ձեռքի տակ ընդունում էին մօնումենտների տեսք։ Դարպասի կպած պատը զարդարուած է մէջը հագցրած առիւծի բարձրաքանդակ պատկերով, որի բնոյթը իրաւունք է տալիս համարելու այդ, Անին XI դարում տիրող պարսիկների գործ։ (Պարսկական առիւծը բաշով է լինում, Անիի դարպասի առիւծը բաշ չունի, բացի դրանից, այդ առիւծը ներկայացնում է մի խաչի պատուանդան։ Թ.)

Մինչև մեր ժամանակները հասած (մնացած) շինութիւնների մեծագոյն մասը, աննշան բացառութիւնով, պատկանում են եկեղեցական շինութիւնների։ Սկսենք մեր տեսութիւնը Անիի գլխաւոր մայր տաճար Աստուածածնի աւերակներից։ Բացի գմբէթից և նրա տակի գլանից, որոնք քանդուած են, նա այնքան լաւ է մնացել, որ բաւականին լաւ տպաւորութիւն է տալիս։ Ինչպէս ենթադրում են, այդ տաճարի շինութիւնն սկսուել է Սմբատ Բագրատունի թագաւորի օրով 980 թուին, իսկ աւարտուել է նրա մահից յետոյ։ Բացի դրանից, տաճարի շինութեան թիւը ճիշտ որոշելու համար, կարող է ծառայել հարաւային մուտքի վրայի արձանագրութիւնը, որը հայկական տարեթուի փոխարկելուց, տալիս է մեզ փրկչի 1033 թուականը։ 1830—40 թուերին Աստուածածնի տաճարը վերջնականապէս կողոպտուեց։ Իւր ժամանակին նա համբաւուած էր իր հարստութիւններով։ Մէջ տեղից կախուած էր թանգագին 12 լիտրանոց ջահ, որի մէջ լցնում էին նոյն չափով ձէթ։ Ծածքը պսակուած էր մարդաչափ արծաթէ խաչով, մահմեդականները յետոյ տաճարը փոխարկելով մէչէդի, խաչն էլ փոխեցին կիսալուսնի։ Տաճարի բարձրութիւնը 92 ոտնաչափ է (13 սաժէն 1 ֆուտ), գմբէթի գլանի տրամագիծը 28 ոտնաչափ (4 սաժէն)։ Տաճարը մեզ չի հասել իր սկզբնական դրութեամբ, որովհետև XII—XIII դարերում ենթարկուել է փոփոխութիւնների։ Գմբէթի գլանը բռնուած է չորս հաստահեղոյս մոյթերի (պիլոնների) վերայ, որոնք թեթևացրած են մոյթի յատակագծի վերայ գծած սիւնիկներով։ Խորանը կիսաբոլոր, ներսից զարդարած փոքր վայելուչ կամարով որի թևերի անկիւններում, հնումն հաւանական է պահուում էին սրբերի պատկերներ։ Արտաքինից,

չնայելով գլանի և նրան պսակող գմբէթի բացակայութեան, տաճարը գեղեցիկ տպաւորութիւն է թողնում։ Պատերի վրայի աղեղները բարեձև, եղեգնի պէս բարակ սիւներով, նեղ երկարձև լուսամուտները շրջանակուած օրնամենտներով, նիշերը՝ որոնց կատարի վրայ դրուած են դիցարանական մի տեսակ թռչուններ, կորուած քարից՝ դեկորատիւ արուեստի դիտակցութեան ամեն հմտութիւնով, ակամայ բևեռում են իրանց վերայ նայողի ուշադրութիւնը։ Առանձնապէս ապշեցնում է այստեղ՝ ազատ վարմունքը համաչափութեան հետ, որ թոյլ էին տալիս իրանց հայ ճարտարապետները. օրինակ հարաւային ճակատի ուղիղ մէջ տեղից ձախ կամարներն երեք են, այն ինչ աջից նրանք դրուած են չորս հատ։ Չը նայելով ճակատների հաւասարութեանը, համաչափութիւնից հեռանալը առաջին անգամից նկատելի չէ։

Յետոյ պէտք է կանգ առնել Պահլաւունիների տոհմական ս. Գրիգոր եկեղեցու վերայ, որ շինուել է X դարի վերջում և մինչև այժմ լաւ պահպանուել է։ Ցատակագծով այս եկեղեցին ներկայացնում է բոլորշի ձև, որի շրջանակի վերայ դտնուում են վեց կիսաշրջանների կեղրոնները. նրանցից մէկի մէջ տեղաւորուած էր բեմը, իսկ միւսում ելքը (դուռը)։ Դրսից վեց աբսիդներին պատասխանում են վեց հաւասար կողմեր։ Գմբէթի գլանը բոլորաձև է, կամարով և լուսամուտներով շրջապատուած զոյգ գլանաձև սիւնիկներով։ Եկեղեցուն կից շինուած էր տոհմական գերեզմանոց, որ մինչև մեր ժամանակները չհասաւ։ Այս եկեղեցին հետաքրքիր է իւր առանձնայատուկ յատակագծով, դրսից այնքան էլ հետաքրքիր չէ։

Թագաւորների ժամանակ շինուած եկեղեցիների թուից, բացի վերև յիշուածները, միւսներից լաւ մնացել են էլի երկու եկեղեցի։ Նրանցից մէկը — Առաքելոց եկեղեցին, դատելով իր վրայի մի արձանագրութիւնից, գոյութիւն ունէր դեռ XI դարու սկզբում։ Առաքելոց եկեղեցու յատակագիծը խաչաձև է, զարդուքանդակները որոշւում են առանձնայատկութիւններով և ձևերի խստութեամբ։ Իսկական եկեղեցուց շատ քիչ բան է մնացել. լաւ պահպանուել է գաւիթը, որի շինութիւնը հաւանաբար պիտի վերագրել XIII դարին։ Նատերն Առաքե-

լոց եկեղեցուն կից շինութիւնն համարում են մատենադարան։ Այդպիսի ենթադրութիւնը սակայն չի բացատրում այն հնարաւորութեան, որ եկեղեցու գաւիթը մի ժամանակ ծառայել է մատենադարանի պիտոյքների համար։ Առաքելոց եկեղեցու և շատ յետոյ կառուցած գաւթի շինութեան բնութիւնը ցայտուն կերպով ջոկւում են իրարուց։ Այստեղ մենք տեսնում ենք կատարեալ հակասութիւն՝ առաջինի պարզ և խիստ օրնամենտացիի և երկրորդի բազմահարուստ զարդաքանդակների մէջ, մինչև անգամ շինութեան նիւթն ու շարուածքը բոլորովին ուրիշ են։ Գաւիթը շինուած է ոչ ուշ 1263 թուից, ինչպէս երևում է այդ նրա վրայի ամենայետին արձանագրութիւնից։ Այդ ժամանակ Անի քաղաքը գտնւում էր մուսուլմանների իշխանութեան ներքոյ։ Դրա համար էլ նկարագրուած շինութիւնը կառուցուել է արաբական ճարտարապետութեան ազդեցութեան տակ։ Կամարների բնոյթը, մուտքի վրայի ստալակտիտները—բոլորը ցոյց են տալիս մեզ այդ ազդեցութիւնը։ Բայց դա նկատելի է միայն մի քանի մասերում, մնացածով այդ գաւիթը կարող է ծառայել իբրև հարուստ օրինակ հայ ճարտարապետութեան։ Ֆասադի վերայ շատ գեղեցիկ և գանազանակերպ կատարած են նիշերը։ Առանձնապէս շատ նշանաւոր է քանդակագործութիւնը, որն ըստ երևոյթին կամեցել են այնպէս անել որ նայողին ապշեցնեն։ Այս յուշարձանի վերայ մենք պարզ տեսնում ենք արուեստների փորձը ի մի ծուլել երկու ոճ և այդ, պիտի խոստովանել, կատարելապէս յաջողուել է։ Մինչև անգամ չի կարելի ասել, որտեղից է սկսւում հայկական ոճը և որն է փոխառած։

Վերջապէս պիտի յիշել Փրկչի եկեղեցին, որ շինուած է մօտ 1036 թուին։ Ցատակագծով նա ներկայացնում է բոլորշիութիւնը աբսիդներով։ Դրսից այս եկեղեցու բարձրութիւնը կարելի է երեքի բաժանել. վերևի երրորդը կոնուսաձև գմբէթ, միջինը գլանաձև, ներքևի մասը բազմագիծի, գմբէթի գլանից լայն և նրան իբրև հիմք ծառայող։ Ներքևի մասը զարդարուած է զոյգ սիւներների վերայ հանգչած զոյգ-զոյգ կիսաշրջան աղեղներով։ Գլանի վերայ գտնւում են աւելի նուրբ, նոյնպէս

զոյգ սիւնիկներ քանդակագործ աղեղներով։ Վերևի սիւնիկներին իբրև հիմք ծառայում է գոտին, որ կազմուած է շարքով դուրս ցցուած վեցանկիւնիների հիւսուածքով։ Գմբէթի կոնուսը պահող փոքրիկ զարդարուն պսակի (կարնիզի) տակ, տեղաւորած է չափական հարուստ օրնամենտ ֆրիզի ձևով։ Մուտքի դռները շինուած են ատամնտածև պսակներով։ Տաճարի ներսը հարուստ նկարուած է եղել հին և նոր կտակարանի դէպքերով։

Բայց եթէ Անիում թուած եկեղեցիներն էլ չլինէին, այլ մնացած լինէին միայն երկուսը, որոնց նկարագրութեանը հիմայ պիտի մենք անցնենք՝ դարձեալ Անին իրաւունք կունենար ճարտարապետներին ուխտատեղի համարուելու։ Դրանցից առաջինը Գրիգոր Լուսաւորիչն է, որ կառուցուել է մօտ 1215 թուին, քաղաքի պարիսպների մօտ, Անիի բարձրաւանդակի հրապարակում, Ախուրեանի հրուանդանին։ Այս եկեղեցին իր զարմանալի շէնք-շնորհքով, դեսայլների բազմապիսի և զմայլեցուցիչ հարստութեամբ ու մեծաքանակ զարդեցկութեամբ, մեր կարծիքով, կարող է ծառայել ինչպէս կատարելատիպ օրինակ հայկական ճարտարապետութեան։ Լուսանկարները շատ թոյլ են պատկերացնում շինութեան նրբութիւնները։ Գրիգոր Լուսաւորչի եկեղեցու յատակագիծը հայկական եկեղեցիների սովորական կեդրոնագմբէթ տիպից է։ Դրսի պատերը զարդարուած են նրբածև սիւնիկների շարքով, որոնց վերայ հանդչում են քանդակագործ կիսաշրջան աղեղիկներ։ Այն տարածութիւնը, որ սահմանաւորում է աղեղիկների կոզքերի և նրանց վերայից անցնող դծի մէջ՝ լցուած է հիասքանչ և նարմանազուկ օրնամենտներով։ Ոլորահիւս բոյսեր, ֆանտաստիկ թռչուններ ու կենդանիներ ծառայել են իբրև նիւթ ճարտարապետի քանդակներին։ Բաղմանկիւնի գմբէթի գլանը կառուցուած է նոյնատեսակ սիւնիկներով, միայն փոքր չափերի։ Գմբէթի տակի պսակի (կարնիզի) և գլանի աղեղների մէջ տեղից ժապաւինապէս պատած է օրնամենտ, որ շատ դեղեցիկ բաժանում է զանգուածները։ Այդ ժապաւինածև օրնամենտները, հայկական ճարտարապետութեան մէջ ամենանշանաւոր կէտերից մէկն են։

Այդ ոլորահիւս ժապաւէնից աւելի՝ ոչինչ չէր կարելի մտածել գլանի երկարութիւնը և վերի կարնիզի տակի դասարկութիւնը ներդաշնակելու համար։ Դմբէթի բազմադիմի գլանի կողերի քանիսի վերայ տեսնւում են շրջանաձև օրնամենտներով նախշած հաղցրած քարեր, որոնք նման են կնիքների։ Շատ հեատազօտողներ ենթադրում են, որ հայերի մէջ անդրիադարձական արուեստը շատ էլ բարձր աստիճանի վերայ չէ եղել կանգնած։ Դրա համար էլ եթէ հայ շինարարներին պատահում էր ձեռք բերել անդրիադարձական արտադրութիւններ, մեծ սիրով հաղցնում էին իրանց շինութիւնների պատերի մէջ, քիչ ուշադրութիւն դարձնելով, թէ արդեօք հաղցրած անդրիական արտադրութեան սիւժէն համապատասխանո՞ւմ է շինութեան հոգուն։ Առ հասարակ հնութիւններ ուսումնասիրելիս, շատ գեղեցկութիւններ վերագրում են ամեն տեսակ պատահմունքների և սովորաբար չեն ուզում նկատել արուեստների մտառութիւն։ Իսկ մենք մտածում ենք, որ եթէ այդ հայեացքը մի կողմ թողնենք և խոստովանենք, որ հնում արուեստները պարզ նախատեսնում էին էֆֆեկտները և բոլոր միջոցներով ծգտում էին նրան՝ այն ժամանակ հայկական եկեղեցիների պատերում հաղցրած բարձրաքանդակ քարերի դեռեղելը, ապացուցանում է մեզ կառուցողի հմտութիւնը, օգտուել ամեն միջոցներով, իրանց շինութիւններին գեղատեսիլ կերպարանք տալ։ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու արևմտեան պատին կից, վերջերը շինել են դերեզմանատուն և սիւների վերայ բաց դուիթ։

Այդ սիւները ծածկող կամարները քանդակած են բեկբեկող գլանաձև սիւնիկներով (գրանակ—валикъ) և իրանց նախշերի բնոյթով յիշեցնում են հռոմէական ճարտարապետութիւնը։ Սիւների խոյակները, նոյնպէս հարուստ զարդարուած ժապաւինաձև քանդակներով, հանդիպում են հարթ բուներին։ Բուների տակ դարձեալ քանդակներ, բաւական նման բիւզանդական օրինակներին։

Հայկական ճարտարապետութեան մէջ նախատիպ ծառայող որև է արտադրութիւն, շատ ուսումնասիրելուց յետոյ միայն կարելի է ցոյց տալ, իսկ պատկերաղրութիւնը՝ թուու-

ցիկ հայեացքով էլ կարելի է հասկանալ, որ չէ ունեցել ինքնուրոյնութիւն։ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու ամբողջ ներսը նկարած է ֆրէսկներով, որոնք պատկերացնում են հայերի եկեղեցական պատմութեան դէպքերը. դրանց անճաշակ կերպով բիւզանդական օրինակներից պատճէները իսկոյն աչքի է ընկնում։

Անցնենք այժմ երկրորդ նշանաւոր եկեղեցուն, նոյնպէս ընծայուած Գրիգոր Լուսաւորչի անուանը։ Այս փոքր և զողրիկ եկեղեցուց այժմ մնացել են միայն բեկորներ, որոնք հիմա պահպանուում են Անիի թանգարանում։ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին բաց է արել պրոֆ. Մառը 1893 թ. պեղումների ժամանակ։ Պատերի հիմքերը փառաւորապէս մնացել են, այնպէս որ էլ յատակագիծը կասկած չի վերցնում, իսկ զարդերի ամբողջ մնացած բեկորները, անցեալ տարի հնարաւորութիւն տուին պարիզեան նարտարապետ Թորամանեանին կազմել վերանորոգութեան նախագիծը։ Բացի դրանից երբ նկարագրածս եկեղեցին շինում էր, կամարների բոլոր քարերը ջոկ ջոկ, ամբողջ ֆասադի տարածութեամբ, հայկական այբուբենով նշանակած են եղել, հերթով շարելու համար։ Այսպիսով այլ ևս տեղիք չմնաց կասկածների, այլ պիտի միայն նկարուեր բեկորներից և տեղաւորել ֆասադի վերայ նշանակած տեղում։ Վերջապէս այդ եկեղեցու արտաքին բնոյթը հասկանալու համար, կարելի է դատել քարից կարած այն կաղապարից, որ հանդչած է եղել մի որ և է կենդանու թաթերի վերայ և ծառայել է իբրև ֆասադի զարդ։

Արդէս դի լրացնենք Անիի եկեղեցական շէնքերի համառօտ տեսութիւնը, թուենք նաև մի ջնարերդի եկեղեցին, Լուսանաց վանքի մատուռը, Աբրահամ վարդապետի շինած եկեղեցին և վերջապէս Ախուրեանի ափի փոքրիկ մատուռ—խցիկը։ Այս եկեղեցիները նոյնպէս շատ հետաքրքիր են, բայց որովհետև իրանց տիպով շատ նման են նկարագրած եկեղեցիներին, այդ պատճառով քիչ բան կաւելացնեն Անիի հայկական ոճի բնոյթին։

Այժմ դառնանք ուշրջնական նարտարապետութեան յուշարձաններին։

Անիի ծաղկած ժամանակ, հայերը շատ չէին հոգ տանում իրանց բնակարանների գեղեցկութեանը [1]։ Այդ ցոյց են տալիս պահպանուած աւերակները։ Հնագիտական մասնաժողովը բաց է արել մի ամբողջ տուն, կառուցը բլած, որովհետև փայտէ ծածք է եղել, վերան հողած, ինչպէս այդ մինչև այժմ էլ հայերի մէջ գործածւում է։ Մի քանի սենեակներ կողք կողքի շինուած, առանց որև է յատակագծի, ցոյց են տալիս որ տանտէրը հետզհետէ բնակարանը մեծացրել է ինչքան իրան հարկաւոր է եղել։ Մէկ սենեակից միւսը շատ անդամ անցնում են մէկ երկու աստիճան սանդուխով։ Պատերի վերայ լուսամուտի ծակեր չկան։ Պիտի ենթադրել, որ լոյսը ստացւում էր կտուրի (երդիքի) ծակից-լուսամուտից։ Համարեա ամեն մի սենեակում հողի մէջ թաղուած են կաւէ մեծ թոնիրներ։ Դրանք ծառայել են, թէ սենեակները տաքացնելու և թէ հաց (լաւաշ) թրխելու համար։ Թոնրի յատակը կլցնէին ածուխ և երբ կողերը բաւականաչափ տաքացած կլինէին, կպցնում էին վերան խմորը, դրա համար առանձնապէս յարմարեցրած գրանակով բարակ բանալուց յետոյ։ Նոյն սենեակում կարելի է տեսնել մի ուրիշ (կարաս) խեցի, ուր իներ դար առաջ գինի էր պահւում։

Բայց եթէ Անիում մասնաւոր շէնքերը ճարտարապետութիւնով շատ աղքատ են, մի և նոյնը չի կարելի ասել հասարակական բնոյթ կրող շինութիւնների համար։ Այս շինութիւնները կառուցւում էին նոյն խնամքով, ինչպէս եկեղեցիները։ Բայց տարաբաղդաբար աշխարհիկ շինութիւնների մէջ հայերը չեն մշակել իրանց ազգային ոճը. այդ շատ հասկանալի է։ Եկեղեցական շէնքեր կառուցանելիս շինողները կաշկանդուած էին ազգայնական շաւղի վերայ պահող որոշ աւանդութիւններով, իսկ մասնաւոր բնակարաններ կառուցանելիս, շինողներն ենթարկւում էին տանտիրոջ ճաշակին։ Բոլոր ժամանակների և ամեն երկրների ազնուականութիւնը միշտ առանձին յարգան-

---

[1]) Հայերի բնակարանների մասին առանձին ուսումնասիրութիւն ունի պ. Թորոմանեանը. ըստ նրա հաստատութեան, որոնք հիմնուած են իրական փաստերի և մատենագրների մէջ պատահմամբ եղած ակնարկութիւնների վերայ, հայերի մասնաւոր բնակարաններն ևս եղել են փառաւոր, շքեղ և զարդարուն, ինչպէս եկեղեցիները։ Ծ. Թ.

քով է վերաբերուել դրսինին, այդ պատճառով էլ մենք տեսնում ենք աշխարհիկ շէնքերի մէջ նկատելի փոխառութիւններ արաբական ճարտարապետութիւնից։ Միայն հայերի բնածին ճաշակը պահել է նրանց ճարտարապետութիւնն այն թշուառ դրութիւնից, երբ հասցնում է ստրկական պատճէնելուն։

Անիի ճարտարապետական աշխարհիկ շէնքերից լաւ պահպանուել են թագաւորների պալատը և այսպէս անուանուած կաթողիկոսարանը, այսպէս անուանուած նրա համար ենք ասում, որովհետև դեռ լաւ չի որոշուած դրա նշանակութիւնը։ Այդ պալատն իր զարմանալի բարձր և գողարիկ աշտարակով դեղեցկապէս պատկերանում է առապարի վերայ։ Ամբողջ շինութիւնն իսկապէս կազմուած է մէկ դահլիճից և սիւների վերայ կամարակապ թաղերով ծածկած մի ներքնայարկից։ Ցետադայ ժամանակներում այս դահլիճին կից շինուած է աշտարակն իբրև մինարէ։ Աշտարակի վրայի արաբական արձանագրութիւնը և շէնքի բնոյթը մի քանի հետախոյզների ենթադրել էին տալիս այս շինութիւնը վերագրել մէջիդի, բայց հաւանականն այն է, որ նկարագրած շէնքը սկզբներում նշանակուած է եղել որևէ աստենական տեղի համար, որը կարելի է եղրակացնել դրսի պատերից մէկի վերայի պրոֆ. Մառի կարդացած արձանագրութիւններից։ Այդ արձանագրութիւններն անեցիների համար կամ որոշում են զանազան արտօնութիւններ, կամ հաստատութիւններ. յամենայն դէպս այդ շինութիւնը յետին ժամանակներում է յարմարեցրած մէջիդի։ Բայց շատ դժուար է ապացուցանել, թէ այդ շինութիւնը կաթողիկոսարան չէ եղել, ինչպէս փորձել են մի քանիսը. Ընդհակառակն, աւելի շուտ պալատի դեղատեսիլ տեղադրութիւնն (ողջ Անին աչքի առաջն է) ու շինութեան բնոյթը պիտի բերէին այն մտքին, որ այս շինութիւնն յատկացուած է եղել իբրև բնակարան մի այնպիսի նշանաւոր անձի համար՝ ինչպէս կաթողիկոսն է։ Ներկայիս կաթողիկոսական պալատը յատկացուած է Թանդարանի և այնտեղ հաւաքել են այն ամենը, ինչ որ դուրս է եկել Կայսերական Հնադիտական Ընկերութեան պեղումներից։ Թանդարանի դոյութիւնը պիտի ծառայէ իբրև ապահովութիւն Անիի յուշար-

ծանները կորստից փրկելու ուսումնասիրողների համար և էլ չեն ընկնիլ մի կարգ տուրիստների ձեռքը, որոնք իլանց այլելութեան յիշատակ հետները տանում են՝ քիչ է մնում ասել, սաժէնաչափ քարեր։

Եթէ Անի մտնես հիւսիս-արևելեան դարպասից, ձորից աջ կը տեսնես միայնակ կանգնած աւերակներ։ Դատելով նրա մեծութիւնից և զարդարանքների հարստութիւնից, մեծ հաւանականութիւնով կարելի է ենթադրել, որ մի ժամանակ այդ տեղ բնակւում էին հայկական թագաւորներ։ Հարաւային մասը բոլորովին քանդուած է, արևելեան կողմից լաւ մնացել է պատը դռնով ու լուսամուտով, որաեղից գեղեցիկ տեսարան է բացւում քաղաքի վերայ։ Ձորի կողմը լուսամուտներ չէ եղել։ Պալատի դրսի պատերից, բացի յիշուածից՝ ոչ մէկը չէ մնացել։ Պալատի զարդաքանդակների ընդթին նայելով, նրան կարելի է վերադրել արաբական ոճի, մի քանի տեղական առանձնայատկութիւններով։ Դրան վրայի կամարը կիսաշրջանաձև է, իսկ լուսամուտների վերայինը նեստաձև է։ Ամբողջ պատի տարածութիւնը վերևում լուսամուտից և ներքևում դռնից սկսած զարդարուած է շրջանակի մէջ։ Այդ եղերաւորուած միջոցը, ներքևի մասում ծածկուած է նախշունիկ աստղերով և խաչիկներով, որոնցից մէկը սև միւսը կարմիր տուֆից է շինուած։ Պիտի նկատել, որ այդ զարդերի ընդհանուր ձևը միատեսակ է, բայց դետայլները որոշւում են բազմապիսի զանազանակերպութեամբ։ Աւելի լաւ պահպանուել է թաղերով ծածկուած ներքնայարկը, բայց դա ճարտարապետական տեսակէտից առանձին ոչինչ չունի։ Լուսամուտներ բոլորովին չկան, բնակարանները միանում են իրար հետ փոքր դռներով, արձանագրութիւններ, զարդեր նոյնպէս չկան։ Պալատի հիւսիսային կողմը ժամանակով կարելի էր տեսնել մի զինուորի անդրիադարձ պատկերը, (աւանդութեամբ Սմբատ II Բագրատունու) որի գլուխն հիմա չկայ։ Այդ արձանը մեզ չյաջողուեց տեսնել, որովհետև ինչպէս ասում են 1845 թուին Անիից նրան տարել են Պետերբուրգ։

Անի քաղաքի մեր թռուցիկ նկարագրութեան ի լրումն, պիտի ասենք նաև հայկական շէնքերի տեխնիկական կողմերի

մասին։ Անիի բոլոր շինութիւնները շարուած են երկու տեսակ տուֆ քարից, կարմիր-ապիւսագոյն և մութ թուխ, համարեա սև։ Առաջինից շինուած են դրսի երեսնոցները, պատերի ներսի կողմը սև տուֆից են շինուած և սուազած են շատ բարակ սուազի շերտով։ Սուազը ժամանակից և շինուելու միջոցին ալեբաստրի հետ շատ տրորուելուց դառել է ասկորի նման։ Այնտեղ, ուր հարկաւոր է եղել նուրբ ու բարակ փորագրութիւն, գործածել են կարմիր տուֆ, իսկ սև տուֆը գործածել են շինութեան հասարակ մասերում։ Մասնաւոր տները կաւով են շինած եղել, դրա համար էլ նրանցից ոչինչ չէ մնացել։ Աւելի հաստատուն շինութիւնները կրով են շինուած եղել և բաց տեղերից կարելի է եզրակացնել, որ պատերի կողերին շարած են եղել սալեր, տեղ-տեղ երեք վերշօկից ոչ աւել։

Այդ տեսակ կողքի վրայ շարած քարէ տախտակների մէջ, լցնում էին բեկորներով (խոշոր խիպարով)։ Շնորհիւ այն բանի, որ այս կողմերի կիրը շատ լաւ տեսակի է և մինչև անգամ հիդրաւլիական յատկութիւն ունի և բացի դրանից ամէն մի քար բոլոր կողմերից ծածկուած է շաղախով, բոլոր պատերն իրանցից ներկայացնում են միապաղաղ զանգուածներ։ Հետաքրքիր է Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու մօտի դամբարանի թաղը։ Այդ ծածքը մեզ ցոյց է տալիս, որ հայերին ծանօթ էր բետոնը ի հարկէ կրից։ Ծածկի ներսի երեսը պատած է կարմիր տուֆի վերշօկ ու կէս հաստութեան քարէ տախտակներից, իսկ դրսի երես կազմուած է կրի հետ խառն մանր քարերից, բետոնի կեղևի նման։

Անիի եկեղեցիների ամենազարմանալին այն է, որ ամենուին տաքացնելու նշաններ չեն երևում։ Միթէ այն խիստ ծմեռներին, որ սովորական են այս կողմերում և եկեղեցիների ահռելի մեծութեանը, հայերը կառավարում էին առանց տաքացնելու։ Բայց այդ ենթադրութիւնը կհակառակէր անեցիների քաղաքակրթութեանը, որն երևում է ուրիշ դէպքերում։ Այսպէս դեռ երևում են սալայատակած փողոցների հետքերը. փողոցի մէկ կողմը միւսի հետ տեղտեղ միացուցած են սալաքար անցքերով։ Քաղաքում կար չրանցք։ Երևում են երկու կամուրջների աւե-

բակներ, որոնք մեր ժամանակներում էլ յաւ կհամարուին, նայելով իրանց կօնստրուկցիայի համարձակութեանը և կառուցման գեղեցկութեանը։ Յետոյ Անիում հ. Ղևոնդ Ալիշանի ասելով դետի յատակի տակից եղել է գետնափոր անցք (tounelle) Լօնդոնի տունէլի նման, միայն նրանից 800 տարի առաջ կանխած։

Եւ ահա, երբեմն ծաղկեալ քաղաքը բազմաթիւ յուշարձաններով, ընկած է այժմ աւերակ և տրամապրում է նայողին տխուր խոհերի։ Հայերը, որ մօտերս Պարիզում կառուցին Թանկագին եկեղեցի, մի կոպէկ չեն տուել իրանց հայրենիքում ճարտարապետական հիասքանչ յուշարձանների վերականգնելուն։ Այդ ևս առաւել զարմանալի է, որովհետև Անիում երկու եկեղեցիներ կան, որոնց մէջ այժմ էլ կատարւում է ժամերգութիւն և նրանց վերականգնելու համար այնքան էլ մեծ ծախսեր հարկաւոր չեն։

Կ. Բ.

ՍԵՒ ՕՐԵՐԻՑ

Այդ օրն երկինքը մրոայլ ու տրտում
Փարուեց մայր երկրին ամպրոպ թեւերով.
Նա զայրոյթ ու վիշտ, հուր-գեհեն սրտում,
Իսկ երկիրն հանգի՞ստ փրոուած անխրոով:

«Երկի՛ր, ֆա՛ր երկիր», երկինքը գոռաց,
«Մինչեւ ե՞րբ այդպէս պիտ մընաս մեռած
«Ե՛ս եմ լաց լինում, երբ ֆեզ եմ նայում,
«Իսկ դու չե՞ս խեղդւում այդ լացի ծովում».

—Զուր ես զայրացել, երկիրը ժրպտաց,
Չէ՞ որ այդպէս է սահմանել Աստուած,
Որ երեկ երգ-կեանք, իսկ այսօր հուր-բոց.
Վաղը խրնդութիւն, մի այլ օր լաց-կոծ...

ԿԱՅԾ

ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷՋ

ՐՕԶԵԳԷՐԻ

Առաջին կիրակի 1897 Թ.

Ընդունեցէք ողջոյնս, Թանկագին բարեկամներ և խնդացէ՛ք, խնդացէ՛ք, խնդացէ՛ք։

Ես էլ կմիծաղեմ, երբ կվերջանայ այս նշանաւոր տարին, որի առաջին երկու օրերը յաւիտենականութիւն են թւում ինձ։

Իսկ այս վայրկենիս ես այնքան էլ տրամադրուած չեմ ծիծաղելու։ Վեց տարի գրչով աշխատելով ձեզ հետ, ես չգիտէի էլ, թէ ինչ բանի մէջն է կայանում իմ կոչումը. այժմ միայնակ որոնում եմ նրան, շրջմոլիկ ցուպը ձեռիս և յոյս ունիմ գտնել. իսկ հետևեալ նոր տարուայ նախօրեկին ես կերեւամ ձեզ զարհուրելի տեսքով, եղանը ձեռքիս... սակայն մինչև այդ՝ նստած եմ գիւղական հիւրատանը, Սուզէն գիւղում, և գրում ձեզ առաջին նամակս։ Երեկ ինձ արտաքսեցին արդէն գիւղական երկու բակից, ուր ես դնացել էի վարձուելու մշակութիւն անելու համար։ Մի տեղ շրջմոլիկի տեղ ընդունեցին ինձ և դուռը շրխկացրին վրաս։

Երկրորդ բակում, երբ ես գլխարկս վերցնելով հարցրի մի փոքրահասակ, հասակիկ, բռնկուող տանտիրոջ, թէ արդեօք վարձուորի կարիք չունի՞, նա զարմացմամբ նայեց ինձ։ Յետոյ յանկարծ փեշերս բռնեց և հարցրեց, թէ այս չէ՞ արդեօք իմ եղանը և ընդունակ իմ արդեօք աշխատելու այդպիսի սպիտակ ձեռներով։ Ես չը զայրացայ, այլ միայն խնդրեցի, որ փորձի համար ընդունեն ինձ և անցագրի փոխարէն ցոյց տուի զինուորական ծառայութեանս վկայականը, ուր գրուած էր, որ ես պահեստի սպայ եմ։

—Իսկ ինձ պէտք կլինէր անասնապահ,—ծաղրեց գիւղացին—Ահա մի չիմարը դաշ։

Գործը դարանով էլ վերջացաւ։

Վաղը ես պիտի շարունակեմ ճանապարհս։

Այս գիւղական հիւրասաւունը տանելի կլինէր, եթէ զոնէ դինին փոքր ինչ լաւ լինէր և եթէ այնտեղ ստանալիս լինէին մեր «Կոնտինենտալ փոստ» լրագիրը...

Հարևան սեղանի վրայ ամբողջ երկու ժամ դրուցատրում են հորթը ծախելու մասին։ Որպէս նոցա դասակարգի ապրդայ անդամ, ես ականջ եմ դնում նոցա խօսակցութեան, բայց ամբողջովին չեմ հասկանում նրանց ասածը. մի շաբաթից գարձեալ կգրեմ։

ՀԱՆՍ ՏՐԱՈՒՏԵՆԴՈՐՖԵՐ

«Կոնտինենտալ փոստի» հրատարակութեան տնօրէն։

Այս տիտղոսս պահպանեցէք մինչև հետևեալ տարին։

—

Երկրորդ կիրակի

Արժանամեծար պաշտօնակից Մէյեր

Մի կարծիր, թէ գիւղական կեանքից ֆէլիէտօններ կուղարկեմ քեզ։ Մտքովս էլ չի անցել գիւղատնտեսական թղթակցութիւններ գրել։

Ուղարկում եմ քեզ միմիայն տխուր տեղեկութիւններ մի մշակի դժբաղդ պատահարների մասին, որ տեղ է որոնում իր համար։

Երկուշաբթի և երեքշաբթի դիմեցի առնուազն տասներեք դիւղացու։ Ես կարծում էի, թէ տասներեքերորդը այնքան դժբաղդ կլինի, որ կընդունի ինձ։ Սակայն նորա մօտ էլ պահապան հրեշտակ դտնուեցաւ։ Տեսնում ես, ես արդէն իմ մտքերն սկսում եմ յարմարեցնել ժողովրդականութեան, բայց ըստ երևութին ինձ քիչ է օգնում այդ։ Մէկին ես խիստ բարեկազմ եմ թւում, երկրորդի համար շքեղ եմ հագնուած (հագուստիս վրայ թէև ծակեր կան, բայց կարկատան չկայ, ինչպէս վայել է գիւղացուն). երրորդը շրջմոլիկի տեղ է ընդունում ինձ, որովհետև կապոցիս մէջ հետս ման եմ ածում

իմ ամբողջ զոյքը. չորրորդին դուր չի գալի սպիտակ օձիքս և այլն։ Վերջապէս, մազերս խճճելով, ձեռներս կպրի ու ցեխի մէջ թաթախելով, մտայ մի խրճիթ, ուր տանտէրը հարցրեց թէ ուր եմ գնում։

—Զինուորական ծառայութիւնը աւարտեցի։ Փառք Աստուծու, վերադարձայ գիւղ։ Ուհ, այդ քաղաք ասածդ, այդ ծառայութիւնը։ Մարդ պէտք է իր աչքով տեսնի, թէ ինչ է կատարւում այնտեղ։ Ուղղակի մարդու սիրտը ցաւում է, երբ ձեռքի սովորական աշխատանք չունի։ Աշխատանքը միակ բարիքն է աշխարհում։

Ես կարծում էի, թէ այսպիսի խօսակցութեամբ աւելի լաւ կհասնեմ նպատակիս. բայց սխալուած էի։ Տանտէրը դարձաւ մի պառաւ կնոջ, որ կանգնած էր նորա ետև.

—Լսո՞ւմ ես այս գաւարկաբանութիւնը։ Ով որ գիտէ, թէ ինչ բան է աշխատանքը, այդպէս չի խօսի։

Իսկ պառաւը պատասխանեց. մի՞թէ այսպէս ուշ գիշեր դուրս կանես դորան։

—Թող տօնները մեզ մօտ անց կացնի։ Այնուհետև կտեսնենք։

Ես կարծում էի, թէ կմնամ նրանց մօտ իբրև վարձուոր։

Տօնը լաւ անցկացրինք, բայց հետևալ օրը երևաց, որ ես ոչ միայն բոլորովին ոչինչ չգիտեմ անել, այլ և չէի էլ կարողանում կարդին հասկանալ, թէ ինչ էին ուզում ինձանից։ Տանտիրոջս խօսքով «թէպէտ ցանկութիւն ունեմ, բայց շնորհք չունիմ»։

Ստիպուած էի շարունակել ճանապարհը։

Ես ուղևորուեցի դէպի սարերը, զուարճանալով շքեղ բնութեամբ։ Կայլինգի մօտից գնացի դէպի աջ, դետի ափով, Ալմհայի ուղղութեամբ։ Ճանապարհը ծածկուած էր ցեխով և նոր եկած ձիւնով։ Սովից կիսամեռ հասայ մինչև մի մենակեաց խրճիթ, որտեղ ինչպէս ասել էին ինձ, բնակւում էր մի այրի դեղչկուհի, որ վարձուոր էր որոնում։

Այրին, թարմ, աշխոյժ մի կին, սկսեց ինձ հարցաքննել.

Քանի՞ տարեկան եմ.

—Բսան, ասացի ես, դպրոցում անցկացրածս տասնեհինգ տարին հաշուին չէ—այդ ժամանակը կորած է.

Նա ծիծաղեց, բայց շարունակում էր քննել.

Ի՞նչ կարող եմ կատարել։

—Ոչ մի գործից չեմ փախչում։

Ի՞նչ է իմ դինը։

—Ես ամեն բանով բաւական եմ։

Բայց այս պատասխանը շատ կասկածաւոր թուաց այրուն։ Երևի փորձով դիտէր, որ տան մէջ ծառայողները երբէք ոչնչով բաւական չեն լինում։

—Ահա թէ ինչ—ասաց նա արհամարհանքով.

Ամեն մարդ իր արժէքը դիտէ։ Ինձ այժմ ոչ ոք չէ հարկաւոր։

Եթէ ես տարեկան 80 դուլդէն ուզէի, այլև մահուդէ շոր և կօշիկներ, նա կը վարձէր ինձ։ Բայց նուէրներ ընդունել նա չէր կամենում։ Այդ ես հասկացայ միայն յետոյ։

Այստեղ միջավայրն էլ, իսկապէս, մի աւսակ անիծուած է։ Երկու կողմից բարձրանում են սև զառիվայր սարեր, նմանուելով ածուխով լի հսկայական, շուռ տուած կողովների. կիրճերը նեղ ու դաժան։ Ինձ ասացին, որ ամենից վեր, վերջին խրճիթներում, միշտ վարձուորների պակասութիւն է զգացուում, որովհետև եկողներից ոչ ոք չէ կարողանում երկար մնալ։

Երեկ երեկոյեան ես եկայ բարձր սարերի վրայ զանուող հովիտը։ Այնտեղ, ուղղահայեաց ժայռի մօտ ծգուած է գիւղը։ Տները մասամբ անտաշ քարից, մասամբ փայտից, թափթփուած են անկանոն ու ցիրուցան. երկու-երեք մեծ գաւիթներ, նորանից յետոյ փայտ կտրելու գործարան և ածխագործի խրճիթը։ Մի փոքր հեռու, զառիվայրի վրայ, կանգնած է եկեղեցին սրածայր գմբէթով. եկեղեցու կողքին քահանայի տնակը. ներքև, առուակի մօտ, ուսումնարանը։ Ի հարկէ, կայ և երկու հիւրատուն, որոնցից մէկում ես իջևանեցի։ Այդ տեղը կոչւում է Հօյղենդօրֆ և շրջակայքի կենդրոնն է կազմում։ Իմ ներկայութեամբ հիւրանոց եկաւ անտառի մի թաւամազ արջ և խօսակցութեան ժամանակ ասաց, որ Վենա քաղաքը տասն անգամ

մեծ է Հոյզենդորֆից, որի համար տանտիկինը նորան մեծախօս անուանեց։

Այս բոպէիս այստեղ է պոստատարը, ճանապարհ է ընկնում։ Սա մի երեք ոտանի մանրավաճառ է, որոնցից մէկը փայտից է, իսկ երկուսը ոտնացաւով վարակուած. Նա տանում է փոստը Կայլինգ։ Երեք ոտանի մարդը կտանի նաև ձեր թափառաշրջիկ դիւղական վարձուորի այս նամակը։

—

Երրորդ կիրակի

Դոկտոր Շտէյնին

«Կոնտինենտալ փոստի» հրատարակչին. վերջապէս գտայ վարձուորի պաշտօն։

Խնդրեմ լրագիրն ուղարկէք լինծ Ալմգայ Հոյզենդորֆի մօտ։ Շնորհակալութիւն վերջին համարի մէջ եղած ծաղրի համար։

Մի տարուց յետոյ ծաղրելու ցանկութիւնը կանցնի ձեզ համար։ Առայժմ աւելին գրելու տրամադրուած չեմ։

Հ. Տ.

ՊՐՕՖԵՍՍՕՐ Ա. ԶԻՄՐՈՒԿԻՆ Մ.-ՈՒՄ.

Ալմգայի. 17 յունուար 1897

Սիրելի և վաղեմի բարեկամ.

Նամակդ երկու շաբաթ որոնում էր քո Հանսին և դիտե՞ս որտեղ գտաւ։ Սարերում, ծիւնածածկ մի խրճթում, մեծ ճանապարհից մի ժամ հեռու։ Նա, որին ուղղուած էր նամակդ, ապրում է այնտեղ ինչպէս վարձուոր մի տարով վարձուած։ Կատակ չէ, հաւատացնում եմ քեզ։ Դեհ, լսիր։

Շնորհակալ եմ քեզանից բարեկամութեանդ համար, որին հաւատարիմ մնացիր աշակերտական նստարանից։ Հասարակ օրերին աշխատանքը կլինի իմ դաժան ընկերը, բայց լինծ սարսափեցնում է կիրակնօրեայ հանգստութիւնը, երբ շուրջս ոչ ոք չի լինի, բացի իմ համարնակիչներից և սառը ծմեռից ու լռակեաց սարերից։ Այդպիսի ժամերին, թոյլ տուր ապաստարան դանել քեզ մօտ, գրչով խօսակցել քեզ հետ, հայհոյել, ծիծաղել,

գուցէ և... Ոչ, ես լաց չեմ լինի, այդ ես հաստատ որոշել եմ։ Ինչ որ պատահի ինձ հետ, հոգով չեմ ընկճուի։ Դիւրին չի լինի ինձ բացատրել քեզ պատճառը, թէ ինչից դրդուած դիմեցի այդ քայլի—այդքան անմիտ, անօրինակ քայլի։ Եթէ դուիմ այս վարմունքի մէջ գտնես քաջութեան դէթ մի նշոյլ, գրիր ինձ այդ մասին. խիստ անհրաժեշտ է, որ մէկը քաջալերէ և օգնէ ինձ։

Այս ամենը ահա թէ ինչպէս պատահեց ինձ։ Ըստ սովորութեան, մի անգամ աշնան «Կոնտինենտալ փոստի» գլխաւոր շտաբը հաւաքուեց փոքրիկ ճաշարանը և երեք թէ չորս գաւաթ գինի խմելուց յետոյ լեզուիս կապանքները բացուեցան ու սկսեցի խիստ խօսել մի ինչ որ կարգադրութեան մասին և հաւատացնել, թէ միայն գիւղում կարելիէ դեռ էլի մարդիկ գտնել։ Ես սկսեցի աղաղակել, թէ գիւղացի վարձուորը աւելի բարձր է քան սեղանաւորն ու լրագրողը. այստեղ մեր հրատարակիչ գօկտոր Շտէյնը, քաղցր ժպտաց և հեգահամբոյր ժպիտով ասաց. «չէ՞ որ ոչինչ չէ խանգարում պարոն Տրաուտենդորֆերին լրագրողի վատաբարոյ գործունէութիւնը գիւղական պատուաւոր աշխատանքի փոխելու»։

Ես կատաղեցի։ «Ի՞նչ կայ որ։ Ոչ ոք չի համարձակուի ասել թէ լեզուս աւելի ուժեղ է 'քան ձեռներս»։ Դարձեալ մի շիշ գինի բերին։ Շտտերը, ակներև, վախենում էին ծիծաղել ինձ վրայ, չկամենալով աւելի գրգռել ինձ։ Բայց ես չէի կարող հանգստանալ։ Ինձ առաջարկեցին զրպարի համար մի շաբաթ գիւղական վարձուոր դառնալ։

«Մի՞ շաբաթ, ամբողջ տարի կծառայեմ», ասացի ես։

Պարոն Շտէյնը թմբկահարեց սեղանի վրայ մատներով և յայտարարեց հանդիսաւոր կերպով.

«Եթէ պարոն Տրաուտենդորֆերը ամբողջ 1897 թ. ընթացքում, սկիզբից մինչև վերջը, կծառայի գիւղում դաղափարական մարդկանց մօտ, այն ժամանակ ես իրաւունք կխնդրէի յանձնել նրան 1898 թ. յունուարի մէկին քսան հազար կրօն։ Իսկ եթէ պ. Տրաուտենդորֆերը նոյն իսկ մէկ օրով պակաս ծառայէ. այն ժամանակ նա երկու տարուայ ընթացքում ա-

ռանց ռոճկի թող ծառայէ «Կոնտինենտալ փոստի» խմբագրատանը։

«Վճռուած է և ստորագրած— ծայնում եմ ես»։

«Ուրեմն վաւերացնենք նոտարի մօտ»։

«Պէտք չէ, այստեղ երեք վկայ կայ։ Աղնիւ խօսք եմ տալիս»։

Դու ստրստփում ես։ Ես ինքս ստրստփեցի մինչև առաւօտ։ Բայց աղնիւ խօսքը պէտք էր կատարել։

Ասում են, որ իմ մէջ մի քանի կաթիլ ռամկական արիւն կայ։ Ուրեմն փորձենք վերածնուել։ Գուցէ կլսաջողի ինձ ուղղել այս մարդկային հոգին, որ արդէն սկսում է վիչանալ. բաւական լաւ էլ նուէր է սպասում ինձ, իսկ այնուհետև երկար տարիներ անհոգ կապրեմ։

Այսպիսով գործը լուրջ կերպարանք ստացաւ և ներկայ թուի սկզբին ճանապարհ ընկայ։ Բայց և տանջուեցի։ Երկու շաբաթից աւելի թափառում էի առանց հացի. մի փոքր էլ և ստիպուած կլինէի ողորմութիւն խնդրել կամ գողութիւն անել։

Լեռնային Հոյզենպորֆ գիւղում ստիպուած էի մի քանի օր մնալ, անտանելի եղանակի պատճառով և երևի այստեղ էլ կրնայ քո թեթևամիտ ընկերը։ Մի անգամ հիւրատանը թուղթ էի խաղում մի երիտասարդ ծաղկատար մարդու հետ, որ նման էր անտառապահի օգնականի։ Ինձ միշտ դուր են գալի ծաղկատար դէմքեր, նրանք վկայում են մոհուան հետ ունեցած մենամարտութեան յաջող վախճանի մասին։ Միայն նրա աչքերը յիշեցնում են քաղաքը։ Ամեն անգամ, երբ տարում էի, նա մխիթարում էր ինձ, դուշակելով յաջողութիւն սիրոյ մէջ։ Ե՞ս և սէր։ Տէր Աստուած. որտեղ են այդ ժամանակները։ Դժուարութեամբ յաջողուեց ինձ վճարել նրան տանուլ առաջս մի քանի կրէյցերը, որից յետոյ նա ինձ հրաւիրեց իր մօտ մի գաւաթ սուրճի։ Այս ամենը պատմում եմ քեզ, որովհետև նա ոչ թէ անտառապահի օգնական էր, այլ ուսուցիչ, և դա էր որ ուղարկեց ինձ իմ նոր պաշտօնի։

Ուսուցիչը ամուրի է։ Ես բարկացնում էի նրան, ասելով

որ իսկական գիւղական ուսուցիչը պէտք է կին և կէս գիւժին երեխաներ ունենայ.

—Ա՛յ իմ ընտանիքը—ասաց նա, մատնացոյց անելով իր գրքերը, զետեղուած ապակէ պահարանում։ Այնտեղ կայ ին և Վալտեր Սկոտտ, և Լեսսինգ, և Շիլլեր, և Զօլա, և Կելլեր և Շպիհագէն։

Ի՞նչպէս կարող է այդպիսի գանձի տէրը թղթախաղութեամբ պարապել։

Այո՛, ես խղճում էի նրան։ Գրքերով չէք կարող բաւականութիւն պատճառել ճանապարհորդին.

—Ես ճանապարհորդ չեմ, ինձ պէտք է գիւղացի համարել։

—Ահա՜ թէ ինչ։

Սուրճից յետոյ, զրոյցի ժամանակ ուսուցիչը պատահմամբ շուռ տուեց սրճամանը և հեղուկը թափուեց սփռոցի վրայ շաղանակագոյն օծածև գծով։

—Ա՜յ երբ է հարկաւոր տանտիկինը—ծաղրում էի նրան—մի ընտանեկան տեսարան տեղի կունենար, իսկ երեկոյեան, ի հարկէ, բոլորը կը վերջանար սքանչելի հաշտութեամբ։

—Մի քանի թափած կաթիլների համար մենք երբէք չենք կռւում։

—Ի՞նչպէս։ Ուրեմն դուք տանտիկին ո՞ւնիք։

Ուսուցիչը ողջ կարմրեց։

Բայց այստեղ, բարեկամս, պէտք է որ կանգ առնեմ։ Լապտերիս ճրագուի մոմը, որ վերցրել էի փարախից, այրուեց, և նամակիցս յետոյ ես ուրախ և երջանիկ էի զգում ինձ մինչև միւս կիրակի։

ՔՈ ՀԱՆՍ

Զորրորդը այն կիրակիներից, որոնց անհամբեր սպասում եմ։

Իսկ այժմ, պրոֆեսսոր բարեկամս, վերջացնում իմ անցեալ կիրակուայ հանրա-պատմական փնստաթուղթը, որպէսզի գիտենաս, թէ ուր եմ, և ինչպէս պատահեց, որ այստեղ ընկայ։

Չը ցանկանալով մտնել ուսուցչի գաղտնիքների մէջ, հարց-

րի նորան, թէ արդեօք այստեղ սարերում ոչ ոք վարձուոր չէ՞ կամենում։

— Այն էլ ինչպէս.—բացականչեց նա.—ամենքը որ ընդունակ են աշխատելու, հեռանում են այստեղից, դուցէ և անհրաժեշտութիւնից դրդուած։ Ոչ ոք չէ ցանկանում ծառայել փոքր վարձով. բոլոր վարձուորները այնպիսի պահանջներ ունին, որոնց մեր լեռնական գիւղացիները բաւարարութիւն տալ չեն կարող։ Ուղղակի փորձանք է։

— Ես կարող էի էժան վարձուոր ցոյց տալ։

— Էժա՞ն։ Այն ժամանակ նորան չեն տայ աւելի վարձատրութիւն։

— Բարի ցանկութիւններ շատ ունի։ Նա առողջ է և ուժեղ. եթէ միայն սկզբում փոքր ինչ զիջող լինեն դէպի նա։

— Եթէ այդպէս է, այժմէն իսկ կարող եմ տեղ գտնել նորա համար։ Միայն թէ շատ վեր սարերի վրայ, վերջին խրճիթներից մէկում, Ադամ գիւղացու մօտ։ Գիւղացին ինքը հիւանդ է, անդրանիկ որդին զինուոր է գնացած, երկրորդի ձեռքը որսորդը գնդակով ծակել է և չի կարողանում աշխատել։ Կրտսերը դեռ ուսումնարան է յաճախում։ Մի աղջիկ էլ ունեն... Լաւ մարդիկ են, բայց այժմ շատ ծանր վիճակի մէջ։

Միւս առաւօտ, չնայելով բուք էր, մի քանի երեխայք եկան ուսումնարան, ամենքն էլ փաթաթուած տաք շորերի մէջ։ Եկաւ և Ադամի փոքր որդի Ֆրանցելը։ Ուսուցիչը հարցրեց թէ ճանապարհը ինչպէս է։

— Ես տախտակով գլորուեցի—եղաւ կարճ պատասխանը։

— Երբ տուն կերթաս, ես քեզ կուղեկցեմ—ասացի նորան։

Ուսուցիչը զարմանքով նայեց վրաս և ես սոսկալուած էի զգալ, որ ուզում եմ ծառայութեան մտնել գիւղացու մօտ։

Ուսուցիչը չէր սպասում այդ բանին և սկսեց յետ համոզել ինձ. նրա կարծիքով, ես անպէտք էի այդ գործի համար, որովհետև անզօր կլինէի տանել ինձ սպասող բոլոր ծախորդութիւնները—աղքատութիւնը, քամին, վատ սնունդը, կոշտ անկողինը և ծանր աշխատանքը։ Բացի դորանից այսպիսի եղանակին տղան կդիշերէ Հոյզենդորֆում.

Սակայն այս բոլորն ինձ չվրդովեցին։ Ես կապեցի իրերս և գնացի ոչ թէ ներքև, այլ վերև, դեպակի ուղղութեամբ։ Այնպիսի բուք էր, որ չէին երևում ոչ ճանապարհը, ոչ տները և ոչ սարերը. շուրջը տիրում էր սպիտակ գիշեր, քամին շուացնում էր, ծիւնի փաթիլները ծակծկում էին դէմքս։

Ինձ հարկաւոր էր, ինչպէս ասել էին, երեք ջրաղացների մօտով անցնել և յետոյ բարձրանալ սարն ի վեր, ձախ կողմից։ Սկզբում ձախ կողմը ես ոչ մի սար չնկատեցի, և գնացի շաւղով, որտեղ երևում էին մարդկային ոտների հետքեր ու այդ շաւղով գնում էի ծառերի և թփերի միջև, որոնցից երբեմն երբեմն թափւում էին վրաս ծիւնի հատ շերտեր։

Եւ դժուարութեամբ մտցրելով լուռ միայնութեան մէջ, մառախուղի և ծիւնի միջով, մտածում էի. «ինչպէս ամայի է։ Ինչպէս միայնակ է լինում երբեմն մարդս երկրագնդի երեսին»։

Յանկարծ, ծիւնի փոշու մէջ, առաջս մի մարդ նկատեցի։ Նա նստած էր ծիւնի վրայ, կուենու տակ, ամբողջովին կռացած իմ կապոցից աւելի ծանր, ալիւրի երկու ջուալի ծանրութեան տակ։ Նա հեւում էր, ձեռքի վերի մասով մաքրելով ճակատի քրտինքը և շարունակ հեւում էր ու հեւում։ Դա մի ծերունի էր։

Ես մօտեցայ նրան և առաջարկեցի փոխել բեռներս։

Նա հոգոց հանեց։

—Աստուած վարձատրէ քեզ։ Ամեն ոք իր բեռը պէտք է տանի։

—Բայց դուք հազիւ էք շունչ քաշում։

—Ճիշտ է հիշա. շնչարգելութիւն ունիմ։

Ես վերցրի նրա ջուալները և ծերունին առաջ գնաց։ Նա անընդհատ կանգ էր առնում և ծանր շնչում։

Իսկ ինձ հետ, սիրելի բարեկամս, այդ ժամանակ ինչ որ զարմանալի բան էր կատարւում։ Տեսնելով թէ ինչպէս առաջիս գնում է իմ օգնութեամբ թեթևացած ծերունին, որի համար ես ջրաղացպանի աւանակի դեր էի կատարում, յանկարծ ես հասկացայ. ահա նա, իսկականը։ Բոլորը ինչ որ տնց էի կացրել և կատարել մինչև այժմ, ամենը ոչինչ էր։ Այն, ինչ որ

այժմ եմ անում—նա է կեանքիս մէջ կատարած առաջին իսկական գործը. և յանկարծ այնպէս երջանիկ և ուրախ զգացի ինձ, կարծես թէ մի տեսակ խնդութեան կրակ վառեցին անծիս մէջ։ Ինչ որ երգում էր իմ մէջ։ Օգնիր ծանրաբեռնուածներին և աշխատաւորներին տանելու իրանց լուծը...

Ո՛հ, բարեկամս։ Ինչպէս ամեն ինչ չնչին է թւում այդպիսի բոպէի առաջ։ Բայց ինքս ինձ գովելու կարիք չկայ։

Այժմ ծանր է կարդով պատմել։ Այնպէս տարօրինակ է թւում ինձ, որ նստած եմ հիւղի մէջ փարախի կողքին, եռոտանի կլոր նստարանի վրայ և որդերից ոչնչացրած սնդուկի վրայ գրում եմ քեզ, հնուտոր քաղաքը։ Նոյն գրչով, դեռ մի քանի շաբաթ առաջ, ինքնավստահ և ճարտասան լեզուով խօսում էի ժողովրդական անտեսութեան մասին։ Բայց չես հաւատայ, թէ ինչպէս յիմար է քաղաքացին, որը խելօք դատողութիւններ է անում գիւղական պայմանների մասին։

Այստեղ ուղղակի մարդու սիրան է մղկտում, այսքան աղքատութիւն տեսնելով։ Հոգսերի և տանջանքների վեհութեան առաջ, ամեն անմիտ բառ սառչում է շրթունքների վրայ։ Ես անզօր եմ արտայայտել այս ամենը «կօնտինենտալ փոստի» պարոն կառավարիչներին։ Իմ և նոցա մէջ անդունդ բացուեց այն օրից, երբ մտայ այս նահապետական տունը։ Միմիայն քեզ եմ ուզում հաղորդել ամենը, ինչ որ կանցնի իմ գլխով այս ծանր, մութ տարուայ ընթացքում։ Ես վճռեցի դիմանալ մինչև վերջ, բայց դու օգնիր ինձ։ Երեկ երեկոյեան, պարկած լինելով փայտէ տաշտի մէջ, յարդէ բարձի վրայ, ծածկուած լինելով գառան հոտած բրդով առաստաղից վրաս կաթող ջրի տակ, ես ընկճուեցի հոգով։ Բայց երբ այսօր առաւօտ բարձրացաւ արեւը մերկ, հարթ կոճղերի վրայից և լուսաւորեց նրանց ծիրանեայ դոյնով բաց կապտագոյն երկնքի և ներքևում թանձրացած արճճա-մոխրագոյն ամպերի միջև, ես ուղղակի ցնծացի։ Տանտէրս զարմանքով նայեց վրաս—նա չէր սպասում, որ դեռ կան ամղկալի կերպով ուրախացող վարձուորներ. այժմ մարդիկ գերագասում են հայհոյել։ Պարզ ասած, և ինչո՞ւ չը հայհոյել, երբ այդ թեթևացնում է մարդուն։

Տեսնո՞ւմ ես, արդէն սկսել եմ պաշտպանել զեղչկական արատները։ Եթէ ես էլ ժամանակով նմանուեմ բարեմիտ գիւղացու, ով գիտէ գուցէ կարելի լինի ինձ ի ցոյց դնել իբրև հազուագիւտ բան։

Տանտէրս չէր էլ մտածում, թէ ինչ հրէշ է բնակուել նրա յարկի տակ։ Այդ ընտանիքի մասին—հետևեալ անգամ։ Իսկ առայժմ մի բան եմ խնդրում, բարեկամ, չրթողնես ինձ։

ՔՈ ՀԱՆՍ

Հինգերորդ կիրակի

Շնորհակալ եմ, բարեկամ, համակրական նամակիդ և ինձ յիմար չանուանելուդ համար. իսկ Մնացեալը—ոչինչ։ Կարծում եմ որ ոյժ կունենամ տանել այդ աշխատանքը։

Արդէն պատմել եմ քեզ, թէ ինչպէս երկու շաբաթ առաջ մի ծերունու օգնեցի ալիւրի ջուալները տուն տանել։ Սա նոյնինքն Ադամն էր, որի մասին ասել էր ուսուցիչը։ Նրա տունը գտնուում է բարձր սարերի վրայ։ Երբ մտանք ներս, ծերունին դիմեց կնոջ այս խօսքերով. «Ահա, եթէ սա ուզենար, կարող էր փախչել ալիւրիս հետ միասին, ես չէի կարող հասնել նրա ետևից. շնչարգելութիւնս դարձեալ սկսուել է»։

—Օտարներից աւելի շուտ կարելի է օգնութիւն սպասել քան սիրելի-դրացիներից—պատասխանեց կինը։

Նա վերցրեց կրակով լի կասկարան, չորացած խոտ ցանեց վրան և մօտեցրեց ամուսնու դէմքին, որը նստած էր գահաւորակի վրայ. ծերունին մի քանի բոպէ ներս շնչեց ծուխը, յետոյ խորը շունչ քաշեց և ասաց. «փառք Աստծու, այժմ անցաւ»։

Երևաց որ նա շնչում էր կիւսախոտի *) ծուխը։ Ինձ խնդրեցին հանուել, կօշիկները թափ տալ և հանգստանալ։ Շուտով ծանօթացրին և տան գործերի հետ։ Մէկ որդին Լայբախ է, զինուոր է գնացել։

Միւսը պարկած է հարևան սենեակում և հառաչում.

—Նրան հրացանով զարկեցին—ասաց կինը։

*) Hexenkraut.

—Զինուորին զարկեցի՞ն։

—Ոչ, միւսին։ Աշխարհիս երեսին չար գործեր շատ են կատարուում։

—Էհ, մի փնթփնթայ պառաւ—ասաց գիւղացին— ինչ որ կայ, այն է լաւը։ Կարող էր և աւելի վատ բան պատահել։ Նա կարող էր և բանտում նստած լինէր, մինչդեռ այժմ տանն է պառկած։ Սորա համար որ ջուալները բերեց, կաթ եփիր, իսկ ես կերթամ տաւարի մօտ։

—Մե՞ծ տնտեսութիւն ունիք—հարցնում եմ ես։

—Պարծենալու բան չկայ, իսկ գործ շատ կայ։

—Ձեզ հարկաւոր է ծառայող ունենալ։

—Իսկ ո՞րտեղից վերցնել։

—Բայց չէ՞ որ միշտ կարելի է մէկին գտնել։

—Այնպիսին չկայ, որին կարողանանք վճարել։ Չէ՞ որ ներկայումս վարձուորները ուղղակի հարստահարում են տիրոջ, —նկատեց ծերունին։

—Ոչնչից դոհ չեն լինում—ասաց տանտիկինը։—Այդպիսի մէկն ունէինք անցեալ տարի։ Ոչ մի խօսք չէր լինում նրան ասել, և ամեն ինչ վատ էր, կերակուրն էլ միայն խոզերի ուտելու բան։ Մինչև այժմ ոչ օք բացի նրանից իմ պատրաստած կերակուրը չէ պարսաւել։ Երբևիցէ կիրակնի նա...

—Մի տաքանայ, կնիկ,—հանդստացնում էր նրան ծերունին. նրան էլ պէտք է խղճալ—ողորմելին զեստնախնձորի ապուրն անդամ մարսել չի կարող։

Այստեղ ես հանդէս եկայ իմ առաջարկութեամբ։

—Լսեցէք, բարի մարդիկ, ես շատ բան եմ փորձել կեանքումս, և աւելի ծանր բաներ եմ տեսել, և թէպէտ ինքս գիւղացի չեմ ծնուել, այնուամենայնիւ գեղջկական աշխատանքը ինձ վնաս չի տայ։ Ամեն բանի կարելի է սովորել։ Վճարեցէք, ինչքան կարող էք։ Ամառն էլ կմնամ ձեզ մօտ։ Ճշմարիտ, եթէ կամենում էք, ես կծառայեմ ձեզ։

Այդ ասելիս, ամենևին մոռացել էի տուածս աղնիւ խօսքը և միմիայն մի բան էի ցանկանում—օգնել այս խեղճերին։ Ի՜նչպիսի վեհանձնութիւն։ Իսկ ծերուկները նստած լուռ նայում էին իրար։ Վերջապէս Ադամն ասաց.

—Զղիտեմ էլ, թէ ինչ ասեմ։ Եթէ սա չար մարդ լինէր, կվախչէր ջուալիս հետ... սկսուեց ծեւական դատ. բազմաթիւ հարցեր առաջարկեցին, տեղեկացան ի միջի այլոց դաւանանքիս մասին և վերջապէս վճռեցին, որ այս օտար մարդը ուղարկուած է իրանց սուրբ Նօսբուրգից, որին նրանք ամեն երեկոյ աղօթում են։

—Թող այդպէս լինի,—ասաց Ադամը։ — Բայց մենք քեզ ամբողջ տարով չենք կապի մեզ հետ։ Այսօր կարող է քեզ լաւ երեւալ այս տաք խրճիթը, իսկ վաղը կհանդստանաս և կուզենաս հեռանալ այստեղից։ Իսկ եթէ մնաս, կստանաս քառասուն դուլդէն և շոր։ Շատ չէ այս։

Այժմ կնկարագրեմ դաւիթը։ Խրճիթը կանգնած է սարի գագաթին, նրա առաջ տարածուում են դաշտեր և մարգագետին, որոնք իջնում են ներքև դէպի առուակը։ Տան մօտ—մերկ ծառեր, տան ետեւը, աւելի բարձր—փշատերեւների նօսր անտառ։ Կողքից թփերի ծառատունը, որ տարածուում է մինչև կիրճը, իսկ աւելի հեռու երկրորդ վարծու տրուող տնակը. այս բոլէիս նա դատարկ է։ Դռները ցածր են, և մանելիս ստիպուած ես ակամայ ամենքին դլուխ խոնարհեցնել։ Պատուհաններից էլ կարելի է նայել միայն կռանալով։ Մեծ սենեակը ծառայում է խոհանոցի, ճաշատան և ընդհանուր սենեակի տեղ. այստեղ են մնում և հաւերն իրենց վանդակով, վառարանի մօտի խոռոչի մէջ։ Բացի այս սենեակից կան և մի քանի փոքրիկ սենեակներ քնելու և ուտելեղէնները պահելու համար։ Արտաքին պատի մօտ շինուած են մի քանի փեթակներ։ Գոմը և ամբարանոցը ընդարձակ են. երևում է որ ժամանակով այստեղ ընդարձակ տնտեսութիւն է եղել։ Ինձ յատկացրին փարախի մօտի նկուղը, ուր առաջ բնակուելիս է եղել իրանց անդրանիկ որդին։ Ծերունին հետևեալ օրը ցոյց տուեց իր դանձերը—խոտը, դարմանը, հատիկը, վարսակը, վուշը, կանեփը և մի տեսակ հպարտութեամբ կանդ առաւ կոյտի առաջ։

Դեռ պարզ չեմ հասկանում թէ ինչով են զանազանուում իրարից դարին և հաճարը, վուշը և կանեփը։ Չեմ կարողանում հասկանալ, թէ ինչպէս կարելի է զանազանել երկու սև գառ-

նուկները, կամ երկու միատեսակ ներկած հորթերն իրարից։ Իմ բնակիցները առաջին հայեացքով չոկում են նրանց. ինչպէս երևում է փորձուած աչքի համար ամեն մի կենդանի իր զիմագծերն ունի։

Ամենից առաջ պէտք էր կերակրել եզներին, հորթերին և ոչխարներին։ Բայց չի կարելի նրանց կերակրել այնպէս ինչպէս վայրի դաղաններին։ Օրուայ ընթացքում տալիս են նրանց որոշ քանակութեամբ խոտ, շաղգամ, չորացած տերևներ, աղ և այլն։ Դրանց վերաբերեալ ոչ խոհարարական գրքեր և ոչ դեղատոմսեր կան, այնպէս որ նորեկի համար սկզբում շատ ծանր է լինում։

Բայց այդ, որքան կարող եմ դատել, իսկի աշխատանք էլ չի համարւում։

Լրագրներում գիւղատնտեսութեան մասին անմիտ բաներ գրելը այնքան էլ վնաս չի բերում. բայց եթէ գեղջուկը անմտութիւն գործէ՝ նրա խոտը կփտի, ցորենը կը բորբոսնի, կովը փարախում ոտը կը վիրաւորէ։ Գիւղացի լինելը աւելի դժուար է։

Դարձեալ մի քանի խօսք այստեղ անցկացրած առաջին օրուայ մասին։ Երբ պառաւը կրակը չապացրեց, մենք նստեցինք օջսոդի շուրջը նստարանների վրայ. եթէ կանդնէինք՝ ծուխը, որ դանդաղ դուրս էր գնում պատի միջի արանքից, կայրէր մեր աչքերը։ Հայրը խոզի ճրագով արորում էր անճոռնի կօշիկները, մայրը կասկարայի վրայ խորովում էր գետնախնձորը, իսկ ես անհմուտ ձեռքով մանրում էի սև հացը գիշերուայ ապուրի համար։

—Ի՞նչ է անունդ.—հարցրեց մայրը, տեսնելով իմ անշնորքութիւնը։

—Հանս է անունս։

—Հանզէլ, ա՛յ ինչ ասեմ քեզ։ Շատ խոշոր ես կոտրտում։ Զգիտես ինչպէս պէտք է անել։

Ցանկարծ հարևան սենեակից ով որ կանչեց մորը։ Բաց դռնից նկատեցի, որ այնտեղ ամեն ինչ դասաւորած է, կարծես մատուռի նման։ Սեղանը ծածկուած է սպիտակ սփռոցով, նրա վրայ դրած է կանթեղի տեղ ծառայող բաժակը։ Սեղանի մօտ

բարձր անկողին և նրա վրայ մի պատանի։ Նրա աչ, կտորների մէջ փաթրթած, ձեռքը ընկած էր երկնագոյն վերմակի վրայ։ Դէմքը կլոր, քնքոյշ, սպիտակ, կարծես իտալական քանդակի մարմարիոնէ արձան լինի. մեծ, մոյգ աչքեր, վերևի շրթունքի վրայ հաղիւ երևացող աղուամազ։ Շրթունքների միջից փայլում էին սպիտակ ատամները, ձախ ձեռքը գզգզում էր մոյգ, խիտ խճճուած մազերը։ Մի խօսքով կատարեալ գեղեցիկ։

Նա էր մօրը կանչողը։

— Ո՞րտեղ է Բարբելը, հարցրեց նա։

— Ի՞նչ ես ուզում, Բոխերլ։

— Դարձեալ սաստիկ ցաւում է։

— Հանդստացիր, զաւակս, թարմ սև ծիւթ կը դնեմ վերքիդ վրայ և լաւ կը կապեմ։

— Շնորհակալ եմ, մայրիկ։ Բայց աւելի լաւ է թող Բարբէլը անի այդ։ Նա այնպէս ցաւ չէ պատճառում...

— Եռևի սենեակում բամբակ է գզզում։

Ես մտայ և նայեցի վերքը։ Գնդակը դեռ չէր դուրս եկել և վերքը բորբոքուել էր, բայց մայրն ասում էր որ ծիւթը դուրս կքաշի գնդակը։

Մտաւ աղջիկը։ Բարձրահասակ, նրբակազմ— զարմանալի է, որ էլի պատահում են այդպիսի դէմքեր։ Ձեռքին բռնած ունէր բամբակի թելիկը, որ ճշտութեամբ տեղաւորեց ախոռի վրայ։ Գլխին հին փափուկ թաղիքէ գլխարկ ունէր, որը արագ շարժուածքով կախեց մեխից։

— Այդ գլխարկով պտակուեցինք մօրդ հետ, Բարբել, ասաց հայրը։ Այն ժամանակ փետուրէ գեղեցիկ փունջ ունէր, իսկ այժմ միայն կտորներ են կախած նրանից։ Բայց թարմ դէմքը գեղեցկացնում է և հին գլխարկը, կատակեց նա, ակնյայտնի հպարտանալով աղջկանով։ Ես ևս ուշադրութեամբ նայեցի նրան։

Ասաուած իմ։ Ա՜յ աղջիկ։

ՀԱՆՍ

(կշար.) թարգմ. ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑ

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՊՕԷԶԻԱՅԻ ՄԻ ՔԱՆԻ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Իւրիյ Վեսելովսկու [1])

3.

Ժամանակակից հայկական բանաստեղծութեան մի քանի ներկայացուցիչները, անկախ՝ «մարդկանց սրտերը այրող» իրանց ոգևորիչ խօսքերով, բանաստեղծին ընդհանուր զովելուց, առանձին ոտանաւորով գառնում են որոշ գրողներին, որոնք շատ թէ քիչ մօտենում են նրանց գծած գաղափարին, փառաբանում են այն բանաստեղծներին և վիպասաններին, որոնք ձգտում են հասարակութեան բարեկամը լինել և բարերար կերպով ազդել նրա վրայ։ Եթէ Լեւենցը նուիրում է իդէական տեսակէտից շատ հետաքրքիր «Ամբոխը» բանաստեղծութիւնը Բաֆֆու յիշատակին, բայց Ծատուրեանն էլ 1887-ին, Ս. Շահ-Ազիզեանի յօբելեանը տօնախմբելու ժամանակ, առանձին ոտանաւորով փառաբանում է «Լեւոնի Վշտի» հեղինակին, որի մէջ խոնարհւում է նրա տաղանդի առաջ։ Այստեղ մենք պատահում ենք ի միջի այլոց հետևեալ տողերին.

Բայց ո՞չ... ո՞վ ազգիս քաղցրախօս երգիչ,
Դու մի պարզ էակ ծնար այս աշխարհ.
Դու ծնար պօյէտ—սիրոյ քարոզիչ.
Դու ծնար ազգիդ անկեղծ սիրահար։
Եւ հնչիր քընարդ ազատ, համարձակ,
Նա ոգևորեց մեր սիրան ու հոգին։

Նոյն Ծատուրեանը, Ռ. Պատկանեանի մահից յետոյ, նրա երգերը անուանում է «անմոռանալի», նախադուշակում է նրանց ամէնուրէք լայն տարածուելը, ուր ապրում են հայեր. նրանք ժողովրդի ցաւի արձագանքն են, որի համար չեն կորցնիլ իրանց նշանակութիւնը նրա մահից յետոյ, որը դարձել է նրանցով իւր

[1]) Լումայ 1909 № 1.

հայրենիքին լցուած զգացմամբ և հաւատով դէպի ապագան։

Նման արտայայտութեամբ փառաբանում է Պատկանեանին և Յովհաննիսեանը, արտայայտելով ցանկութիւն, որ «Արաքսի արտասուքի» հեղինակի

Եւ կենդանի այն վառ քարոզ
Անշահ սիրոյ, սուրբ գործի,

տարածուի ամէնուրէք, որպէս ջրառատ առուակ,— ներշնչի բոլորին սուրբ հաւատ, եռանդ, ամրացնի և քաջալերի հոգով թոյլերին։ Վերջապէս Լ. Մանուէլեանը ունի Պատկանեանին նուիրած մի ոտանաւոր, որ յիշեցնում է ինչպէս բանաստեղծը թափառել է հին Արաքսի ափերով, լսել է նրա աղմուկը, աշխատել է գուշակել նրա մէջ ծածկուած մաքերի և տանջանքների աշխատանքը,— և ապա դրանից մասն հանել ժողովրդին։ Բոլոր նման իրերը հետաքրքիր են այն տեսակէտից, որ նրանք վկայում են ժամանակակից հայ բանաստեղծների ցանկութիւնը—գտնել ոչ հեռու անցեալում օրինակներ՝ արժանի նմանութեան, ընդգծել իրանց համախոհութիւնը այն գրողների հետ, որոնք եղել են իրանց ոչ անմիջական նախորդները և շատ թէ քիչ իրականացրել են իրանց պօէտ—մարտիկի և ներշնչողի գաղափարը։

Շահ-Աղիզեանի և Պատկանեանի ստեղծագործութիւնից սկսած, հայկական պօէզիայի մէջ շատ տարածուած եղանակ է դառնում՝ աշխատանքի ընդհանուր գործի մօտիկների օգտին, իւր ժողովրդին նուիրուելու, ընդհանուր ուսկասութիւնների դէմ մղած կռուի և էգօիստական սիրոյ դգացման, շրջապատում կատարուածի վրայ աչքերը փակելու ցանկութեան, միայն իւր զուարճութեան և բարօրութեան մասին մտածելու հակադրութիւնը... Եթէ Պատկանեանի «Օտար օրիորդ և հայ պատանի» ոտանաւորում իդէալիստ և մարտիկ երիտասարդը չէ ուզում լսել սիրող օրիորդի քնքոյշ-գրաւիչ խօսքերին, որ կոչում է նրան նուիրուել միայն սիրոյ, մոռանալ իւր ծրագիրները և երազները,—Շահ-Աղիզեանն էլ ունի «ինձ մի սիրիր» բնորոշ ոտանաւորը, որ պարունակում է ի միջի այլոց հետևեալ տները.

Ինձ մի սիրիր, ինձ մի սիրիր.
Ես շատ և շատ փոխուել եմ։

Ա՛ռ թաշկինակդ—աչքերդ սրբիր.
Ես քեզ սիրել կարող չեմ։
Խաւար եմ ես, որպէս գիշեր,
Իմ չորս կողմին փոթորիկ։
Զունչիմ քեզ սէր, չունչիմ քեզ սէր.
Ես սիրում եմ հայրենիք։

Բոլորովին նոյն կերպով, այն երգում, որ «Լեռնի Վշտի» հերոսը յօրինում է ի պատիւ սիրած աղջկայ, հեռանալով Մոսկուայից, մենք գտնում ենք խնդիր առ այն աղջիկը—չթափել նրա կրծքի վրայ արցունքներ, որովհետև «Ո՛չ սէր իմ մէջ մրշտաժաղիկ կընորոգեն քաղցրաղին», նրան կարողութիւն տալ մի որև է բան անելու ժողովրդի համար.

Մնաս բարեաւ, մաքուր հրեշտակ,
Թող քո սիրտը չմորմոքէ.
Թէև մեռնենք այլ աստղի հետ,—
Բայց մահը մեզ կը զուգէ։

Այդ միտքը այն ժամանակուանից սկսած հայկական պոէզիայի մէջ մշակւում է ամէն ձևով։ Յովհաննիսեանը ունի մի ոտանաւոր, որ համարեա՝ նոյնպէս է սկսւում, ինչպէս Շահ-Աղիզեանինը.

Ինձ մի սիրիր անբախտ օրիս
Այդ սէրն ինձ չէ խնդութիւն.

բայց դա համեմատաբար անդոյն է։ Յովհաննիսեանը ունի մի և նոյն դասի աւելի բովանդակալից և տիպիքական ոտանաւորներ։ Ես սիրեցի բայց չեմ կամենում, ասում է նա մի դէպքում,

Տալ սիրտս, հոգիակ, քեզ բընաւ դերել—
Մի անկիւն նրա ամէկին խորքում
Այլ սիրոյ համար ես կամիմ պահել։

Բանաստեղծը յիշում է դժբախտ մարդկանց մասին, որոնք գողալով սպասում են իրանց կորստեան, որոնք սաիպուած են տանջուել այն ահռելի և զանազան թշուառութիւնների մէջ, որ գոյութիւն ունեն աշխարհում։

Եւ դոցա համար ես սէր եմ պահում,
Այդ ճակատագրի խորթ որդոց համար,
Որոնց առաջին գու

չէ բանում
Մխիթարութեան քարասիրտ աշխարհ...
Տուր ինձ, սիրելիս, և քո սէրն անբիծ
Այս հառաչանքի հովիտը տանեմ—
Գուցէ արցունքը ցաւած աչքերից,
Մաշուած ճակատից թախիծը խլեմ։

Մատուրեանը, որ տարիներից ի վեր անցել է սուբեքտիվ լիրիքական պօէզիայից, որ լցուած է անձնական եղանակներով և սիրոյ ու տանջանքի փառաբանութեամբ իդէական կամ տենդենցիոզ ստեղծագործութեան, այդ անցնելը նախագուշակում է մի համառօտ, բայց շատ արտայայտիչ և բնորոշ ոտանաւորի մէջ, որ մենք աւելորդ չենք համարում բերել այստեղ։

Հերիք է որքան բախտը խաբուսիկ
Զքնաղ վարդերով սփռեց իմ ուղին.
Որքան ջերմ սիրոյ երազներ դողտրիկ
Անյոյս յուզեցին իմ մատաղ հոգին։
Նոցա ծաղկալից, անհոգ վայելքին
Ահա տալիս եմ իմ վերջին բարև,
Էլ նոր ողջոյնով փշալից կեանքին
Իմ երգը ու սիրտը բերում իմ պարգև։

«Այո, երջանիկ ենք մենք, իմ անդին» այսպէս է սկսւում Լեռենցի յաջողուած բանաստեղծութիւններից մէկը։ Առաջին տան մէջ բանաստեղծը խօսում է, թէ ինչպէս «զգում եմ հանգստի սփոփիչ մեղմութիւն». «սիրոյ մեղմանինջ հովանու տակին»։ Նա, ինչպէս երևում է, հաւատում է, որ նրա հոգին վերջապէս գտել է հանգիստ և մոռացութիւն, սիրած կնոջ փայփայանքների և հաղորդակցութեան ողջեցութեան տակ։

Հոգիս օրօրւում շլքեղ ամպային
Ալիքների վրայ, նուրբ մեղմ մրմնջում
Սէր, բախտ ու անուրջ և կամաց նիրհում։

Բայց երկրորդ տան մէջ այն լաւատես տրամադրութիւնը, որ ժամանակաւորապէս տիրել էր բանաստեղծին, փոխւում է սուր անհերդաշնակութեան, երբ նա յիշում է, որ շուրջը, առաջուայ նման, իշխում են ստութիւնը, չարը, արատը, տանջանքը, հետևաբար մտածել անձնական բախտաւորութեան մասին, ինքն իրա մէջ ներփակուել-արժանի չէ մտածող և քննող մարդուն։

Այո, սրտակից, երջանիկ ենք մենք...
Երջանիկ... Փուչ ձայն... Արդեօք խաբւում չենք...
Եւ բախտում քո պարզ արցունք չեն ցամքիլ
Իսկ ես... թախիծ ու տանջանք են եղել
Իմ կեանքիս բաժին... երջանիկ... իսկ շուրջ,
Նայիր,—մարդկանց մէջ վատ է, գարշ ու փուչ...
Դրանք մեզ եղբայր են... ոչ, ոչ, հարկաւոր
Սրգոյ ժամանակ-չկայ բաղդ առձնական։

Ընթերցանութեան ժամանակ չէք յիշում արդեօք Նադսոնի խօսքերը «Ցիշատակարանից» ոտանաւորի մէջ—որ արտայայտում է նոյն միտքը համարեա մի և նոյն ձևով.

Но знай, что я твердо созналъ, что покуда
Такъ душно покровы ночной темноты,
Такъ много на свѣтѣ бездольнаго люда,
О личномъ блаженствѣ постыдны мечты.

Այսպիսով հայկական պօէզիայի պարագլուխների,—Պատկանեանի և Շահ-Ազիզեանի իդէալների արծագանքը, որոնք սիրուն հակադրում են մօտիկին ծառայելը, հասարակութեան օգտին գործելը, նոյնանում են ռուս պօէտների գործերի հետ, որոնց ընդհանրապէս շատ բանով են պարտական, այնպիսի գրողներ, որպիսիք են Ծատուրեանը, Յովհաննիսեանցը, Լեռնցը: Ի դէպ է յիշել, որ Ծատուրեանի «պօէտին» ոտանաւորը, որից երկու տուն բերուած է վերևում և սկսւում է այսպիսի խօսքերով,

«Պօէտ, դու հպարտ, սէգ արծուի նման,
Բարձրից մի նայիլ տըգէտ ամբոխին»:

իրանից ներկայացնում է այն եղանակի մանրամասն մշակութիւնը, որ դծուած է Նադսօնի «Ամբոխի մէջ» մերմիմահ ոտանաւորում «Մի տաիլ ամբոխին. թող երբեմն նա լինի դատարկ, նանիր, անհոգի և կոյր». և քիչ յետոյ «Դու դէպի նա անարդար ես. նրա տանջանաց ժամերին չես դնացել նրա մօտ տանջուելու»: «Նադսօնական վշտի շրջանը, ասում է Լէօն, արծագանք է տուել հայ բանաստեղծութեան մէջ, ծաղկել, մինչև անդամ անրմբռնելի մեծացման ձև է ստացել»:

4.

Նադսօնն ունի մի ոտանաւոր, որ սկսւում է այս խօսքերով. «Քրիստոս. ո՞ւր ես Քրիստոս, որ փայլում ես ոնմահ ճշմարտութեան, ազատութեան և սիրոյ ճառագայթներով», և արտայայտում է պօէտի վիշտը, որը խոստովանում է, որ «տաճարը դարձեալ անարդուած է սեղանաւորներով», որ սիրոյ և մարդասիրութեան վեհ խօսքերը կրկնուում են անարժան մարդիկ և փարիսեցիներ, որոնք կեանքը դնում է մարդկութեան յայտնուած

բարձր գաղափարի հակառակ։ Անպատեհ իրականութեան և աւետարանական գաղափարի նման հակադրութիւնը մենք շատ յաճախ ենք գտնում ժամանակակից հայ բանաստեղծների մօտ։ Յովհաննէս Թումանեանը գրում է «Քրիստոս անապատում» ոտանաւորը, ուր Քրիստոս ներկայացրած է արեգակի մանելու ժամանակ նստած մարդկանցից հեռու, անապատում, որ արդէն սկսում է ծածկուել երեկոյեան ծխով, Քրիստոսի հայեացքը տխուր է, նա մտածում է մարդկանց անկատարելութեան մասին, թէ ինչպէս յամառութեամբ նրանք մեղք են գործում, ինչպէս կոյր և կոպիտ են, աւերում են և չարութիւն անում։

«Ես տաճար մտայ» այսպէս սկսում Ծատուրեանի բանաստեղծութիւններից մէկը.

Ես տաճար մտայ... «սիրեցէք միմեանց»
Լսում էր բեմից քարոզ փրկչաւանդ,
Եւ ստուար շարքեր բարեպաշտ մարդկանց
Աղօթում էին այնտեղ ջերմեռանդ։
«Սիրեցէք միմեանց»... Օ, վսե՜մ ուսմունք,
Որ միշտ կրկնւում ես միայն տաճարում,
Եւ միայն այնտեղ անչար զգացմունք,
Գուցէ, զարթեցնում մարդկանց սրտերում...
Շատ եմ փափագած, որ լսեմ ես քեզ
Եւ կեանքում, հեռու տաճարի բեմից,
Բայց իզո՜ւր փափագ... դու հալածուած ես
Եւ մարդկանց սրտից և կեանքի շեմից...

«Զատիկ» ընդհանուր վերնագիրը կրող մի շարք ոտանաւորների մէջ նոյն բանաստեղծը սկիզբը նկարագրում է զատիկ գիշերը աղօթողների հանդիսաւոր, կենտրոնացած, բարի տրամադրութիւնը, երբ բոլորը լաւանում են, մոռանում են առօրեայ ստորութեան և էսասիրութեան մասին, բան երևոյթին լցուում են եղբայրական սիրոյ զգացմունքով. բայց հեղինակին չի կարող հանգստացնել և մխիթարել նման պատկերը։ Նա իմանում է, որ սրտերի այդ մեղմութիւնը սլացող և դիպուածական է, որ այդ բոլոր մարդիկ անդառնալի կերպով չեն բաժանուել իրանց ցած ու կոպիտ բնազդներից.

Նայում եմ ես լուռ... եւ հազա՛ր մտքեր,
Ուրախ և տխուր, պայծառ ու մթին,
Որպէս անհանգիստ ծովի ալիքներ,
Ինձ պաշարում են այդ վսեմ ժամին...
Ես մտածում եմ—դիտ քանի՞ արիւն,

Քանի՜ արտասուք այս բիրտ աշխարհում
Պէտք է ծովանան, մինչ սիրոյ գարուն
Յաւերժ կը լողայ մարդկային կեանքում...
Ես մտածում եմ դեռ քանի՜, քանի՜
Փրկչաւանդ սիրով բորբոքուած հոգիք
Պէտք է զոհ գնան լոյս-գաղափարի
Մինչ կը պատրաստեն և՛ կեանքում զատիկ...

«Մեր դարը» խայտող, յոռետեսական բանաստեղծութեան մէջ Մատուրեանը դարձեալ տալիս է էգոիզմի բնոյթագրութիւնը, ներկայ հասարակութեան կոպտութիւնը և երեսպաշտութիւնը, որ մոռացել է Քրիստոսի՝ թոյլերին, զրկուածներին ճնշուածներին և հալածուածներին համակրող, ուսմունքի մասին։ Մի և նոյն հեղինակի «Զատկական խորհրդակցութիւններ», որ համարեա՛ նոյնն է, ինչ «Զատիկ»-ը սկսւում և վերջանում է համարեա՛ Նազարեանի խօսքերով։

Ա՜խ, ո՞ւր ես Քրիստոս, փրկիչ մարդկութեան,
Որ դարեր առաջ դու աշխարհ գալով
Փշրեցիր տիրող խաւար շղթան,
Մեզ լուսոյ պայծառ տաճար կանգնելով։
Ո՞ւր ես դու այժմ... Տես ինչ անթափանց,
Սպանիչ գիշեր է, նորից պաշարել
Մեր մեղսոտ երկրին, սրտերը մարդկանց,
Եւ մի նոր ոյժով չարը կեանք առել...
Ուր աչք ես դարձնում—սահմռկեցութիւն,
Աղճի առևտուր, կեղծիք ու առատ,
Ուր վսեմ մի գործ—այնտեղ քսութիւն,
Յուդայի համբոյր, երեսուն արծաթ...
Նման չէ էլ մարդն, ո՛վ Տէր, Քո պայծառ,
Հեզիկ պատկերն... Նա նորից գազան՝
Արիւն է խմում, պղծում քո տաճար...
Ա՜խ, ո՞ւր ես Քրիստոս, ո՞ւր Քո խարազան...

«Մարդիկ վաղուց մոռացել են քո կտակը» կարդում ենք Յովհաննիսեանի աղօթք ոտանաւորի մէջ, որ մաքով նոյնանում է հէնց նոր քնածների հետ։

Բայց մարդիկ վաղուց մոռացած քո խրատ,
Դահիճ են դարձել եղբարցն հարազատ,
Ուրացած անմահ խօսքդ մարդասէր
Հզօրն աշխարհին դարձել է այդտէր։

Մի այլ անգամ բանաստեղծը վշտանում է նրա համար, որ Աւետարանին շատերը վերաբերում են բացարձակ անտարբերութեամբ, համարեա՛ ոչ մի ժամանակ նրան չեն կարդում, իրանց համար պարտաւորեցուցիչ չեն համարում նրա մէջ պարունակող ուսմունք։

Պատանեկան գրադարան. № 13, 14, 15. հրատ. Բազուայ հ. Կուլտ. Միութեան Բագու. 1908.

Այս գրքոյկները այն սերիայից են, որ հրատարակում է Բաքուի Հայոց Կուլտուրական Միութիւնը, և որը պարունակում է իւր մէջ եւրոպական յայտնի հեղինակների հանրածանօթ վէպերը։

Ցոյց տալու համար, թէ ինչ նշանակութիւն ունին այսպիսի պատանեկան վէպերը, բաւական է ասել, որ թէ դպրոցի և թէ ինքնակրթութեամբ պարապող պատանիները, սխոլաստիկ և դասական դասագրքերով չէ որ սովորում են որևէ լեզու, ըմբռնում այդ լեզուի գեղեցկութիւնն ու հարստութիւնը, այլ այն զեղարուեստական գրուածներն են, որ կարդում են պատանիները և ընդհանուր զարգացման հետ միասին ըմբռնում լեզուի գեղեցկութիւնն ու ձեռք բերում այդ լեզուի հարստութիւնը։

Ի նկատի առնելով այս հանգամանքը, իւրաքանչիւր եւրոպական կամ ռուս թարգմանիչ և կամ հրատարակիչ, ձեռնարկելով մի որոշ գործի, ամեն ջանք գործ է դնում գործածել ամենից առաջ դիւրըմբռնելի և սահուն լեզու, նրանք չեն աշխատում տառացի թարգմանել, այլ փոխադրում են ոգին ու միտքը ամփոփելով այդ՝ գեղեցիկ խօսքի մէջ։

Երբ թերթում ենք Պատանեկան գրադարանի պրակները, մենք ապշած մնում ենք կանգնած այն հարցի առաջ, թէ ինչ նպատակի է ուզում ծառայել Բաքուի «աշխարհ դղրդացնող» հայոց կուլտուրական միութիւնը և «Պատանեկան գրադարան» սերիայի խմբագիրը։

Եթէ «Պատանեկան գրադարանը», նպատակ ունի հայ պատանիներին հայ լեզուով ընթերցանութեան գրքեր մատակարարել, անհրաժեշտ է, որ նախ և առաջ գրքի լեզուն համապատասխան լինի առաջադրած նպատակին։ Իսկ եթէ հրատարակչական սեկցիա կոչուելու ցանկութիւնն է միայն դեր խաղում այստեղ, ինչ միտք կայ աղճատել լեզուն, երբ Ռուսիայի սահմանների մէջ ապրող ամեն մի հայ պատանի կարող է նոյն նիւթերի հիանալի թարգմանութիւններ կարդալ ռուս լեզուով ռուսական ամսագիրների ձրի յաւելուածների շարքում։

Այս գրքոյկների մէջ գործածած լեզուի մասին գաղափար տալու համար մենք բաւական ենք համարում մի երկու պարբերութիւն միայն առաջ բերել։

—Մթթէ ճիշտ որ ես ձեզ հասկացայ, Հասան, ճիշտ է որ . .
№ 14 եր. 40.

Եւ նա իմացաւ, որ թէ ուզում դիպաւ իմ հարուածը. դա միայն...
№ 15 եր. 78.

Աղատեցէք զաւակիս, լսուեց կրկին որդեկորոյս մօր ձայնը որ ժամանակ իր մօր կանգնած տեղից մի քանի քայլ հեռու ջրի մէջ երևեցաւ և փոքրիկ խապշիկի գլուխը։ № 15 եր. 62.

«Սպիտակ Միրուքը զարմացաւ այդպէս վաղ Զիլէյկայի մօտ տեսնելով ջանաց աննկատելիօրէն հեռանալ, նրա ձեռքին կար մի բոյս, որ նա նոյնպէս ջանաց թագցնել»։

Գտնում ենք որ մի քանի տպագրական թերթ պարունակող գրքոյկից հանած այս՝ լեզուի մարգարիտները բաւական պիտի լինին բարձր արժանիքը ցոյց տալու, բայց եթէ մենք աւելացնենք, որ չգտանք գէթ մի երես (համբերութիւն ունեցանք ամբողջ գրքոյկը կարդալու), ուր նման պարբերութիւններ չլինէին, այն ժամանակ պարզ կլինի, թէ որպիսի թարգմանութիւններ են տրպւում այս սերիայում։ Գրքոյկները լի են անթիւ տպագրական սխալներով։

Աղատեցէք պատանիներին նման թարգմանութիւններից և խղճուկ հայ գրական լեզուն այդ գոհարներից։

—

Աթ. Խնկոյեան. Գիւղացին եւ Արջը. հրատ. «Հասկեր» ամսագրի 1909.

Մեր մանկական գրականութիւնը այս օրերս հարստացաւ մի նոր գրքոյկով. «Գիւղացին և արջը» ժողովրդական հէքիաթն է այդ, որ հեղինակը ոտանաւորի է վերածել ժողովրդական իսկ բարբառով։ «Հասկեր» ամսագիրը, որ իւր գոյութեան ընթացքում աշխատել է առատ նիւթ մատակարարել հայ մանուկներին, այժմ հրատարակել է այդ ժողովրդական հէքիաթը գեղեցիկ իսկ արաքինով, որ կարող է լաւ նուէր լինել փոքրիկ մանուկների համար։

Վերջերս հայ մանկական գրականութեան մէջ լոյս տեսան Յով. Թումանեանի ոտանաւորներից ոմանք պատկերազարդ գրքոյկներով, բայց նոր հրատարակուած այս գրքոյկի արժանիքը կայանում է նորա գեղեցիկ և բովանդակալից նկարներում, որ յաջող կերպով արտայայտում են նիւթի բովանդակութիւնը։ Զգացմունքները այստեղ գտել են իրենց ճիշտ արտայայտութիւնը գործող անձերի դրութեան մէջ։ Ցանկալի էր, որ մանուկների մօտ մարդիկ աշխատեն մեծ չափով տարածել այդ գեղեցիկ գրքոյկը ընթերցող մանուկների մէջ և այդպիսով նպաստեն նրանց մէջ զարգացնելու գեղասիրութեան ճաշակը մատակարարելով նաև գեղեցիկ ընթերցանութեան նիւթ։

—

Ե. Թոփչեան. Երիտասարդ Թիւրքիան եւ հայերը։ Մասն առաջին. Թիֆլիս 1909.

Այժմ, երբ Թիւրքիայի քաղաքական կեանքը մտել է նոր շրջան և դրուած է վերածնութեան սկիզբը, երբ բազմաթիւ մըտքեր հետևում են այդ նոր կեանքի, իսկ շատերը այդ կեանքի բարգաւաճման մասնակից են, աւելի քան հետաքրքիր է մեր առաջ դրուած մի նոր աշխատութիւն, որը գալիս է ցոյց տալու թէ ինչ էր Թիւրքիան անցեալում և թէ ինչպէս հասաւ նա իր այժմեան վիճակին։ Այս աշխատութիւնը գլխաւորապէս ի նկատի ունի հայ ազգի անցեալը և ներկան Թիւրքիայի սահմաններում և ամեն մի հետաքրքրուող կարող է գտնել այստեղ բազմազան նիւթ մեր ազգի անցեալից։

Այս պրակը նուիրուած է Թիւրքիայի ծագման ու նրա ներքին քաղաքական կեանքի, որ հասնում է մինչև Միդհադեան սահմանադրութիւնը և բովանդակում է իւր մէջ նաև Թիւրքահայոց Սահմանադրութիւնը։

Գրքոյկի երկրորդ մասը նուիրուած կլինի այն խնդրին, թէ Միդհադեան սահմանադրութեան ոչնչանալուց և երիտասարդ Թիւրքերին բոլորովին քայքայելուց յետոյ, նոր ծնունդ առած հայկական և երիտասարդ Թիւրքերի հոսանքները ինչ ուղիով են հասել ներկայ օրերին։

Մենք այդ աշխատութեան նորից կդիմենք երբ լոյս կտեսնի այդ երկրորդ մասը և ցոյց կտանք թէ որպիսի եղանակով է քննում հեղինակը քաղաքական բարդ հարցերը։

ԱՄՍՈՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. ՊՕԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՆՈՐ ՏԵՂԱՊԱՀԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսից մեզ հաղորդում են, որ սուլթանը իրաւք է հրատարակել, որով Վ.ԵՀ. Իզմիրլեանին արձակում է տաճկաց հպատակութիւնից և այդ մասին արդէն հաղորդուած է ռուս կառավարութեան. այդ հանգամանքից դատելով՝ կարելի է այս օրերս սպասել կաթողիկոսական հաստատութեան լուրին Պ.Բուրգից։

Բայց այն՝ ինչ որ նշանակալից է և հետաքրքրական, այդ՝ Իզմիրլեանի փոխարէն, որ արդէն ըստ օրինաց արձակուած է համարում պատրիարքական պաշտօնից, պատրիարքական նոր տեղապահի ընտրութիւնն է։

Յայտնի է, որ տաճկահայ պատգամաւորները Պոլսից ճանապարհ ընկնելով դէպի Կովկաս՝ Սև ծովի վերայ լողացող շոգենաւի վերայ որոշեցին Իզմիրլեան սրբազանի հետ կաթողիկոսական երկրորդ թեկնածու ընտրել Զմիւռնիայի առաջնորդ Եղիշէ եպս. Դուրեանին և հասնելով Էջմիածին ոչ մի արգելքի առաջ կանգ չառան իրանց այդ որոշումը ի կատար ածելու և ոչ միայն Դուրեան սրբազանին երկրորդ ընտրեցին, այլ և Թիֆլիզի շատ և շատ շրջաններում յայտարարեցին, որ իրանց վերջնական որոշումն է, երկու ընտրեալներից երբ մէկը հաստատուի կաթողիկոս, միւսը անշուշտ պատրիարք լինի Պոլիս, որպէս երկու անզուգական անձեր—«մէկը հոս կաթողիկոս, միւսը հոնպատրիարք»։

Իրաւունք ունէր ուրեմն ազգը սպասել, որ Ամեն. Իզմիրլեանի պատրիարքութիւնից դուրս գալուց յետ՝ Տաճկահայերը առանց դանդաղելու իրանց ամբողջական քուէները պիտի կենդրոնացնէին ս. Դուրեանի անուան վերայ և վերջնիս հռչակէին Կ. Պոլսի պատրիարք։

Բայց ինչ արեց Տաճկահայ ժողովուրդը։

Կ. Պոլսի ազգային ժողովը, Ամեն. Իզմիրլեանի հեռանալուց անմիջապէս յետոյ նիստ գումարելով՝ պատրիարքական տեղապահ է ընտրում Բրուսայի առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոս

Արշարունուն, որ, ի դէպ ասել, խիստ արժանաւոր մի եկեղեցական է, և իրանց բուռն ցոյցերով կաթողիկոսական ամենաարժանաւոր թեկնածու հռչակած Դուրեան սրբազանին զլացան նոյն իսկ քաղաքավարութեան համար առաջարկել հրաժարական ներկայացնել ընտրական ժողովին, այլ որևէ ողորմելի «5 քուէով» սևացրին նորան Համազգային ժողովում, արժանի չհամարելով նոյն իսկ պատրիարքութեան «տեղապահի» պաշտօնի համար։

Շատ տխուր խոհեր է տրամադրում տաճկահայոց այս վարմունքը առհասարակ և այս հանգամանքը մի անգամ ևս ընդգծում է «հոսհոս» բառի նշանակութիւնը, որ այնպէս սազում է մեր տաճկահայ եղբայրներին։

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՁԱՐԱԲԱԽՏ ՃԵՄԱՐԱՆ

Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի պատմութիւնը հայկական կեանքի դժբաղդ իրականութեան ամենահարազատ պատկերն է ներկայացնում։ Կարծէք Էջմիածնի մթնոլորտը ամեն տարի մի դժբաղդ պատահար է ստեղծում հայկական այդ հաստատութեան գլխին, որ երբեմն վերջանում է ուսանողների մի խմբի հեռացուելով, իսկ երբեմն և աւելի յաճախ՝ տեսուչների և միշտ աւելի սրտացաւ տեսուչների արձակուելով։

Դժուար է ցոյց տալ մի որոշ ժամանակաշրջան, երբ խաղաղ և կանոնաւոր կեանքը ճեմարանում չխանգարուէր մի որևէ դաւադրութեամբ, նիւթուած այս կամ այն գործչի դէմ, որ անմբտութիւն էր ունեցել փոքր ինչ աւելի եռանդ ցոյց տալ իւր գործունէութեան մէջ և կամ կամակատար չլինել վանքի մէջ ոյժ ներկայացնող անհատների քմահաճոյքին։

Այս երևոյթը այնքան խիստ պարբերականութիւն է ստացել, որ զարմանալի կլինէր մեզ համար, եթէ ճեմարանի այժմեան կեանքը այլ պատկեր ներկայացնէր մեզ, քան ինչ որ սովոր ենք տեսնել։

Ուստի և մենք ամենևին չզարմացանք, երբ մեզ պատմեցին, որ ներկայումս զարմանալի հալածանք է սկսուել այժմեան տեսուչ Մինաս Բերբերեանի դէմ մինչև այն աստիճան, որ անգամ դիտաւորութիւն կայ կառավարութեան միջոցով խուզարկել և գտնել այն անձին, որ «Հայորդի» ստորագրութեամբ մի բրոշիւրով հերքել է ճեմարանի մասին կատարած քննութեան հետևանքները և ո՛ զիտէ դուցէ և երաղել տպագրող տպարանին էլ դատի ենթարկել...

Ի՞նչքան վատ է, երբ մարդիկ կորցնում են իրանց խոհականութիւնը։

Մեզ հաղորդում են, որ անցեալները վարդապետներից մէկը արտայայտել է մի միտք, իբր թէ «Հայորդի» ստորագրութեամբ բրոշիւրը գրողն ու հրատարակողը օր. Ն. Աղանեանն է, իսկ այժմ էջմիածնում միտք է յղացուել պաշտօնապէս պահանջել Աղանեան տպարանից մատնել բրոշիւրը գրողի անունը։

Աստուած սխալուած է եղել անշուշտ ինկվիզիցիան ստեղծելով Իսպանիայում. նորա տեղը Հայաստանն էր, Արարատեան դաշտը...

Դառնալով ճեմարանին՝ մենք այժմ տեսնում ենք նոյն դրութիւնը կրկնուած աւելի մեծ չափով և թափով ճեմարանի այժմեան տեսուչ Մ. Բերբերեանի շուրջը այն մարդկանց կողմից, որոնք չկարողացան տանել Բերբերեանի բռնած դրական դիրքը էջմիածնում, մոռանալով, որ Մայր Աթոռի Հոգևոր ճեմարանի տէրն և տնօրէնը միմիայն ամենայն Հայոց կաթողիկոսն է և որ և է նոր փոփոխութիւն ճեմարանի կեանքում կարող է ներմուծուել ոչ այլազգ, քան եթէ ամենայն Հայոց կաթողիկոսի ձեռքով։ Եւ այժմ, երբ մենք արդէն կաթողիկոս ունենք և սպասում ենք նորան շուտով տեսնել էջմիածնում, աւելի քան անպատեհ ոտընձգութիւն է նորա իրաւունքները ոտնակոխ անել։

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

«Berliner Tageblat»-ի մէջ մի ընդարձակ թղթակցութիւն է եղել տպուած «Հայաստանի մայրաքաղաքից»՝ Վանից ուղղուած «In der Hauptstadt Armeniens» վերնագրով։ Յօդուածի հեղինակ Էդուարդ Միգինդը

«Յիրաւի ջախջախիչ փաստեր» է բերում հայկական սեպարատիզմի մասին, ասում է «Գործի» Նիցցայի թղթակիցը, մի ահագին մեղադրական, նմանը չը տեսնուած... Դաշնակիստները— ասում է նա—առաջ պիտի խլեն Թիւրքաց Հայաստանը, յետոյ ռուսական ու պարսկական Հայաստանները—և պիտի կազմեն բոլորից՝ անկախ հայկական հանրապետութիւն... Վանը կենդրոնն է սեպարատիստական պրոպագանդի և Վանի դաշնակցական խումբը թւում է պ. Միգինդին կարբոնարիզմի մի սոսկալի աղանդ, Թիւրքակերների ազգայնամոլ ֆանատիկոսների մի հաւաքածու։ Եւ նրա ամենազօր ազդեցութիւնը տարածւում է ամբողջ ժողովրդի, ամբողջ երիտասարդութեան վրայ. նրա առջև դողում են նոյն իսկ օտար միսիոնարութիւնները. նրա հրահանգով հայ ա-

շակերտութիւնը սկսել է բոյկոտի ենթարկել միսիոնարների դըպրոցները, նրանց կրօնական դասաւանդութիւնը»,[1]) ինչպէս լաւ է հին ըէժիմի տակ... երբ Միգինդներն ու Շարմտանները, ագռաւների պէս թափուած հայ ժողովրդի արիւնաքամ մարմնի վրայ, շահագործում էին նրա հոգեվարք գոյութիւնը՝ պրոզելիտիզմի, հաւատափոխութեան զաղրելի քարոզներով... O, die gute alte Zeit «Հին, բարի ժամանակները» անցան գնացին և միսիոնարական ու կապիտալիստական կեղեքիչ անարեսութիւնը դառնութեամբ ողբում է այժմ իր կորսուած հմայքը։

Միգինդի կարծիքով հայ հոգևորականն ու վաճառականը, ամբողջ ժողովուրդը, ամեն մի հայ յաւիտենօրէն մոլեգնած ու յեղափոխական է ի ծնէ, ի բնէ, անգամ էջմիածնի միաբանութիւնը արբած է «անկախ Հայաստանի» երազներով։

Եթէ Միգինդն ու Berliner Tageblat-ը մոլորուած չեն չարամիտների թելադրութիւններից, այն ժամանակ նոցա մէջ հանգել է իրանց նախահաւ հայակեր Բիսմարկի թշուառ հոգին։

ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսի հայ թերթերը հրատարակեցին Իզմիրլեան սըրբազանի պատրիարքական առաջին կոնդակը, ուղղած Թիւրքիոյ Հայ ժողովրդին, հոգևորականներին, աշխարհականներին և բոլոր դասակարգերին։ Կոնդակը գրուած է պահպանողական ոգով և յորդոր է կարդում Հայ հոգևորականութեանը՝ անարատ և անթերի պահպանել Հայաստանեաց եկեղեցու բոլոր աւանդութիւնները, կարգերը և կանոնները։

Ատրպատականի Նախավկայի վանքի շուրջը գտնուող հայերը Պարսկական անիշխանական դրութիւնից սարսափած դիմել են էջմիածնի ս. Տեղապահին, որպէսզի վանքի անօթները և արժէքաւոր իրերը փոխադրուեն Ռուսաստան, աւարառութեան չենթարկուելու համար, ինչպէս եղան Թիւրքիոյ մէջ վերջին ջարդի և թալանի միջոցին։ Ս. Տեղապալը Սինոդի միջոցով պատուիրել է, որ յիշեալ վանքի Մասունքներն ու թանգարժէք իրերը առժամապէս Մայր-Աթոռ փոխադրուին։

«Գործ»-ում կարդում ենք, որ Տաճիկ կառավարութեան կարգադրութեամբ վերջին ժամանակներս գրաւում են Սսի մոտերքի հայ եկեղեցիների ու վանքերի կալուածները։ Այս առի-

---

[1]) Երանի թէ այդպէս լինէր։ ԽՄԲ.

թով հայ ժողովուրդը սաստիկ յուզուած է և Սսում հայոց կաթողիկոսի թոյլտուութեամբ միտինգ է կայացել գրաւման դէմ բողոքող։ Հեռագիրներ են ուղարկուած պատրիարքարան և պարլամենտ։ Սսի կաթողիկոսը մտադիր է հրաժարական տալ, եթէ ժողովրդի բողոքը նպատակին չհասնի։

Դոկտոր Տաղաւարեանը, որի մասին «Հայրենիք»-ը յայտնել էր իւր կարծիքը, բայց որի պատճառով նոյն թերթի թէ խմբագիրը և թէ հրատարակիչը ենթարկուեցան «Մշակ»-ի մէջ Շահէն կոչուած թղթակցի ամեն տեսակ լուտանքների և սպառնալիքների, իր բնաւորութեան խիստ յարմար մի գործողութիւն է կատարել. մի առուդէնցիայի ժամանակ՝ համբուրել է սուլթանի ձեռքը, հարիւր հազարաւոր անմեղ հայերի արիւնով ներկուած մի ձեռք. և այժմ միայն պօլսահայը ըմբռնելով «Հայրենիք»-ի մերկացումների ճշմարտութիւնը, հեռացրել է այդ ստորաքարշ պասքվիլանտին ազգային գործունէութեան ասպարէզից։

Մուշի երեսփոխան Էլիաս էֆ. ձեռնհաս պաշտօնեաներին ծրագիր ժատուցանելով, առաջարկել է ոռոգել Մշոյ ընդարձակ դաշտը, պատճառաբանելով թէ, եթէ ներկայ վիճակը շարունակուի, շրջակայ բնակիչները ստիպուած կը լինին գաղթել ուրիշ նահանգներ։ (Ար.)

Նպաստի գումարները ինչի կը գործածուին.—Բաբերդից գրած են ազգային պատրիարքարանին որ տեղւոյն քաղաքային ժողովը Նպաստից Ցանձնաժողովի կողմից ղրկած դրամները փոխանակ ամբողջութեամբ հացակարօտ և խեղճ գիւղացիներին բաշխելու, յատկացրել է իրրև պատգամաւոր Էջմիածին ղրկուած Պարգև վարդապետի ճանապարհածախսին։ Ազգային պատրիարքարանը խիստ նամակով բացատրութիւն է պահանջել թէ Քաղաքային ժողովից և թէ առաջն. տեղապահ Պարգև վարդապետից այս ապօրէն կարգադրութեան համար և յանձնարարել է որ ծախսուած գումարը անմիջապէս ետ դարձուի տեղւոյն աղքատներին։ (Ար.)

Իշխանուհի Ս. Արղութեանը իր կենդանութեան օրով հայոց բարեգործական ընկերութեան կտակել է Սանահնի մօտ գտնուած իր բոլոր հողերը և մի երկյարկանի տուն։

Էջմիածնի Գէորգեան ճեմարանի մանկավարժական խումբը վերջերս ծանր հարուած է կրել, զրկուելով իր ընկերակից Առաքել Մնացականեանից, որը երիտասարդ հասակում կնքեց իր մահկանացուն ամսոյս երեքին կարճատև հիւանդութիւնից յետոյ։ Հանգուցեալը Նուխու գաւառի Վարդաշէն գիւղից էր։ Սովորել էր Էջմիածնայ ճեմարանում, և նոյն դպրոցումն էլ վերջին երկու տարին վերակացուի պաշտօն էր վարում։

Կալկաթայում հրատարակուող «Armenia» թերթը հաղորդում է թէ պ. Ֆրանցը Բաֆֆու Ոսկի աքաղաղը անգլիերէն թարգմանել է և որ մտադիր է շուտով տպագրութեան յանձնել։

Ամերիկայի հրաժարած առաջնորդ Տ. Եղնիկ արքեպիս. Ապահունին, որ այժմ Կ. Պոլիս է գտնուում, հիւանդացել է աջ կողմի կաթուած իջնելով։ Յոյս կայ թէ շուտով կառողջանայ։

Լսուում է թէ մտադրութիւն կայ ջնջել օսմանեան երկիրներից ուրիշ երկիրներ ուղարկուելիք ապրանքներից առնուած հարիւրին մէկ մաքսը և զինուորական սպառազինութեան անունով գանձուած հարիւրին երկու ներքին մաքսը։

Անգլիական մի ընկերութիւն իրաւունք է խնդրել ստորերկրեայ երկաթուղի շինելու համար Կ. Պոլսի մէջ։

Ուղղում ենք տեղական «Մշակ», «Գործ» և «Հովիւ» թերթերի մի սխալ «Հայրենիք»ի դադարման մասին։ «Հայրենիքը» դադարել է Խմբագրութիւնից անկախ պատճառներով և միայն առժամապէս և ոչ պարզապէս դադարել է, ինչպէս հաղորդել էին յիշեալ թերթերը։

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

ԹՈՔԱԽՏԻ ԴԷՄ ՆՈՐ ԴԵՂ

Իտալական մասնագիտական թերթերը հաղորդում են, թէ Պինիօտտին գտել է թոքախտի դէմ մի դեղ, որ առանց վնասելու մարմնակազմին սպանում է Կոխի ձողիկները (թոքախտի բացիլները)։ Անցեալ տարուայ սկզբում այդ դեղով փորձեր են կատարուել ծովախոճկորների վերայ, որոնք միանգամից փառաւոր հետևանքներ են տուել։ Մինչ այդ հիւանդութեամբ բռնուած միւս խոճկորները 40—50 օրից յետ սատակեցին, ներսրսկուած խոճկորները կենդանի մնացին և անդամատելիս՝ գտան, որ թոքախտի բացիլները ոչնչացել էին։ Փորձերն այնպէս որոշ հետևանքներ էին տուել, որ հարկ եղաւ նոյնը մարդկանց վրայ անել։ Հարկաւոր էր ցոյց տալ, որ այդ դեղն անվնաս է և մարդկանց համար։ Ուստի և Պինիօտտին ամենից առաջ այն սրսկեց իր մարմնի մէջ, որ նոյնպէս լաւագոյն հետևանք ունեցաւ։

Հռովմի հիւանդանոցում՝ երիտասարդ քիմիկոսի ասիստէնտներից իմանալով ժողովուրդն սկսեց գունդագունդ դիմել Պինիօտտին և խնդրել, որ նոցա էլ սրսկէ։ Բայց սիրտ չարին փորձեր անել նոցա վերայ, այն ժամանակ թոքախտով հիւանդ երեք գրաշարներ խնդրեցին դր. Բէլլին իրանց վերայ փորձել այդ դեղը։ Դէլլին որոշեց կատարել նոցա խնդիրը։ 2—3 ամսուայ բժշկութիւնից յետոյ գրաշարներն արագ սկսեցին առողջանալ։ Այդ ժամանակ Բէլլին որոշեց փորձերը շարունակել Հռովմի ապաստարաններում, գործարաններում և այլն եղած թոքախտաւոր հիւանդների վերայ, որոնք մեծ մասով թոքախտի ամենածանր տեսակների էին պատկանում, տենդով, գիշերային քրտինքով և խռպոտ ձայնով հիւանդներ, բնակուած վատառողջ բնակարաններում, կիսամերկ և կէս քաղցած դրութեան մէջ։

Չնայելով այս բոլոր խիստ անբարեյաջող պայմաններին

հիւանդներն արդէն առաջին 10—15 սրսկումներից յետոյ սկսեցին անհամեմատ լաւ զգալ իրանց։

Այս դեղի պակասութիւնը նորա մէջն է, որ խիստ մեծ չափով պիտի ընդունել մինչև բոլորովին առողջանալը. առանձին ծանր դիպուածներում ստիպուած էին մօտ 200 անգամ ներարկել միտոկոսեան լուծուածքի 4—7 խոր. սանտ. բայց միւս կողմից նա կատարելապէս անվնաս է, ոչ երիկամներին և ոչ գեղձերին չէ վնասում։ Առաջին սրսկումներից յետոյ մի քանի հիւանդներ ջերմում են, իսկ միւսների տաքութիւնն է բարձրանում, բայց հետագայ սրսկումների ժամանակ այս երևոյթներն էլ չքանում են։

Այս դեղով փորձեր կատարում են Հռովմի Santa spirito հիւանդանոցում պրոֆ. Տաուսսիգի ձեռքով։ (Т. Л.)

ՄԱՀԳՈՅԺ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԱՆԱՆԵԱՆ

Փետրուարի 21-ին վախճանուեցաւ Թիֆլիսի ինտէլիգէնտ հասարակութեան լաւ յայտնի Ալէքսանդր Ստեփանեան Անանեանը 87 տարեկան հասակում։

Հանգուցեալը սերում էր Մոսկուայի յայտնի Յովհաննեանների ընտանիքից, և եղբայրն էր յաւերժայիշատակ Յովհաննէս Յովհաննեանի, Թիֆլիսի Մարիամեան-Յովհաննեան օրիորդաց միջնակարգ դպրոցի հիմնադրի։

Ալէքսանդր Անանեանը Թիֆլիսի վաղեմի հասարակական գործիչներից մէկն էր, որի կեանքի մեծագոյն մասը, կարելի է ասել, անցել է ազգի ծառայութեան մէջ և միշտ ջերմ մասնակցութիւն է ունեցել ազգային գործերին։

Ինքը իւր ուսումը ստացած լինելով Անգլիայում և երկար ժամանակ ապրած Ֆրանսիայում, հմուտ էր այդ երկու լեզուներին և առհասարակ կրթուած մարդ էր եւրոպական իմաստով։ Միւս կողմից՝ ամուսնական կապով կապուած լինելով Կ. Պոլսի նշանաւոր Տատեան ընտանիքի հետ, որի միջոցով մտերմական կապեր ունէր նաև Կ. Պոլսի շատ ինտէլիգէնտ և բարձր դիրք ունեցող ընտանիքների հետ, առաւել նշանակութիւն էր ստանում Ալէքսանդր Ստեփանիչը հասարակական բարձր խաւերում։

Նորա ազգային գործերի մասնակցութիւնից պիտի յիշել, որ նա անբաժան ընկերն էր իւր հանգուցեալ եղբօր Յովհաննիսին թէ Յովհաննեան ուսումնարանի հիմնադրութեան գործում և թէ այդ ուսումնարանը Թիֆլիսում գտնուած մեծագին քարվանսարայով ապահովելում, և ինքը լինելով մշտական պատուաւոր հոգաբարձու այդ ուսումնարանի՝ մինչև գրեթէ իւր կեանքի վերջը մասնակից էր դպրոցի հոգաբարձութեան գործունէութեան նորա բարգաւաճման և յառաջադիմութեան գործում։

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան նախագահի պաշտօն վարելով երկար տարիներ շարունակ, նա նուրիուած էր այդ գործին հոգով ու մարմնով, և այդ ընկերութեան ընդարձակ գործունէութիւնը կարելի է ասել դարձեալ նորան ենք պարտական. պատահել է մեզ տեսնել օրինակ դէպքեր, երբ այս և այն պատանիներ դիմել են նորան իբրև ընկերութեան նախագահի՝ միջոցներ տալ ընկերութիւնից ուսումը շարունակելու, բայց նա այն աստիճան խնայող է եղել ընկերութեան կապիտալները, որ ինքը իր սեպհականութիւնից ապահովել է դիմողների տարեկան թոշակները և չէ ցանկացել ծանրանալ ընկերութեան միջոցների վրայ։

Իբրև ապացոյց, որ Բարեգործական Ընկերութեան նպատակը մօտ է իւր սրտին, Ալէքս. Անանեանը կենդանութեան ժամանակ նուիրեց այդ ընկերութեան երեսուն հազար ռուբլի։

Բացի ուրիշ շատ բարեգործութիւններից, պէտք է յիշել այստեղ և Քութայիսի հայոց դպրոցներին իւրովսանն նիւթապէս և բարոյապէս օժանդակելը։

Հանգուցեալի հասարակական գործունէութիւնից շատ բան կարելի է ասել, որ խրատական և օրինակելի կարող է լինել շատ ազգայիններին համար, սակայն մենք կարծում ենք՝ ապագայի գործ է մանրամասն քննութեան ենթարկել այդ յայտնի գործչի հասարակական կեանքը, որ գուցէ կարելի կլինի անել ապագայում։

Իսկ առ այժմ՝ կարող ենք ասել, որ հանգուցեալը մի վերին աստիճանի բարեպաշտ և հեզահամբոյր բնաւորութեան մարդ էր, չափազանց ընտանեսէր և Նորա այդ յատկութիւնները արտափայլել են նաև իւր որդիների վերայ։

Հանգիստ Նորա աճիւններին։

ԱՇՂ-ՋԻՒԱՆԻ

Ամսոյս 24-ին Թիֆլիսում վախճանուեց ժողովրդական յայտնի երգիչ Աշղ Զիւանին։

Աշուղներ շատ են եղել հայերի մէջ և շատերն էլ մեռել,

բայց հաղիւ թէ մէկը նոցանից այն ժողովրդականութիւնը լինի ունեցած, ինչ որ ունէր հանգուցեալ Ջիւանին։ Դորա պատճառը այն չէր, որ նա շատ մեծ տաղանդի կամ բարձր գիտութեան տէր մարդ էր. ոչ, այլ այն՝ որ սազը ձեռին մի քանի տասնեակ տարի շրջում էր ամեն տեղ և իւր բնական քանքարով շարահիւսելով ժողովրդական երգեր՝ երգում էր նոցա ցաւն ու վիշտը, ուրախութիւնն ու ցնծութիւնը, և ժողովուրդն էլ հէնց այս է սիրում. նա գնում է նոցա ետեւից, ովքեր կարեկից են նորա տրրտմութեան և խնդակից նոցա ուրախութեան։ Աշղ Ջիւանին այդպիսի եղակի մարգկանցիցն էր։ Եւ ժողովուրդը գիտեցաւ գնահատել նորա զգացմունքները ի հարկէ... մահից յետոյ հազարաւոր ամբոխով լցնելով վանքի բակը և ուղեկցելով նորա յուղարկաւորութեան։

Ջիւանին, ծննդեամբ Սերոբ Լեոնեան, Կարնոյ 1829 թուի գաղթականներից սերուած՝ իւր կեանքի մեծագոյն մասն անցրել էր Ալէքսանդրոպոլում, իսկ վերջին տարիներս միայն Թիֆլիսում։ Նա կանոնաւոր ուսում ի հարկէ չէր ստացել, գրագիտութեան մէջ վարժուելով իւր բնական շնորհքով սկսել էր գրել ժողովրդական երգեր, որոնց ժողովածուն մի քանի տարի առաջ սկսեց հրատարակել նորա որդին՝ պ. Գարեգին Լեոնեանը, բայց յաջողեցաւ միայն առաջին պրակը լոյս ընծայել, իսկ մնացեալ, կարծեօք ինն պրակները մնացին մինչև այժմ անտիպ։

Բացի այս երգերից Աշղ Ջիւանին ունի թուրքերէնից բաւական յաջող թարգմանած և մի քանի հրատարակութիւններով տպագրուած «Աշղ Ղարիբի» հէքիաթը, «Քեարիմի և Ասլիի հէքիաթը» և այլ մի քանի գրքոյկներ, որ ժողովուրդը հազարաւոր օրինակներով էր սպառում։

Բնական էր ուրեմն, որ այսպիսի մի համեստ բայց բուն ժողովրդական աշուղի թաղում կատարուէր այնպիսի շքով, որի նմանը քիչ է տեսնուում առհասարակ, թէպէտ և սխալուած չենք լինի ասել, որ նոյն այդ շքով թաղող ժողովուրդը անմխիթար սպանեց նորան. չհաւատացողը թող կարդայ բժ. Բ. Նաւասարդեանի կոչը «Մշակ»-ում, որից յետոյ նոյն իսկ կարծում ենք՝ միայն... երեք բուբլի ուղարկող եղաւ ժողովրդի վիշտն ու թախիծը երգող աշուղին։



ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Նալովսկի. Բարոյախօսութիւն. Ս. ա. ք. Սահակեանց. արտ. «Արարատ»-ից. Վաղարշ. 1908 50 կ.

Ա. Խնկոյեան. Գիւղացին և արջը. ժող. հէքիաթ հրատ. «Հասկեր»ի. Թիֆլիս 1909 25 կ.

Հ. Առաքելեան. Ձեռնարկ տարրական տրամաբանութեան, հոգեբանութեան և բանահիւսութեան. Թիֆլիս 1907—9 50 կ.

Ե. Թոփչեան. Երիտասարդ Թիւրքիան և հայերը, մ. ա, Թիֆլիս 1909 60 կ.

Ազգագրական հանդէս 1908 թ. II գիրք.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Կ. Պօլիս.—Քննասէրին. կտպենք թէ մէկ և թէ միւս տեսակի յօդուածներ։

Նոր-Ջուղա. Ա. Ա. Խմբագրութիւնս անկարող է առայժմ թարգմանութիւնների համար վարձատրութիւն տալ։

Ղարաքլիսա։ Բօֆֆօրին։—Յօդուածը ստացանք և կտպենք։ Ուղարկեցէք Ձեր յիշած նիւթերից։

*Էջմիածին. Մ. Բ.-ին.—*Fiat Justitia, pereat mundus. *սպասում ենք շարունակութեանը։ Այո, Ս.-ի մասին Վ.-ն է գրել։*

Ախալքալաք. Ալոյեանին. կկարդանք և եթէ յարմար է՝ կը-տպենք։

Դոնամիջեան «Մշակի» ձախակողմեան թղթակից Շահէնին.

Où allez—vous, monsieur l'abbé?.

Vous allez vous casser le nez!

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Продолжается подписка до конца 1909 года

На газету

„Тифлисскій Листокъ

ПОДПИСНАЯ ЦѢНА

Съ 1-го февраля до конца года.

Съ доставкой въ Тифлисѣ . . . . . 4 р. 75 к.

Съ пересылкой для иногородныхъ . . . . . 6 р. 50 к.

Подписка принимается: на любой срокъ но только съ 1 числа каждаго мѣсяца, исключительно въ конторѣ изданія, Головинскій проспектъ. № 15.

Բացուած է 1909 թ. բաժանորդագրութիւնը

(ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

ՀԱՍԿԵՐ

մանկական պատկերազարդ ամսագրի

Ամսագիրը լոյս է տեսնում Թիֆլիսում 32—48 երեսանոց մեծադիր գրքոյկներով նախկին ընդարձակ ծրագրով Մշտական աշխատակցութեամբ ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵՆԱՅԻ ԵՒ ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

Ամսագիրը ունի նաև ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, ուր շօշափւում են ընտանեկան կրթութեան վերաբերեալ կարևորագոյն հարցեր։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՀԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍՈՎ

Տարեկան ՀԱՍԿԵՐ, մանկ. բաժին 3 ռ. մանկավարժ. բաժ. 4 ռ.

Կէս տարուանը	*1 ռ. 80 կ.*	*2 ռ. 10 կ.*
Մէկ ամսուանը	*— 30 կ.*	*— 35 կ.*
Պարսկաստանում	*3 ռ. 50 կ.*	*4 ռ. 50 կ.*
Արտասահմանում տարեկան	*ԻՆՐ ֆր.*	*ՏԱՍՆԵՐԿՈՒ ֆ կ.*
Հրատարակութեան սկզբից մինչև 1909 թ. վերջը	*11 ռ.*	*15 ռ.*

Խմբագրատան հասցէն՝ Թիֆլիս, Բեհբութեան փող. 25

(Тифлисъ, Редакція журнала «Аскеръ» Tiflis (Caucase) Rédaction du journ. «Hasker».

Խմբագիր-Հրատարակիչ՝ Կատ. Լիսիցեան

Մամուլի տակն են

ՎԱՐԴԳԷՍ ԱՂԱՆԵԱՆՑԻ

I

ռուս-հայ բառգիրք

ռուսերէն բառերի արմատներով և պատկերազարդ

II

բառարան օտարազգի ասացուածքների

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

ՆԱՄԱԿԱԳԻՐՔ

երկրորդ ճոխացրած տպագրութիւն

Продолжается подписка

на 1909 г.

На большую ежедневную политическую, общественную и литературную ГАЗЕТУ

„Новая Русь"

Издается при ближайшемъ участіи А. А. Суворина и постоянныхъ сотрудниковъ «Руси».

Подписная цѣна

Съ дост. и пер. На годъ 12 р., на 6 м. 7 р., на 1 м. 1 р. 30 к.: Безъ доставки 10 р., на 6 м. 5 р. 50 к., на 1 м. 1 р.: За границу 20 р. на 6 м. 11 р. на 1 м. 2 р.:

Подписка принимается только съ 1 числа каждаго мѣсяца и не долѣе конца года,

При подпискѣ съ 1 января на годъ допускаетея разсрочка: при подптскѣ—5 руб. въ апрѣлѣ—4 р. и въ іюлѣ—3 р. При желаніи подпиисаься въ разсрочку—необходимо обязательно указыватъ каждый разъ на переводѣ о томъ, что это взносъ въ разсрочку, и переводить только упомянутую сумму.

При подпискѣ на срокъ менѣе года разсрочка не допускается.

Подписная цѣна для г.г. студентовъ, сельскихъ учителей, духовенства, сельскихъ фельдшеровъ на годъ—9 руб., а помѣсячно—90 коп., разсрочка же допускается только съ 1 января на годъ: при подпискѣ —4 р., въ апрѣлѣ—3 р. и въ іюлѣ—2 р.

Издатель *Г. М. Михинъ* Редакторъ *И. К. Заіончковскій*

ԼՈՒՄԱՅ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ 14 ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

1909 թուին Լումայ լոյս կտեսնի իւր նախկին դիրքով ամեն ամսի 20-ից յետոյ, բաղկացած 48—80 երեսներից։ Ինչպէս միշտ, հարկաւոր դէպքերում, կտրուեն պատկերներ հասարակական երևոյթների առթիւ։

ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Նիւթերը պիտի գրուած լինին պարզ, մի էջի վրայ և ոչ աւել քան 32 տպ. երես։
2. Արտատպութիւն ոչ մի դէպքում չի տրուում։
3. Նիւթերը չեն վերադարձնուում. յետ ստանալ յանկացողները պիտի ուղարկեն փոստի ծախք։
4. Զտպուող նիւթերի մասին ծանուցում է տրուում ամսագրի մէջ պատասխանների բաժնում։
5. Թարգմանական նիւթեր ընդունուում են շատ կարճ և ընտիր հեղինակների։

ԲԱԺՆԷԳԻՆՆ է տարեկան 6 ռ., կէս տ. 4 ռ.,
Արտասահման „ 8 „ „ 5 „

ԱՊԱՌԻԿ ՈՉ ՈՔԻ ՉԻ ՈՒՂԱՐԿՈՒԻ

Հասցէն Թիֆլիս Պոլիցէյսկայա 7. Tiflis Polizeiskaja, 7.

2000—4000 руб. побочнаго годового дохода для каждаго!!!

Золотая медаль Парижъ 1905 г.

Кто за 300—600 руб. (допускается разсрочка платежа) пріобрѣтаетъ у насъ машину съ ея рецептами указаніями т и. п. для устройства завода по выдѣлкѣ: фруктовыхъ, ягодныхъ, шипучихъ, сельтерскихъ и т. п. искуственныхъ минеральныхъ водъ, лимонадъ-газесъ, разныхъ квасовъ, меду и французскихъ фантастическо-прохладительно-игристыхъ напитковъ и винъ (сидръ, шербетъ, шампанъ и т.п.)

Подробности **безплатно**. Смѣты и богато иллюстрированные прейсъ-куранты высылаетъ только за 15 шт. 7 коп. почтовыхъ марокъ. **Фабрика машинъ ИППО И К° Варшава, Грибная ул. соб. д. № 15.**